ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

ՀԱՎԱՍԱՐ
Եվրոպական միությունը հանուն կանանց իրավազորման Հայաստանում

oxYGen

Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա
Coalition to stop violence against women

ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

© Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա
Երևան, 2024

Հետազոտող՝ Ամալյա Ոսկանյան

Հետազոտությունը պատրաստվել է «Կանանց և աղջիկների համար բռնությունից զերծ կյանքի համապարփակ քաղաքականությանն ուղղված ենթադրամաշնորհային ծրագրի» շրջանակում:
«Կանանց և աղջիկների համար բռնությունից զերծ կյանքի համապարփակ քաղաքականությանն ուղղված ենթադրամաշնորհային ծրագիրն» իրականացվում է Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի կողմից «ՀԱՎԱՍԱՐ - ԵՄ-ն հանուն կանանց իրավազորման Հայաստանում» ծրագրի շրջանակում:

Ծրագիրն իրականացվում է ՕքսԵՋեն հիմնադրամի, «Եվրոպական գործընկերություն հանուն ժողովրդավարության» ՀԿ-ի, «Նիդերլանդների հելսինկյան կոմիտե» ՀԿ-ի, «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ի, «ՎԻՆՆԵԹ Գորիս» զարգացման հիմնադրամի կողմից, «Վիննեթ Շվեդիա» ՀԿ-ի հետ համագործակցությամբ: Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Հետազոտությունից որևէ հատված օգտագործելու և մեջբերելու պարագայում համապատասխան հղում կատարելը պարտադիր է:

Բովանդակություն

Հապավումներ *3*

Նախաբան *4*

Ներածություն *5*

Մեթոդաբանություն *6*

Գլուխ I. Տվյալների հավաքում և հետազոտություններ *8*

Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունը 8

Հարցումներից ստացված վիճակագրական տվյալների համեմատություն 12

ՀՀ վիճակագրական կոմիտե 14

Ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառում 17

Միջազգային և եվրոպական փորձի ուսումնասիրություն 19

Վարչական տվյալների վերլուծություն 23

Գլուխ II. Կոնվենցիայի շրջանակով սահմանված բռնության տեսակների համեմատությունը ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածների հետ *25*

Հոգեբանական բռնություն 25

Հետամտելը 28

Ֆիզիկական բռնությունը 31

Սեռական բռնությունը, այդ թվում՝ բռնաբարությունը 35

Հարկադիր ամուսնությունը 39

Կանանց սեռական օրգանների խեղումը 42

Հղիության արհեստական դադարեցումը կամ ստերիլիզացում կատարելուն հարկադրելը 45

Սեռական ոտնձգություն 47

Առաջարկություններ *49*

Իրավական բնույթի առաջարկություններ 49

Կազմակերպական բնույթի առաջարկություններ 49

Գրականություն *51*

Հավելված 1. EIGE -ի(Գենդերային հավասարության եվրոպական ինստիտուտի) 13 ցուցիչների ցանկը *54*

Հավելված 2. Ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ վարչական տվյալներ *56*

Հապավումներ

ԱՄՀՆ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ
ԵԽՆԿ	Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտե
ԵՄ	Եվրոպական միություն
ԸԲ	«Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» ՀՀ օրենք
ԿԶՆ	Կայուն զարգացման նպատակներ
ԿՆԽՎԿ	ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման կոմիտեն
ԿՄՕԽ	Կանացի սեռական օրգանների խեղում
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՄԱԿ	Միացյալ ազգերի կազմակերպություն
ՄԻԵԴ	Մարդու իրավունքների եվրոպական դատարան
ՄԻԵԿ	Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա
Ոստիկանություն	ՀՀ ՆԳՆ Ոստիկանություն
Պեկինի հռչակագիր և գործողությունների ծրագիր	ՄԱԿ-ի Կանանց կարգավիճակի հանձնաժողովի կողմից 1995 թվականին ընդունված «Հավասարություն, զարգացում, խաղաղություն» նշանաբանով հռչակագիրն և գործողությունների ծրագիրը
Ստամբուլյան կոնվենցիա կամ Կոնվենցիա	«Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրանց դեմ պայքարի մասին» ԵԽ կոնվենցիայի
ՏՀՏ	Տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներ
CEDAW	«Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա
EIGE	Գենդերային հավասարության եվրոպական ինստիտուտ European Institute for Gender Equality
ICCS	International Crime Classification for Statistical Purposes Վիճակագրական նպատակներով հանցագործության միջազգային դասակարգիչ

Նախաբան

«Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրանց դեմ պայքարի մասին» Եվրոպայի Խորհրդի կոնվենցիան (այսուհետ՝ Ստամբուլյան կոնվենցիա կամ Կոնվենցիա), որը Հայաստանի Հանրապետությունը (այսուհետ՝ ՀՀ) ստորագրել է 2018 թ. հունվարի 18-ին, հանդիսանում է կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման ոլորտում ամենահամապարփակ փաստաթուղթը: ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի N 650–Լ որոշմամբ[1] հաստատված հնգամյա միջոցառումների ծրագրի 11-րդ կետով նախատեսվել է «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրանց դեմ պայքարի մասին» ԵԽ կոնվենցիայի վավերացման գործընթացի կազմակերպումը, **սակայն հարկ է նշել, որ Կոնվենցիան առ այսօր չի վավերացվել:**

Սույն հետազոտությունն իրավական հիմնավորմամբ կներկայացվի Կոնվենցիան վավերացնելու դեպքում անհրաժեշտ օրենսդրական կամ կազմակերպական բնույթի փոփոխությունների և գործողությունների հնարավոր շրջանակը: Մասնավորապես, հետազոտությունը կանդրադառնա հետևյալ հարցերին՝ Ստամբուլյան կոնվենցիայով սահմանված բռնության տեսակների համեմատական վերլուծությանը ՀՀ նախկին և գործող քրեական օրենսգրքերի հոդվածների հետ, ինչպես նաև Հայաստանում կանանց նկատմամբ կատարված բռնության և ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ վիճակագրական տվյալների հավաքման և համադրման խնդիրներին ու մարտահրավերներին՝ հիմք ընդունելով միջազգային առավել ընդունելի լավագույն փորձը և առաջարկվող լուծումները:

[1] ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 16 -ի N 650-Լ որոշումը ՀՀ կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին:

Ներածություն

Կանանց նկատմամբ բռնությունը և ընտանեկան բռնությունը, գենդերային հիմքով մարդու իրավունքների ամենալուրջ խախտումներից է: Ընտանեկան բռնությունը լուրջ սոցիալական խնդիր է, որը հաճախ թաքնված է մնում և կարող է հանգեցնել լուրջ հոգեբանական և ֆիզիկական տրավմաների ու ունենա վատ հետևանքներ: **Կանանց նկատմամբ բռնությունը խտրականության դրսևորում է,** որը բխում է կանանց և տղամարդկանց միջև պատմականորեն անհավասար ուժային հարաբերություններից: Այն **գենդերային բռնության ձև է**, որը հիմնականում կիրառվել է կանանց և աղջիկների նկատմամբ տղամարդկանց կողմից և հիմնված է տվյալ հասարակությունում սոցիալապես կառուցված դերերի, վարքագծի և գործողությունների վրա:

ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված է **կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը** և սեռից կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից կախված խտրականության արգելքը[2]: Միևնույն ժամանակ, ՀՀ պետական քաղաքականության հիմնական նպատակներից է կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության ապահովումը[3]:

Թեև ՀՀ քրեական նոր օրենսգրքում[4] տեղ գտած փոփոխությունները և ձևակերպումներն, ընդհանուր առմամբ, համապատասխանեցվել են Հայաստանի կողմից վավերացված միջազգային պայմանագրերով սահմանված կանանց նկատմամբ բռնության տեսակների սահմանումներին, այնուամենայնիվ, կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ վարչական տվյալների հավաքման հետ կապված խնդիրները դեռևս առկա են:

Սույն հետազոտությունը **նպատակ** ունի՝

1. Ստամբուլյան կոնվենցիայի 11-րդ հոդվածի (Տվյալների հավաքում և հետազոտում) համաձայն ուսումնասիրելու կանանց նկատմամբ բռնության բոլոր տեսակների և ընտանեկան բռնության վերաբերյալ վիճակագրության հավաքագրման, ինչպես նաև բնակչության շրջանում իրականացվող հարցումների, հետազոտությունների իրավական կարգավորումները և գործելակերպը:
2. Բաց աղբյուրներից և հարցումներից, մասնավորապես, ՀՀ ՆԳՆ Ոստիկանությունից, ՀՀ քննչական կոմիտեից, ՀՀ դատախազությունից, ՀՀ դատական դեպարտամենտից և ՀՀ վիճակագրական կոմիտեից ստացված տվյալների հիման վրա՝ իրականացելու 2019-2024 թվականներին ընկած ժամանակահատվածում կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության վերաբերյալ վարչական տվյալների ուսումնասիրություն և պարզելու, թե ինչպես են հավաքագրվել ՀՀ օրենսդրությամբ կարգավորվող բռնության տեսակների մասին վարչական տվյալները, որքանով են դրանք եղել համակարգված, ամբողջական և որքանով են այդ տվյալները վերլուծվում և մատչելի ներկայացվում հանրությանը:
3. Ստամբուլյան կոնվենցիայով սահմանված բռնության տեսակների[5] համեմատական վերլուծությունը ՀՀ նախկին և գործող քրեական օրենսգրքերի հոդվածների հետ:

---

[2] ՀՀ Սահմանադրություն, 29-30-րդ հոդվածներ; https://www.concourt.am/normative-legal-bases/constitution-of-ra :

[3] ՀՀ Սահմանադրություն, 86-րդ հոդվածներ, https://www.concourt.am/normative-legal-bases/constitution-of-ra:

[4] ՀՀ քրեական նոր օրեսգիրքն ընդունվել է 2021 թվականի մայիսի 5-ին, ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 1-ին՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=194397:

[5] «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրանց դեմ պայքարի մասին» Եվրոպայի Խորհրդի կոնվենցիան՝ Հոգեբանական բռնությունը (33-րդ հոդված), Հետամտելը,

Հետազոտության **արդյունքները** կարող են նպաստել համապատասխան իրավական ակտերի վերանայմանը, կանանց նկատմամբ բռնության դեպքերի և ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ վարչական տվյալների հավաքման բարելավմանը, ինչպես նաև կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրանց դեմ պայքարի ոլորտում հետագա միջոցառումների պլանավորմանը Կոնվենցիայի վավերացման պարագայում:

Մեթոդաբանություն

Սույն հետազոտությունը բաղկացած է երկու հիմնական գլուխներից: *Առաջին գլուխն* ուսումնասիրում է Կոնվենցիայի 11-րդ հոդվածի համաձայն կանանց նկատմամբ բռնության բոլոր տեսակների և ընտանեկան բռնության վերաբերյալ վիճակագրության հավաքագրման, ինչպես նաև բնակչության շրջանում իրականացվող հարցումների և հետազոտությունների իրավական կարգավորումները և գործելակերպը: Այն անդրադառնում է նաև ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերի հաշվառման հետ կապված իրավակարգավորումներին և գործընթացներին: Ուսումնասիրությունը դիտարկում է, թե որքանով են ՀՀ ՆԳՆ Ոստիկանությունից, ՀՀ քննչական կոմիտեից, ՀՀ դատախազությունից, ՀՀ դատական դեպարտամենտից և ՀՀ վիճակագրական կոմիտեից ստացված վերջին 5 (հինգ) տարվա վարչական տվյալները եղել համակարգված, տարանջատված՝ ըստ բռնության ենթարկված և բռնություն գործադրած անձանց սեռի, նրանց միջև առկա փոխհարաբերությունների, տարիքի, հանցագործության վայրի և մատչելի հանրությանը ներկայացված լինելու: *Երկրորդ գլուխն* ուսումնասիրում է Կոնվենցիայով սահմանված բռնության տեսակների համեմատական վերլուծությունը ՀՀ նախկին և գործող քրեական օրենսգրքերի որոշ հոդվածների հետ:

Նշված նպատակին հասնելու համար հետազոտությունն իրականացվել է **որակական մեթոդով**, մասնավորապես՝ կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման ոլորտը կարգավորող իրավական ակտերի, ինչպես նաև միջազգային և ներպետական իրավական փաստաթղթերի ու միջազգային և եվրոպական փորձի ուսումնասիրության միջոցով: Հետազոտության հիմքում ընկած է նաև **հարցումներից և բաց աղբյուրներից** ստացված վարչական տվյալների համեմատական վերլուծությունը:

Իրավական փաստաթղթերի վերլուծության համար հիմք են հանդիսանում ՀՀ կողմից վավերացված միջազգային և տարածաշրջանային պայմանագրերը, այդ թվում՝ Միավորված ազգերի կազմակերպության (այսուհետ՝ ՄԱԿ)[6] և Եվրոպայի խորհրդի (այսուհետ՝ ԵԽ) կոնվենցիաները[7] և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ)

(34-րդ հոդված), Ֆիզիկական բռնությունը (35-րդ հոդված), Սեռական բռնությունը, այդ թվում՝ բռնաբարությունը (36-րդ հոդված), Հարկադիր ամուսնությունը (37-րդ հոդված), Կանանց սեռական օրգանների խեղումը (38-րդ հոդված), Հղիության արհեստական դադարեցումը կամ ստերիլիզացում կատարելուն հարկադրելը (39-րդ հոդված), Սեռական ոտնձգությունը (40-րդ հոդված)՝ https://rm.coe.int/168046246d:

[6] Հայաստանի Հանրապետությունը ՄԱԿ-ի «Կանանց դեմ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիան վավերացրել է 1993 թվականին, իսկ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը 2006 թվականին:

[7] Հայաստանը Եվրոպայի Խորհրդին է անդամակցել է 2001 թվականին և վավերացրել է ԵԽ մի շարք պայմանագրեր, որոնք արգելում են կանանց և տղամարդկանց միջև խտրականությունը և խթանում են կանանց մասնակցությունը, ինչպիսիք են օրինակ՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (2002 թվականին):

նախադեպերը, որոնք ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մաս են կազմում, ինչպես նաև հանձնարարականները, արձանագրությունները, եզրակացությունները, պարբերական զեկույցները և եզրափակիչ դիտարկումները, ընդհանուր մեկնաբանությունները, «Կայուն զարգացման 2030 օրակարգում» ներառված կայուն զարգացման նպատակները (այսուհետ՝ ԿԶՆ), ՄԱԿ-ի Կանանց դրությանը նվիրված չորրորդ համաշխարհային խորհրդաժողովում ընդունված «Պեկինի հռչակագիրը և գործողությունների ծրագիրը»[8]: Իրավական վերլուծության է ենթարկվել նաև ներպատական օրենսդրությունը, մասնավորապես, ՀՀ քրեական գործող և նախկին օրենսգրքերը, ՀՀ ընտանեկան օրենսգիրքը, ՀՀ աշխատանքային օրենսգիրքը, «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, «Պաշտոնական վիճակագրության մասին» ՀՀ օրենքը, «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը, ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10 -ի N 1381-Ն «Ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման կարգը սահմանելու մասին» որոշումը, ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 23-ի N1225-Ն «Մինչդատական վարույթը բնութագրող ցուցանիշների վիճակագրական հաշվետվությունների միասնական ձևերը և դրանց լրացման ու ներկայացման կարգերը հաստատելու մասին» որոշումը և մի շարք այլ իրավական ակտեր:

Ի լրումն իրավական փաստաթղթերի վերլուծության, **հարցումներ** են ուղարկվել ՀՀ ոստիկանություն, ՀՀ քննչական կոմիտե, ՀՀ դատախազություն, ՀՀ բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ դատական դեպարտամենտ, ՀՀ վիճակագրական կոմիտե և ՀՀ առողջապահության և աշխատանքի տեսչական մարմին՝ 2019-2024 թվականների ընկած ժանանակահատվածում՝ կանանց նկատմամբ կատարված բռնության դեպքերի և ընտանեկան բռության դեպքերի վերաբերյալ վիճակագրական տվյալներ տրամադրելու վերաբերյալ:

Հետազոտության շրջանակում ուսումնասիրվել է նաև վիճակագրական նպատակներով ՄԱԿ-ի հանցագործության միջազգային դասակարգման փորձը, Գենդերային հավասարության եվրոպական ինստիտուտի փորձը, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի անդամ երկրների և Եվրոպական միության համպատասխան փորձը:

Հետազոտության իրավական կարգավորումներին առնչվող եզրակացությունները և վերլուծությունը հիմնված են 2024 թվականի մայիս-սեպտեմբեր ամիսներին գործող իրավական ակտերի և գործելակերպի վրա:

[8]«Պեկինի հռչակագիր և գործողությունների ծրագիր», ՄԱԿ-ի Կանանց դրությանը նվիրված չորրորդ համաշխարհային խորհրդաժողովի և դրա արդյունքում ընդունված ուղենիշային գործողությունների ծրագիր, Պեկին, 1995 թ., հասանելի է հետևյալ հղումով՝
https://www.un.org/womenwatch/daw/beijing/pdf/BDPfA%20E.pdf

Գլուխ I. Տվյալների հավաքում և հետազոտություններ

Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունը

ՀՀ կողմից ստանձնած մի շարք միջազգային պարտավորություններ կարևորում են կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի նպատակով վիճակագրության վարման անհրաժեշտությունը:

Միջազգային մակարդակով, ՄԱԿ-ը գենդերային բռնության վերաբերյալ տվյալների հավաքագրման հիմնական դերակատարն է: CEDAW-ը առաջարկում է մասնակից պետություններին վիճակագրական տվյալներ հավաքել կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերի տարածվածության վերաբերյալ:

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն (այսուհետ՝ ԿՆԽՎԿ) իր թիվ 9 Ընդհանուր հանձնարարականում կարևորում է այն հանգամանքը, որ վիճակագրական տվյալները բացարձակապես անհրաժեշտ են կանանց իրական վիճակը հասկանալու համար և խորհուրդ է տալիս մասնակից պետություններին ապահովել, որ իրենց ազգային վիճակագրական մարմինները, որոնք պատասխանատու են ազգային մարդահամարի և այլ սոցիալ-տնտեսական հետազոտությունների պլանավորման համար, նախագծեն իրենց հարցաթերթերը այնպես, որ տվյալները հնարավոր լինի բաժանել ըստ սեռի՝ թե՛ բացարձակ թվերով, թե՛ տոկոսներով: Այսպիսով, շահագրգիռ օգտատերերը կարող են հեշտությամբ տեղեկատվություն ստանալ կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ վիճակի մասին[9]:

Թիվ 35 Ընդհանուր հանձնարարականի 34(բ) կետում կոմիտեն առաջարկում է. *«Ստեղծել համակարգ՝ կանոնավոր կերպով հավաքելու, վերլուծելու և հրապարակելու վիճակագրական տվյալներ կանանց նկատմամբ գենդերային բռնության բոլոր ձևերի վերաբերյալ, ներառյալ՝ ՏՀՏ/հեռահաղորդակցման համակարգերով միջնորդավորված բռնության: Տվյալները պետք է ներառեն բողոքների քանակը, տրված պաշտպանական որոշումների քանակն ու տեսակը, կարձված և հարուցված գործերի և դատավճիռների տոկոսները, գործերի քննության համար պահանջվող ժամանակը, նշանակված պատիժները և փոխհատուցումները: Բոլոր տվյալները պետք է տարանջատված լինեն ըստ բռնության տեսակի, բռնությունից տուժած անձի և բռնություն գործադրած անձի միջև փոխհարաբերությունների, ինչպես նաև կանանց նկատմամբ խտրականության հատվող ձևերի և այլ համապատասխան սոցիալ-ժողովրդագրական բնութագրերի, ներառյալ՝ տուժողի տարիքը»:*

Կոմիտեն ընդգծում է նաև կանանց նկատմամբ գենդերային բռնության վերաբերյալ հարցումների, հետազոտությունների և ուսումնասիրությունների իրականացման կարևորությունը՝ գնահատելու գենդերային բռնության տարածվածությունը, ինչպես նաև սոցիալական կամ մշակութային համոզմունքները, որոնք հավերժացնում են այդպիսի բռնությունը և ձևավորում գենդերային հարաբերությունները:

Նույն հանձնարարականի 34(դ) կետում նշվում է, որ կանանց նկատմամբ գենդերային բռնության վերաբերյալ տվյալների հավաքագրման և պահպանման գործընթացը պետք է

[9] United Nations. (n.d.). *General recommendations adopted by the Committee on the Elimination of Discrimination against Women*. Retrieved November 26, 2024, from https://www.un.org/womenwatch/daw/cedaw/recommendations/recomm.htm#recom9

համապատասխանի սահմանված միջազգային չափանիշներին և երաշխիքներին, ներառյալ տվյալների պաշտպանության օրենսդրությանը[10]:

Պեկինի հռչակագրի և գործողությունների պլատֆորմի կարևոր ոլորտներից մեկը կանանց նկատմամբ բռնությունն է (կիզակետ Դ)[11]: Այն սահմանում է որպես կառավարությունների հատուկ ռազմավարական նպատակ՝ «Հավաքել տվյալներ և կազմել վիճակագրություն, մասնավորապես ընտանեկան բռնության, կանանց նկատմամբ բռնության տարբեր ձևերի տարածվածության վերաբերյալ, և խրախուսել պատճառների, բնույթի, ծանրության և հետևանքների ուսումնասիրությունը, ինչպես նաև կանանց նկատմամբ բռնության կանխարգելման և վերացմանն ուղղված միջոցառումների արդյունավետությունը: Հետազոտությունների, հարցումների և վիճակագրության արդյունքները տարածել և հանրայնացնել»:

Ծառայությունների օգտագործման, ծառայությունների մատուցման և ռեսուրսների բաշխման վերաբերյալ վարչական տվյալները կարող են օգտագործվել նաև ԿԶՆ-ի (Կայուն Զարգացման Նպատակների) կոնկրետ թիրախների ուղղությամբ առաջընթացի մասին մանրամասն պատկերացում կազմելու համար:

Վիճակագրական տվյալների հավաքմանը, մշակմանը և հրապարակմանն անդրադառնում են ՀՀ կողմից վավերացված նաև մի շարք այլ միջազգային կոնվենցիաներ, ինչպիսիք են «Երեխաների իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան[12], «Հաշմանդամություն ունեցող անձանց մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան[13], «Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաներին պաշտպանելու մասին» Եվրոպայի խորհրդի (Լանզարոտեի) կոնվենցիան[14] և այլ միջազգային փաստաթղթեր:

Տարածաշրջանային մակարդակով, մասնավորապես՝ Ստամբուլյան կոնվենցիայի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, մասնակից պետությունները պետք է կանոնավոր պարբերականությամբ դասակարգված կերպով հավաքեն վիճակագրական տվյալներ Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության բոլոր տեսակների վերաբերյալ: Պետությունները պետք է նաև աջակցեն հետազոտությունների իրականացմանը: Մասնակից պետությունները պարտավոր են կանոնավոր պարբերականությամբ անցկացնել բնակչությունն ընդգրկող հարցումներ՝ բռնության բոլոր ձևերի տարածվածությունն ու զարգացման միտումները գնահատելու նպատակով:

Կոնվենցիայի բացատրական զեկույցի համաձայն, գենդերային բռնության վերաբերյալ տվյալների հավաքագրման համար գոյություն ունեն երկու հիմնական մեթոդ՝

---

[10] United Nations. (n.d.). *General recommendations No. 35 on gender-based violenceagainst women, updating general recommendation No. 19, 2017 adopted by the Committee on the Elimination of Discrimination against Women*. Retrieved November 26, 2024, from https://docstore.ohchr.org/SelfServices/FilesHandler.ashx?enc=6QkG1d%2FPPRiCAqhKb7yhsldCrOlUTvLRFDjh6%2Fx1pWAeqJn4T68N1uqnZjLbtFua2OBKh3UEqlB%2FCyQIg86A6bUD6S2nt0Ii%2Bndbh67tt1%2BO99yEEGWYpmnzM8vDxmwt

[11] United Nations. (1995). *Beijing declaration and platform for action*. Retrieved November 26, 2024, from https://shorturl.at/dgmJQ

[12] «Երեխաների իրավունքների մասին» կոնվենցիայի 2-րդ հոդվածը, և Թիվ No. 5 (2003), No. 8 (2006), և No. 13 (2011) Ընդհանուր մեկնաբանությունները:

[13] Հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների վերաբերյալ թիվ No. 3 (2016) ընդհանուր մեկնաբանությունը:

[14] «Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաներին պաշտպանելու մասին» Եվրոպայի խորհրդի (Լանզարոտեի) կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի (b) կետը և 37-րդ հոդվածի 1-ին մասը:

1. **Հետազոտություններ և բնակչության հարցումներ**, որոնք կարող են օգտագործվել գենդերային բռնության տարածվածությունը չափելու համար:

2. **Վարչական տվյալներ**, որոնք ներկայացնում են հավաքագրված տեղեկատվություն և վիճակագրություն այն կառույցներից, որոնք իրենց գործունեության ընթացքում առնչվում են բռնությունից տուժած կամ բռնություն գործադրած անձանց հետ:

Առաջին մեթոդը հնարավորություն է տալիս հասկանալ կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության ծանրության աստիճանը և հաճախականությունը, ինչպես նաև սոցիալ-տնտեսական ու մշակութային այն գործոնները, որոնք հանգեցնում են դրան: Երկրորդ մեթոդը, իր հերթին, կարող է նպաստել պետական մարմինների հետ կապված խնդիրների լուծմանը և բռնության ենթարկված անձանց համար նախատեսված ծառայությունների տրամադրման արդյունավետության գնահատմանը: Տվյալների հավաքման երկու մեթոդների համակցված օգտագործումը կարող է նպաստել խնդրի ամբողջական պատկերի ձևավորմանը[15]:

Հետազոտությունն ապացույցների վրա հիմնված քաղաքականության մշակման առանցքային տարրն է և կարող է մեծապես նպաստել կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնությանը գործնականում տրվող արձագանքի արդյունավետության պարբերաբար բարձրացմանը:

Բնակչության շրջանում կատարված հարցումների արդյունքում հնարավոր է ձեռք բերել սոցիոլոգիական ուղղվածությամբ առավել համապարփակ տեղեկություններ բռնության բոլոր ձևերի տարածվածության, բնույթի, որոշիչ գործոնների և հետևանքների մասին: Այդ հարցումների միջոցով կարելի է ստանալ հավաստի տեղեկություններ տուժած անձանց՝ բռնության ենթարկվելու դեպքերի, հաղորդում չներկայացնելու պատճառների, տրամադրված ծառայությունների, ինչպես նաև այդպիսի բռնության վերաբերյալ տուժած անձանց կարծիքների և դրա նկատմամբ նրանց մոտեցումների մասին:

Խորհուրդ է տրվում, բնակչության շրջանում հարցումներ պլանավորելիս, պետությունները հղում կատարեն Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ)՝ Կանանց առողջության և կանանց նկատմամբ ընտանեկան բռնության վերաբերյալ մի շարք երկրներում անցկացված ուսումնասիրությանը, Կանանց նկատմամբ բռնության հարցերով միջազգային հետազոտությանը[16] (ԿՆԲՄՀ)[17], ինչպես նաև ՄԱԿ-ի *Կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ վիճակագրության կազմման ուղեցույց՝ վիճակագրական հետազոտություններ* աշխատանքին[18]:

---

[15] Council of Europe. (2011). Council of Europe Convention on preventing and combating violence against women and domestic violence (Istanbul Convention) and explanatory report. Retrieved November 26, 2024, from https://shorturl.at/7Mi8A

[16] The World Health Organisation (WHO) Multi-country Study on Women's Health and Domestic Violence against Women as well as the International Violence Against Women Survey (IVAWS).

[17] Ստամբուլյան կոնվենցիայի կից բացատրական զեկույցը, 72-րդ, 74-րդ և 75-րդ կետերը, Council of Europe. (2011). Council of Europe. (2011). Council of Europe Convention on preventing and combating violence against women and domestic violence (Istanbul Convention) and explanatory report. Retrieved November 26, 2024, from https://shorturl.at/7Mi8A

[18] United Nations. (2014). *Guidelines for producing statistics on violence against women: Statistical surveys*. Retrieved November 26, 2024, from https://unstats.un.org/unsd/gender/docs/guidelines_statistics_vaw.pdf

Կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ վարչական տվյալների հավաքման հիմնական աղբյուրները պետական մարմիններն են, որոնք հավաքագրում և վերանայում են արձանագրված դեպքերը: Վարչական տվյալները կարող են տրամադրել օգտակար տեղեկատվություն կանանց նկատմամբ բռնության հաղորդված դեպքերի մասին: Դրանք կարող են օգտագործվել պաշտոնական վիճակագրություն մշակելու և տարածելու համար:

Վարչական տվյալների կատեգորիաների ընտրությունը թողնված է Կողմերի հայեցողությանը, սակայն նվազագույն պահանջ է սահմանված այն, որ բռնության ենթարկված անձի և բռնություն գործադրած անձի վերաբերյալ տվյալները պետք է լինեն տարանջատված ըստ հետևյալ ցուցանիշների՝ *սեռի, տարիքի, բռնության տեսակի, նրանց միջև հարաբերության, աշխարհագրական վայրի, բռնության ձևի, դատապարտման տոկոսի, պաշտպանական որոշումների թվի, ինչպես նաև Կողմերի կողմից վերաբերելի համարվող այլ գործոնների*, օրինակ՝ հաշմանդամությունը[19]:

Կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ վարչական տվյալներն ու վիճակագրությունը կարող են օգտագործվել գենդերային բռնության կանխարգելմանն ուղղված քաղաքականություն և օրենսդրություն մշակելու, դրանց արդյունավետության մոնիթորինգի, գնահատման և վերլուծության համար: Դրանք նաև հնարավորություն են տալիս ավելի լավ պատկերացում կազմել բռնության միտումների վերաբերյալ և մշակել դրա կանխարգելմանն ուղղված ծրագրեր: Բացի այդ, այդ տվյալները կարող են օգնել գնահատել բռնության ենթարկված անձանց կողմից ծառայությունների օգտագործման և պահանջարկի չափը, համապատասխանությունն ու որակը[20]:

Համաձայն Կոնվենցիայի բացատրական զեկույցի՝ տվյալները պետք է հասանելի լինեն հանրությանը՝ հանրային քննարկումների հիմք հանդիսանալու նպատակով: Տվյալները կարող են հրապարակվել համապատասխան պետական մարմինների պաշտոնական կայքերում: Հանրության համար օգտակար լինելու համար անհրաժեշտ է տրամադրել համապատասխան ամփոփագրեր: Տեղեկատվության ձևը, տրամադրման եղանակը, ինչպես նաև հանրությանը հասանելի դարձվելիք տվյալների տեսակը սահմանելը թողնված է Կողմերի հայեցողությանը:

Կոնվենցիայի 11-րդ հոդվածի համաձայն, հավաքված տվյալները հանրությանը հասանելի դարձնելիս Կողմերը պետք է հատուկ ուշադրություն դարձնեն մասնավոր կյանքի իրավունքի պաշտպանությանը[21]: Կոնվենցիայի 65-րդ հոդվածում (տվյալների պաշտպանություն) նշվում է, որ անձնական տվյալները պետք է պահպանվեն և օգտագործվեն մասնակից պետությունների ստանձնած պարտավորություններին համապատասխան[22]:

Խորհուրդ է տրվում անդամ պետություններին տվյալները հավաքել կանոնավոր կերպով առնվազն հետևյալ երեք մակարդակներում.

---

[19] Կոնվենցիային կից բացատրական զեկույցը, 76-րդ կետը, Council of Europe. (2011). Council of Europe Convention on preventing and combating violence against women and domestic violence (Istanbul Convention) and explanatory report. Retrieved November 26, 2024, from https://shorturl.at/7Mi8A

[20] Administrative data sources on gender-based violence against women in the EU: Current status and potential for the collection of comparable data, p-20.

[21] Կոնվենցիային կից բացատրական զեկույցը, 81-82-րդ կետերը:

[22] «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիայի պահանջների համաձայն: ՀՀ կողմից տվյալ Կոնվենցիան վավերացվել է 2012թ. մայիսի 9-ին, ուժի մեջ է մտել 2012թ. սեպտեմբերի 1-ին, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=80554

- **1-ին մակարդակ՝** բռնությունից տուժած և բռնություն գործադրած անձանց վերաբերյալ անմիջական տվյալներ, օրինակ՝ տարանջատված տվյալներ ըստ սեռի, տարիքի, կարգավիճակի, բռնության տեսակի, բռնության վայրի, բռնություն գործադրած անձի և բռնության ենթարկված անձի փոխհարաբերությունների, կրթության և մասնագիտական գործունեության մակարդակի և այլն:
- **2-րդ մակարդակ՝** իրավական ընթացակարգերի տարբեր փուլերին վերաբերող տվյալներ, օրինակ՝ վիճակագրություն կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեպքերի մասին հաղորդումների և դատապարտումների տոկոսի վերաբերյալ, ներառյալ տրված պաշտպանական որոշումների քանակը և այլ համապատասխան տվյալներ:
- **3-րդ մակարդակ՝** բռնությունից տուժած անձանց արձագանքին և բռնության հետևանքներին վերաբերող տվյալներ[23]:

Առողջապահության ոլորտի աշխատակիցները բռնության տեսակը կարող են սահմանել համաձայն Հիվանդությունների միջազգային դասակարգման (International Classification of Diseases): Իսկ այն կառույցները, որոնք չեն ընդգրկված դատական կամ բժշկական համակարգերում, տվյալներ հավաքելիս կարող են կիրառել բռնության տեսակների ավելի ընդհանուր սահմանումներ, օրինակ՝ ֆիզիկական, հոգեբանական, տնտեսական կամ սեռական բռնություն[24]:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ որոշ երկրներում, օրինակ՝ Ֆինլանդիայում, վարչական մարմինները, բացի սահմանված նվազագույն պահանջվող տվյալներից, հավաքում են նաև այնպիսի մանրամասն տվյալներ, ինչպիսիք են անձանց հասցեները, քաղաքացիությունը, մասնագիտությունը, բռնության տեսակը և բնույթը, պաշտպանական որոշման ժամկետները, ամուսնական կարգավիճակը, համատեղ բնակության վայրը, երեխաների առկայությունը և թիվը, երեխաների տարիքը, նրանց ներկայությունը բռնության դեպքի պահին, սոցիալական ծառայությունների հետ կոնտակտները, ուղղորդումները դեպի այլ ծառայություններ և այլ մանրամասն տեղեկատվություն:

Հարցումներից ստացված վիճակագրական տվյալների համեմատություն

Սույն հետազոտության շրջանակներում հարցումներ են ուղարկվել Ոստիկանություն, Քննչական կոմիտե, Դատախազություն և Դատական դեպարտամենտ՝ **2019-2024 թվականների ընթացքում կանանց նկատմամբ կատարված բռնության դեպքերի և ընտանեկան բռնության դեպքերի** վերաբերյալ՝ ապանձնավորված տեղեկություն տրամադրելու խնդրանքով, հնարավորության դեպքում՝ տարանջատված ըստ տարեթվի, ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածի, տուժողների թվի, տուժողի սեռի (նշել, եթե բռնությունը կատարվել է հղի կնոջ կամ հաշմանդամություն ունեցող անձի նկատմամբ), տուժողի տարիքի, տուժողի ընտանեկան կարգավիճակի և այլ տվյալների:

Գծապատկեր 1. Կոնվենցիայով սահմանված վարչական տվյալների հավաքագրման պահանջին համապատասխանության աստիճանը

[23] Final Activity Report, Council of Europe Task Force to Combat Violence against Women, including Domestic Violence (EG-TFV), Strasbourg, September 2008.
[24] Ibid, Section 3.3: Model approach to the collection of administrative data, page- 23.



Հարկ է նշել, որ վարչական տվյալների հավաքագրումը լավարկել է վերջին տարիների ընթացքում, մասնավորապես, Ոստիկանության, Վիճակագրական կոմիտեի և Քննչական կոմիտեի կողմից: Վերոնշյալ միջազգային փաստաթղթերով սահմանված նվազագույն պահանջներին համապատասխան տեղեկատվություն տրամադրվել է Ոստիկանության և Վիճակագրական կոմիտեի կողմից: (տես՝ Գծապատկեր 1):

Գծապատկեր 2. Կոնվենցիայով սահմանված վարչական տվյալների հավաքագրման պահանջին համապատասխանության աստիճանը՝ 2023թ.



Դատախազության կողմից տրամադրած տվյալները թույլ են տալիս ստանալ տվայլներ միայն ըստ հոդվածների և տարեթվերի: Քննչական կոմիտեի կայքից ստացված վիճակագրության վերլուծությունը թույլ է տալիս ստանալ հիմնականում բռնության տեսակների մասին տվյալներ տարանջատված ըստ տարեթվերի, երբեմն նաև տուժողների տարիքի և տուժողի և մեղադրյալի ընտանեկան կարգավիճակի/փոխկապակցվածության մասին: Իսկ դատական իշխանության կայքում առկա վիճակագրությունը տարանջատված չէ ըստ սեռի և մի շարք այլ գործոնների, ինչն անհնարին է դարձնում Կոնվենցիայոով սահմանված նվազագույն պահանջներին համապատասխան տեղեկատվության ստացումը (տես՝ Գծապատկեր 2):

ՀՀ վիճակագրական կոմիտե

Որպես կանանց նկատմամբ բռնության վերացման գործընթացի մաս, յուրաքանչյուր պետություն պարտավոր է ապահովել կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ տվյալների համակարգված հավաքագրումն ու տարածումը որպես պաշտոնական վիճակագրության մաս: Ազգային վիճակագրական մարմինները կենտրոնական դեր են խաղում կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի համար անհրաժեշտ տվյալների մշակման գործում: Համապատասխան նախարարությունների հետ միասին նրանք պարտավոր են օգնել պետություններին կատարել իրենց միջազգային պարտավորությունները, մասնավորապես՝ **կանանց նկատմամբ բռնության տարածվածության վերաբերյալ տվյալների հավաքագրման նպատակով՝** համաձայն «Կանանց նկատմամբ բռնության վերացման մասին» հռչակագրի, «Պեկինի պլատֆորմի և Գործողությունների ծրագրի» և ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի բանաձևերի:

Հնարավորության դեպքում ազգային վիճակագրական մարմինները պետք է սահմանեն հետազոտությունների հստակ հաճախականություն, որպեսզի հնարավոր լինի ժամանակի ընթացքում հետևել փոփոխություններին: Ազգային վիճակագրական մարմիններից պահանջվում է նաև ապահովել, որ օգտագործվող հասկացությունները, սահմանումները և մեթոդները համապատասխանեն միջազգային առաջարկություններին[25]:

ՀՀ վիճակագրական կոմիտեն ազգային վիճակագրական համակարգի գլխավոր պետական մարմին է[26] և համակարգում է ազգային վիճակագրական համակարգում պաշտոնական վիճակագրության մշակմանը, արտադրությանը և տարածմանն ուղղված ամբողջ գործունեությունը՝ բացառությամբ ՀՀ կենտրոնական բանկի[27]: Վիճակագրական կոմիտեն ֆինանսավորվում է պետական բյուջեի, ինչպես նաև օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին[28]:

Համաձայն հարցման պատասխանի[29]՝ ՀՀ վիճակագրական կոմիտեն նշել է, որ կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ վիճակագրությունն իրականացնում է տեղեկատվական հետևյալ երկու աղբյուրներից ստացվող տվյալների միջոցով.

---

[25] United Nations. (2014). *Guidelines for producing statistics on violence against women: Statistical surveys*. Retrieved November 26, 2024, from https://shorturl.at/rQT27

[26] «Պաշտոնական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, http://www.irtek.am/views/act.aspx?aid=150563:

[27] «Պաշտոնական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասը:

[28] «Պաշտոնական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ մասը:

[29] Տեղեկատվությունը ստացվել է 2024 թվականի հունիսի 11-ին:

ա) տնային տնտեսություններում իրականացվող թեմատիկ ընտրանքային հետազոտություններ, որոնք սովորաբար իրականացվում են միջազգային համագործակցության շրջանակում՝ ոչ կանոնավոր պարբերականությամբ.
բ) վարչական ռեգիստրներից ստացվող տեղեկություններ՝ կանոնավոր պարբերականությամբ, որոնք Վիճակագրական կոմիտեին հասանելի են 2023թ.-ից:

Տնային տնտեսություններում իրականացվող թեմատիկ վերջին հետազոտությունը՝ «Կանանց նկատմամբ ընտանեկան բռնության հետազոտությունը» (ԿՆԸԲՀ)[30] իրականացվել է 2021թ.՝ «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» Համաշխարհային բանկի ECASTAT դրամաշնորհային ծրագրի «Գենդերային վիճակագրություն» բաղադրիչի շրջանակում: Հետազոտությունն իրականացվել է 4185 տնային տնտեսությունների 15-59 տարեկան 2872 կանանց շրջանում՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից առաջարկվող մեթոդաբանությամբ՝ տեղայնացված ազգային առանձնահատկություններով: Հետազոտության արդյունքների հիման վրա համալրվել են ԿԶՆ 5.2.1 և ԿԶՆ 5.2.2 ցուցանիշները[31], որոնք տեղ են գտել նաև CEDAW կոնվենցիայի իրականացման վերաբերյալ ՀՀ 7-րդ զեկույցում:

Համաձայն ՀՀ Վիճակագրական կոմիտեի կողմից 2021թ. իրականացված ԿՆԸԲ հետազոտության՝ երբևէ զուգընկեր ունեցող, 15-59 տարեկան քաղաքաբնակ և գյուղաբնակ կանանց (ընդամենը՝ 2,560 (100%)) շրջանում, զուգընկերոջ կողմից.

- **Երբևէ չեն ենթարկվել բռնության՝** 2,119 (82.2%)
- **Երբևէ ենթարկվել են ֆիզիկական և/կամ սեռական բռնության**[32]՝ 411 (17.2%), նրանցից՝ անցած 12 ամիսների ընթացքում՝ 119 (4.6%)
- **Երբևէ ենթարկվել են ֆիզիկական բռնության՝** 378 (14.8%), չափավոր ֆիզիկական բռնության ենթարկվածներ՝ 335 (13.1%); դաժան ֆիզիկական բռնության ենթարկվածներ՝ 142 (5.5%); նրանցից՝ անցած 12 ամիսների ընթացքում՝ 90 (3.5%)
- **Երբևէ ենթարկվել են սեռական բռնության՝** 168 (6.6%), անցած 12 ամիսների ընթացքում՝ 49 (1.9%)
- **Երբևէ ենթարկվել են հոգեբանական բռնության՝** 814 (31.8%), անցած 12 ամիսների ընթացքում՝ 334 (13.0%)
- **Երբևէ ենթարկվել են ֆիզիկական/սեռական/հոգեբանական բռնության՝** 920 (35.9%)[33], [34]:

Թեմային առնչվող տվյալներ հավաքվել են նաև «Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտության» (ՀԺԱՀ) շրջանակում, որը Վիճակագրական կոմիտեի կողմից իրականացվել է 2000թ.-ից սկսած՝ հնգամյա պարբերականությամբ (2000,

---

[30] «Կանանց նկատմամբ ընտանեկան բռնության հետազոտություն», երկլեզու վերլուծական զեկույց-հաշվետվություն, https://armstat.am/am/?nid=82&id=2487

[31] ԿԶՆ 5.2.1 (Երբևէ զուգընկեր ունեցած 15 տարեկան և ավելի բարձր տարիքի կանանց և աղջիկների համամասնությունը, ովքեր ենթարկվել են ֆիզիկական, սեռական կամ հոգեբանական բռնության ներկա կամ նախկին զուգընկերոջ կողմից վերջին 12 ամիսների ընթացքում, ըստ բռնության ձևի և ըստ տարիքի) https://sdg.armstat.am/am/5-2-1/ և ԿԶՆ 5.2.2 (15 տարեկան և ավելի բարձր տարիքի կանանց և աղջիկների համամասնությունը, ովքեր ենթարկվել են սեռական բռնության զուգընկեր չհանդիսացող անձանց կողմից վերջին 12 ամիսների ընթացքում, ըստ տարիքային խմբի և բռնության կատարման վայրի) https://sdg.armstat.am/am/5-2-2/

[32] Նույն անձը կարող էր ենթարկվել բռնության մեկից ավելի տեսակների՝ ֆիզիկական և սեռական և հոգեբանական:

[33] Նույն անձը կարող էր ենթարկվել և՛ դաժան և՛ չափավոր ֆիզիկական բռնության:

[34] ԿՆԸԲ հետազոտությունը, Աղյուսակ 2.ԿՆԸԲՀ հիմանական ցուցանիշները երբևէ զուգընկեր ունեցած կանանց շրջանում, էջ – 8:

2005, 2015-2016): Լինելով թեմատիկ լայն ընդգրկում ունեցող ընտրանքային հետազոտություն՝ ՀԺԱՀ-ն ուղղված է առավել թիրախավորված բնակչության առողջությանն առնչվող հարցերի ուսումնասիրությանը, և այն ապահովել է ընտանեկան բռնության վերաբերյալ սոցիալ-ժողովրդագրական տարբեր բնութագրիչներով մանրամասնված տեղեկատվություն:

Ինչ վերաբերում է վարչական վիճակագրական ռեգիստրներից ստացվող տվյալներին, ապա. **ա) Համաձայն Ոստիկանության** կողմից ներկայացված *«Ընտանիքում բռնության*[35] *դեպքերի մասին» ՀՀ 2-բռնություն* (եռամսյակային) վիճակագրական ամփոփ հաշվետվության տվյալների՝ 2023թ. ընթացքում ՀՀ-ում գրանցվել է 508 ընտանեկան բռնության դեպք[36], իսկ 2024թ. հունվար-մարտ ամիսներին՝ 304 դեպք[37]:

Ոստիկանության կողմից տրամադրած տվյալները տարանջատված են հետևյալ կերպ՝

- Ընտանիքում բռնության դեպքերի քանակը ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի,
- Տուժողի և բռնություն գործադրած անձի միջև փոխհարաբերություններ (կենակից և ընտանեկան փոխհարաբերություններ),
- Ընտանիքում բռնության դեպքերի առնչությամբ գրանցված հանցագործությունների քանակը ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի (դատարան ուղարկված, կարճված և ընթացքի մեջ),
- Ընտանիքում բռնություն իրականացրած անձանց թվաքանակը ըստ սեռատարիքային խմբերի, ՀՀ մարզերի և Երևան քաղաքի:

բ) Համաձայն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (ԱՍՀՆ) կողմից ներկայացված *«Ընտանիքում բռնության ենթարկված անձանց մասին» ՀՀ 1*-ի բռնություն (եռամսյակային) վիճակագրական ամփոփ հաշվետվության տվյալների՝ 2024թ. հունվար-մարտ ամիսներին ընտանիքում բռնության ենթարկվել է 414 անձ[38]:

ԱՍՀՆ կողմից տրամադրած տվյալները տարանջատված են հետևյալ կերպ՝

- Ընտանիքում բռնության ենթարկված անձանց թվաքանակը ըստ սեռի, ներառյալ անչափահասները, ՀՀ մարզերի և Երևան քաղաքի,
- Ընտանիքում բռնության ենթարկված անձանց թվաքանակը ըստ բռնության տեսակի, ՀՀ մարզերի և Երևան քաղաքի,
- Ընտանիքում բռնության ենթարկված հաշմանդամություն ունեցող անձանց թվաքանակը, ՀՀ մարզերի և Երևան քաղաքի,
- Ընտանիքում բռնության ենթարկված ազգային փոքրամասնության ներկայացուցիչների թվաքանակը, ներառյալ սեռը, ՀՀ մարզերի և Երևան քաղաքի:

---

[35] Չնայած 2024թ.-ի հուլիսի 1-ին ուժի մեջ են մտնել «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքում մեծածավալ փոփոխությունները և լրացումները, ի թիվս որոնց փոխվել նէև բռնության անվանումը և սահմանումները, սակայն ոչ բոլոր Իրավական ակտերում են դեռ դրանք համապատասխանեցվել միմյանց և ՀՀ օրենսդրության մեջ դեռ կիրառվում է թե՛ ընատնիքում բռնություն, թե՛ ընտանեկան բռնություն ձևակերպումը:

[36] Գրանցված ընտանեկան բռնության դեպքերի քանակը 2023թ. հունվար-դեկտեմբեր, 208-րդ էջ, https://armstat.am/file/article/sv_12_23a_530.pdf

[37] Գրանցված ընտանեկան բռնության դեպքերի քանակը 2024թ. հունվար-մարտ, 239-րդ էջ, https://armstat.am/file/article/sv_03_24a_570.pdf

[38] Նույն տեղը:

Այսպիսով, **Վիճակագրական կոմիտեն** իրականացնում է տնային տնտեսություններում իրականացվող թեմատիկ ընտրանքային հետազոտություններ, սակայն դրանք իրականացվում են **ոչ կանոնավոր պարբերականությամբ**, ինչը թույլ չի տալիս հետևել կանանց նկատմամբ բռնության ձևերի տարածվածությանը, հաճախականությանը և զարգացման միտումներին: Պատշաճ և համեմատական գնահատում կատարելու համար անհրաժեշտ է երկարաժամկետ կտրվածքով հետևել զարգացումներին:

Հետևաբար, *Վիճակագրական կոմիտեն պետք է սահմանի հետազոտությունների և բնակչության շրջանում իրականացվող հարցումների համար հստակ սահմանված հաճախականություն՝ թե ինչ պարբերականությամբ, ինչ մեթոդաբանությամբ և ինչ ընդգրկվածությամբ դրանք պետք է իրականացվեն:*

Բացի այդ, ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների համաձայն՝ **պետությունը պարտավոր է վարել վիճակագրություն նաև կանանց նկատմամբ բռնության դեպքերի վերաբերյալ:** Սակայն, ընտանեկան միավորի շրջանակից դուրս, **կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ տվյալները բացակայում են:** Հետևաբար, *կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի՝ պետության կողմից վարվող քաղաքականության և ձեռնարկված միջոցառումների արդյունավետությունը գնահատել անհնար է:*

Ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառում

Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում **լիազոր մարմինը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն է** (այսուհետ՝ ԱՍՀՆ): Այն, ի թիվս այլ գործառույթների, մշակում և իրականացնում է սոցիալական պաշտպանության և աջակցության, ընտանիքի, կանանց և երեխաների սոցիալական պաշտպանության ոլորտներում Կառավարության քաղաքականությունը[39]: ԱՍՀՆ նաև կազմակերպում և ապահովում է միջազգային պայմանագրերով և միջազգային կազմակերպություններին անդամակցությամբ պայմանավորված՝ աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտում պետության ստանձնած պարտավորությունները կատարելու աշխատանքների իրականացումը[40]:

Ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1381-Ն որոշմամբ սահմանված կարգով[41]: Ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառումն իրականացնում է ԱՍՀՆ՝ ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության, ՀՀ քննչական կոմիտեի, ՀՀ դատական դեպարտամենտի, ինչպես նաև վերջիններիս կողմից չգրանցված օրենքով սահմանված աջակցության կենտրոնների և ապաստարանների կողմից տրամադրված տվյալների հիման վրա[42]: Նշված մարմինները՝ յուրաքանչյուրն իր իրավասության շրջանակներում, լրացնում են էլեկտրոնային հարթակում տեղադրված և հատուկ մշակված թերթիկը: ԱՍՀՆ տեղեկատվությունը ստանում է

[39] «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքի Հավելվածի 1-ին կետը, 2018 թ., http://www.irtek.am/views/act.aspx?aid=150622

[40] ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11 -ի N 700-Լ որոշումը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին, http://www.irtek.am/views/act.aspx?aid=95319

[41] Ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման կարգը, http://www.irtek.am/views/act.aspx?aid=151923

[42] ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1381-Ն որոշման Հավելվածի 4-րդ կետը:

տեղեկատվական համակարգի միջոցով: ԱՍՀՆ ստացված տեղեկատվության հիման վրա իրականացնում է ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառում և դրանց ընթացքի վերաբերյալ ամփոփ վիճակագրության վարում: Տեղեկատվության ամփոփման և հրապարակման համար պատասխանատու է ԱՍՀՆ: Վերջինս առնվազն յուրաքանչյուր կիսամյակ տեղեկատվությունն ամփոփելուց հետո՝ իր պաշտոնական կայքում հրապարակում է կիսամյակային և տարեկան վիճակագրական հաշվետվություններն ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերի վերաբերյալ: Տվյալների գաղտնիությունն ապահովելու նպատակով տեղեկատվություն տրամադրող մարմինն անձնական տվյալներ պարունակող տեղեկատվական փաթեթը ներկայացնում է ապանձնավորում ապահովելով[43]:

Ընտանեկան և կենցաղային բռնության դեպքի վերաբերյալ թերթիկն իրենից ներկայացնում է 83 դաշտից բաղկացած՝ ընտանեկան և կենցաղային բռնության դեպքի վերաբերյալ մանրամասն հարցում: **Այն ներառում է հետևյալ տեղեկությունները**[44]՝

Գրանցման ժամանակահատված՝

1. Ընտանեկան և կենցաղային բռնության դեպքի գրանցման ժամանակահատվածը:

Տվյալներ՝

2. Սեռատարիքային
3. Բռնության տեսակներ
4. Բռնության դրսևորումներ
5. Գործադրած եղանակներ

Հարաբերություններ՝

6. Տուժողի և բռնարարի միջև փոխհարաբերություններ

Արձանագրված պաշտպանական միջոցներ՝

7. Կիրառված պաշտպանության միջոցներ

Բռնության վայր՝

8. Բռնության տեղի վայրի նկարագրություն

Երեխաների ներկայություն՝

9. Բռնության ժամանակ երեխաների ներկայությունը

Հաշմանդամություն կամ այլ կարգավիճակ՝

10. Տուժողի հաշմանդամության կամ այլ կարգավիճակի առկայություն

Դատական ակտեր՝

11. Դատական վերջնական ակտի տեղեկություններ:

Այսպիսով, կարգն անդրադառնում է միջազգային և տարածաշրջանային կոնվենցիաներով պահանջվող բոլոր նվազագույն վարչական տվյալներին: Տվյալ կարգի ընդունումը մեծ առաջընթաց է ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ վիճակագրության վարման համար:

[43] ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1381-Ն որոշման Հավելվածի 3-12-րդ կետերը:
[44] ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1381-Ն որոշման Հավելվածի Թերթիկ 1:

Սակայն, պետք է հաշվի առնել, որ կարգը վերաբերելի է միայն մասնավոր ոլորտին, այսինքն, զուգընկերոջ կողմից կամ ընտանեկան հարաբերությունների շրջանակում կատարված բռնությանը, *կանանց նկատմամբ կատարված բռնության այլ դեպքերը չեն հաշվառվում:*

Միջազգային և եվրոպական փորձի ուսումնասիրություն

Այս առումով սույն հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել է Գենդերային հավասարության եվրապական ինստիտուտի (European Institute for Gender Equality - EIGE[45]) փորձը՝ մասնավորապես, Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության վերաբերյալ վարչական տվյալների հավաքագրման մեթոդաբանությունը, որով մշակվել են ցուցիչներ, որոնք հավաքում են կանանց նկատմամբ բռնության դեպքերի և ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ տարբեր վարչական տվյալներ, այդ թվում, ֆիզիկական, հոգեբանական, սեռական և տնտեսական բռնության տեսակների վերաբերյալ:

Հավաքված տվյալների համեմատելիությունը բարելավելու համար EIGE-ն տվյալների հավաքագրումը համապատասխանեցրել է ՄԱԿ-ի թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի կողմից մշակված վիճակագրական նպատակներով հանցագործությունների միջազգային դասակարգչին[46] (International Crime Classification of Crime for Statistical Purposes - ICCS[47]): ICCS-ն ընդունվել է 2015 թվականին: Վերջինս շրջանակ է ապահովում հանցավորության և քրեական արդարադատության վիճակագրության արտադրության համար: Շրջանակը ներառում է հանցագործության սահմանումներ և ծածկագրեր, որոնք երկրները կարող են օգտագործել հանցագործության մասին տվյալներ հավաքելիս:

Իրավական հասկացությունները, քրեական արդարադատության համակարգերը, հանցագործությունների սահմանումները և դրանց վերաբերյալ վիճակագրական տվյալների հավաքագրման մեթոդները մեծապես տարբերվում են երկրների միջև: Ընդհանուր սահմանումների, ստանդարտացված գործիքների և մեթոդաբանության բացակայությունը սահմանափակում է հանցագործությունների վերաբերյալ վիճակագրական տվյալների համեմատելիությունը միջազգային մակարդակով: ICCS-ն առաջին գործիքն է, որը խմբավորում է բոլոր տեսակի քրեական հանցագործությունները մեկ շրջանակի մեջ և դյուրացնում հանցագործության վիճակագրության համեմատությունը միջազգային մակարդակով: Այն հիմնված է միջազգայնորեն համաձայնեցված հայեցակարգերի, սահմանումների և սկզբունքների վրա՝ հանցավորության վերաբերյալ վիճակագրության միջազգային համադրելիությունը բարձրացնելու և ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում վերլուծական կարողությունները բարելավելու նպատակով:

ICCS-ը հետևում է երեք կարևոր պահանջներին ցանկացած վիճակագրական դասակարգման համար՝

---

[45] European Institute for Gender Equality. (n.d.). *Homepage*. Retrieved November 26, 2024, from https://eige.europa.eu

[46] European Institute for Gender Equality. (n.d.). *EIGE publication*. Retrieved November 26, 2024, from https://eige.europa.eu/e-reader/8076

[47] United Nations Office on Drugs and Crime. (n.d.). *International classification of crime for statistical purposes (ICCS)*. Retrieved November 26, 2024, from https://www.unodc.org/unodc/en/data-and-analysis/statistics/iccs.html

- **Համապարփակություն՝** դասակարգումը պետք է ներառի բոլոր հանցագործությունները,
- **Փոխադարձ բացառիկություն՝** հանցագործությունը պատկանում է միայն մեկ դասի, և դասերը չեն համընկնում,
- **Վիճակագրական իրագործելիություն՝** պետք է հնարավոր լինի հավաքել տվյալներ և ստեղծել դրանց վերաբերյալ վիճակագրություն[48]:

ICCS-ի շրջանակը ներառում է հանցագործությունների բոլոր հիմնական տեսակները և, որպես այդպիսին, կազմում է հանցագործությունների ազգային վիճակագրություն ստեղծելու սահմանումների համապարփակ շրջանակ: Այն զգայուն չէ ազգային օրենսդրության և կարգավորող շրջանակների փոփոխությունների նկատմամբ:

ICCS-ը կառուցվածքը հիերարխիկ է, և հանցագործությունները դասակարգվում են չորս տարբեր մակարդակներում: ICCS-ի շրջանակը ներառում է 11 «I-ին մակարդակի» (տես՝ ստորև աղյուսակը) հանցագործությունների կատեգորիաներ, որոնք հետագայում բաժանվում են 3 լրացուցիչ մակարդակների: Ամեն մակարդակ ներառում են նույն դասի հանցագործությունը:

Ծածկագիր	Հանցագործության նկարագրությունը[49]
01	Գործուղություններ, որոնք հանգեցնում են մահվան կամ նպատակ են հետապնդում մահ պատճառելու
02	Գործողություններ, որոնք վնասում են կամ նպատակ ունեն վնասել անձին
03	Գործողություններ, որոնք վնասում են անձի սեռական անձեռնմխելիությունը
04	Գործողություններ, որոնք ուղղված են սեփականության դեմ՝ կապված անձի նկատմամբ բռնության կամ սպառնալիքի հետ
05	Գործողություններ՝ ուղղված միայն սեփականության դեմ
06	Գործողություններ, որոնք ներառում են թմրամիջոցներ կամ այլ հոգեամետ/ հոգեներգործուն նյութեր
07	Խարդախության, խաբեության կամ կոռուպցիայի հետ կապված գործողություններ
08	Հասարակական կարգի, իշխանության և պետական կարգի դեմ ուղղված գործողություններ
09	Հասարակական և պետական անվտանգության դեմ ուղղված գործողություններ
10	Գործողություններ շրջակա միջավայրի դեմ
11	Այլ հանցավոր արարքներ, որոնք դասակարգված չեն նախորդ կետերում

2-րդ, 3-րդ և 4-րդ մակարդակներում հանցագործությունները դասակարգվում են ավելի մանրամասն՝ ըստ ծածկագրերի[50]: Օրինակ՝

[48] United Nations Office on Drugs and Crime. (2016). *International classification of crime for statistical purposes (ICCS)*. Retrieved November 26, 2024, from https://www.unodc.org/documents/data-and-analysis/statistics/crime/ICCS/ICCS_English_2016_web.pdf
[49] United Nations Office on Drugs and Crime. (2016). *International classification of crime for statistical purposes (ICCS)*. Retrieved November 26, 2024, from https://www.unodc.org/documents/data-and-analysis/statistics/crime/ICCS/ICCS_English_2016_web.pdf
[50] United Nations Office on Drugs and Crime. (2016). *International classification of crime for statistical purposes (ICCS)*. Retrieved November 26, 2024, from https://www.unodc.org/documents/data-and-analysis/statistics/crime/ICCS/ICCS_English_2016_web.pdf

03 Գործողություններ, որոնք վնասում են անձի սեռական անձեռնմխելիությունը			
Մակարդակ 02	Մակարդակ 03	Մակարդակ 04	Հանցագործություն
0301	…..	…..	….
0302			Սեռական շահագործում
	03021		Չափահասի սեռական շահագործում
	03022		Երեխայի սեռական շահագործում
		030221	Մանկական պոռնոգրաֆիա
		030222	Մանկական մարմնավաճառություն
		030223	Սեռական ոտնձգություն երեխայի նկատմամբ
		030229	Երեխայի այլ սեռական շահագործում
	03029		Սեռական շահագործման այլ գործողություններ
0309			Սեռական բնույթի այլ վնասակար գործողություններ

ICCS-ի ամբողջական շրջանակը՝ ծածկագրերով և հանցատեսակներով մանրամասն նկարագրությամբ ներկայացված է աղյուսակի տեսքով: Աղյուսակը պարունակում է նաև հատուկ տողեր, որտեղ նշվում է թե տվյալ ծածկագրի ներքո, որ արաքները կարելի է դասակարգել, իսկ որոնք՝ ոչ[51]: Օրինակ՝

020292	Հարկադիր ամուսնություն Ամուսնություն առանց վավերական համաձայնության կամ համաձայնության՝ ահաբեկման, ուժի, խարդախության, հարկադրանքի, սպառնալիքի, խաբեության, թմրամիջոցների կամ ալկոհոլի օգտագործման, իշխանության չարաշահման կամ խոցելի դիրքի հետևանքով:	+	Ներառում է՝ հարկադիր ամուսնություն, երեխայի ամուսնություն
		-	Չի ներառում՝ անչափահասի առևանգումը (02021); մարդու թրաֆիքինգը՝ հարկադիր ամուսնության նպատակով (02044); պատանդ վերցնելը (020222); ստրկություն և շահագործում (0203); և 02029-ում նշված բոլոր բացառությունները

ICCS-ի շրջանակն առաջարկում է հավաքել նաև այլ տվյալներ ինչպիսիք են հանցագործությունից տուժած և հանցագործություն կատարած անձանց տարիքը, սեռը, անչափահասների թիվը, հարաբերությունները, քաղաքացիությունը, գործունեությունը, դրդապատճառը, վայրը, ժամանակահատվածը, զենքի առկայությունը և այլ գործոններ[52]:

ICCS-ի շրջանակը տեղայնացնելու նպատակով անհրաժեշտ է ուսումնասիրել ICCS-ի ծածկագրերն ու դասակարգումները: ՄԱԿ-ի թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակը մշակել է ճանապարհային քարտեզ, որն ուրվագծում է ամենակարևոր քայլերը, որոնք երկրները պետք է հաշվի առնեն ICCS-ը շրջանակն ազգային մակարդակով

[51] United Nations Office on Drugs and Crime. (2016). *International classification of crime for statistical purposes (ICCS)*. Retrieved November 26, 2024, from https://www.unodc.org/documents/data-and-analysis/statistics/crime/ICCS/ICCS_English_2016_web.pdf
[52] ibid

աստիճանաբար տեղայնացնելու նպատակով[53] և UNODC ICCS-ի համադրելի աղյուսակի ձևանմուշը, որտեղ սյուների մի մասն արդեն իսկ լրացված են, իսկ մնացած մասը թողնված է համապատասխան ազգային տեղեկատվության և մետատվյալների մուտքագրման համար[54]:

Այս առումով, առաջարկվում է վերանայել և լրամշակել Մինչդատական վարույթը բնութագրող ցուցանիշների վիճակագրական հաշվետվությունների միասնական ձևերը և դրանց լրացման ու ներկայացման կարգերը հաստատող ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 23-ի N1225-Ն որոշումը[55], որով սահմանվում է ՀՀ հետաքննության և նախաքննության մարմինների կողմից ներկայացվող քննչական աշխատանքի մասին հիմնական տվյալների ամսական, ինչպես նաև կիսամյակային և տարեկան վիճակագրական միասնական հաշվետվության ձևերի լրացման և ներկայացման կարգերը, և հետաքննության և նախաքննության մարմինների կողմից ներկայացվող հանցագործությունների մասին դիմումների և հաղորդումների քննարկման վերաբերյալ կիսամյակային և տարեկան վիճակագրական հաշվետվության միասնական ձևի լրացման ու ներկայացման կարգը: ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 23-ի N1225-Ն որոշման համապատասխանեցումը ՄԱԿ-ի թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի կողմից մշակված վիճակագրական նպատակներով հանցագործությունների միջազգային դասակարգչին կնպաստի հանցագործությունների վերաբերյալ վիճակագրության ներպետական և միջազգային մակարդակով համադրելիության լավարկմանը: Բացի այդ այն կնպաստի ամբողջական վիճակագրական տվյալների ձևավորմանը և հավաքմանը և փաստահեն քաղաքականության, ռազմավարությունների, ծրագրերի մշակմանը:

Ինչպես արդեն նշվել է EIGE-ն լրամշակել է ICCS-ի շրջանակը գենդերային տեսանկյունից: Կանանց նկատմամբ բռնության և ընատնեկան բռնության դեպքերի վերաբերյալ վարչական տվյալների համադրելիությունն ապահովելու համար EIGE -ն առանձնացրել է ICCS-ի կողմից սահմանված կոնկրետ հանցագործություններ (դրանց սահմանումները և ծածկագրերը), այնուհետև տարանջատել դրանք ըստ բռնության տեսակների՝ ֆիզիկական, հոգեբանական, սեռական և տնտեսական: Այսպիսով, EIGE-ն նույնացրել է ICCS-ի այն հանցագործությունները, որոնք վերաբերելի են ֆիզիկական բռնությանը (օրինակ՝ հարձակումը, ազատությունից զրկելը, սպանության փորձը, սպանությունը), հոգեբանական բռնությանը (օրինակ՝ հարկադրանքը, զրպարտությունը կամ վիրավորանքը, ոտնձգությունը, սպառնալիքը, հետամտումը), սեռական բռնությանը (օրինակ՝ բռնաբարությունը կամ սեռական այլ գործողությունները), և տնտեսական բռնությանը (օրինակ՝խնամքի տակ գտնվող անձի անտեսումը, ալիմենտ վճարելուց խուսափելը, անձնական գույքին վնաս պատճառելը)[56]:

---

[53] United Nations Office on Drugs and Crime. (n.d.). *ICCS implementation: Developing a national roadmap*. Retrieved November 26, 2024, from https://www.unodc.org/documents/data-and-analysis/Crime-statistics/ICCS_Implementation_National_Roadmap.pdf

[54] United Nations Office on Drugs and Crime. (n.d.). *International classification of crime for statistical purposes (ICCS)*. Retrieved November 26, 2024, from https://www.unodc.org/unodc/en/data-and-analysis/statistics/iccs.html

[55] Մինչդատական վարույթը բնութագրող ցուցանիշների վիճակագրական հաշվետվությունների միասնական ձևերը և դրանց լրացման ու ներկայացման կարգերը հաստատող ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 23-ի N1225-Ն որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=57085:

[56] European Institute for Gender Equality. (2024). *Methodological Guidance: Administrative data collection on violence against women and domestic violence, Section 2.7*. Retrieved November 26, 2024, from https://eige.europa.eu/e-reader/8076

Ի լրումն վերոգրյալի, EIGE-ն ԵՄ անդամ երկրներից հավաքում է այլ տվյալներ, որոնք տարանջատված են ըստ 13 ցուցիչների: Այսպիսով, վերոնշյալ յուրաքանչյուր ցուցիչի համար տվյալները հավաքվում են ըստ՝ բռնություն գործադրած և բռնության ենթարկված անձանց միջև փոխհարաբերության՝ (1) զուգընկերոջ կողմից կամ (2) ընտանեկան/կենցաղային կամ (3) ցանկացած այլ տեսակի, բռնություն գործադրած և բռնության ենթարկված անձանցի սեռերի, բռնություն գործադրած անձանց թվի, տուժողների թվի, հաղորդված հանցագործությունների/դեպքերի թվի, բռնություն գործադրած, մեղադրանք ներկայացված և դատապարտված անձանց թվի, բռնության տեսակի, ժամանակահատվածի և պաշտպանական որոշումների թվի, ինչը թույլ է տալիս ունենալ վիճակագրություն ոչ միայն ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ, այլ նաև կանանց նկատմամբ բռնության դեպքերի վերաբերյալ[57]: (*Տես՝ Հավելված 1*) Հավաքագրված տվյալների համադրելիությունը բարելավելու համար՝ EIGE-ն թվարկել է 13 ցուցիչներից յուրաքանչյուրի համար հանցագործություններ՝ դրանց համապատասխան ICCS ծածկագրերի հետ միասին:[58]

Վարչական տվյալների վերլուծություն

Ստորև ներկայացված են ՀՀ դատախազության, ՀՀ քննչական կոմիտեի, ՀՀ Ոստիկանության կողմից 2019-2024 թվականների ընթացքում գրանցված ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ վիճակագրությունը[59]: Այն ամփոփվել է վերոնշյալ մեթոդաբանությամբ՝ օգտագործելով ICCS-ի և EIGE-ի հանցագործությունների դասակարգման (առանց ծածկագրերի), խմբավորման և ըստ բռնության տեսակների տարանջատման մոտեցումը: Օրինակ՝

- **Ֆիզիկական բռնություն**՝ 104-րդ հոդված՝ սպանությունը, 112-րդ հոդված՝ դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը, 118-րդ հոդված՝ ծեծը, 121-րդ հոդված՝ անզգուշությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը, 133-րդ հոդված՝ ազատությունից ապօրինի զրկելը,
- **Հոգեբանական բռնություն**՝ 137-րդ հոդված՝ սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքը, 137.1-ին հոդված՝ ծանր վիրավորանքը, 353.1-ին հոդված՝ անհետաձգելի միջամտության որոշումը կամ պաշտպանական որոշումը դիտավորությամբ չկատարելը,
- **Սեռական բռնություն**՝ 139-րդ հոդված՝ սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելը, 141-րդ հոդված՝ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը 16 տարին չլրացած անձի նկատմամբ, 142-րդ հոդված՝ անառակաբարո գործողություններ,
- **Տնտեսական բռնություն**՝ 177-րդ հոդված՝ գողությունը, 185-րդ հոդված՝ գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը[60]:

Սակայն հարկ է նշել, որ որոշ հոդվածների դասակարգումը պահանջում է ավելի մանրամասն տեղեկատվություն, օրինակ՝ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելու հանցագործությունը, որը կարող է լինել թե՛ հոգեբանական, թե՛

[57] ibid
[58] ibid
[59] ՀՀ դատական դեպարտամենտից վիճակագրություն չի ստացվել, իսկ կայքում առկա վիճակագրությունը հնարվոր չէ դասակարգել վերոնշյալ մեթոդաբանությամբ: Ամբողջական վիճակագրությունը ներկայացված է Հավելված 2-ում:
[60] Քանի որ վերլուծության են ենթարկվել 2019-2024 թթ. տվյալները, վերոգրյալ դասակարգումը կարող է ընդգրկում է ՀՀ քրեական նախկին և գործող օրենսգրքերի հոդվածները:

ֆիզիկական բռնություն, կամ երեխային դաստիարակելու պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որը կարող է լինել թե՛ հոգեբանական, թե՛ տնտեսական բռնություն:

Աղյուսակ 1. Դատախազության կողմից ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ տրամադրած վիճակագրությունը 2019-2024 թվականների համար

Բռնության տեսակներ [61]	*Տարեթիվ*					
	2019	**2020**	**2021**	**2022**	**2023**	**2024** [62]
ԸԲ դեպքերով վարույթների թիվը	458	214	556[63]	714	508	-
Ֆիզիկական	394	185	-	550	448	-
Հոգեբանական	21	21	-	127	53	-
Սեռական	17	-	-	6	5	-
տնտեսական	1	-	-	2	1	-
անտեսում	7	-	-	-	-	-
ֆիզիկական կամ հոգեբանական[64]	8	8	-	29	1	-
հոգեբանական կամ տնտեսական	1	-	-	-	-	-
չդասակարգված կամ այլ[65]	1	-	-	-	-	-

Աղյուսակ 2. ՀՀ քննչական կոմիտեի կողմից ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ հրապարակված վիճակագրությունը 2019-2024 թվականների համար[66]

Բռնության տեսակներ	*Տարեթիվ*					
	2019	**2020**	**2021**	**2022**	**2023**	**2024**
ԸԲ դեպքերով վարույթների թիվը	635	730	556	122	343	195
ֆիզիկական	433	494	358	44	231	169
հոգեբանական	118	134	121	1	1	1
սեռական	22	26	14	3	4	5
տնտեսական	3	10	4	3	2	1
անտեսում	17	18	21		-	-
ֆիզիկական կամ հոգեբանական	6	13	23	3	-	-
չդասակարգված կամ այլ	24	35	15	68	105	19

[61] Վիճակագրությունը տրամադրվել են ՀՀ դատախազության կողմից 2024 թ. հունիսի 28-ին ի պատասխան հարցման:
[62] Դատախազության կողմից 2024 թվականի վերաբերյալ վիճակագրություն չի տրամադրվել:
[63] 2021 թվականին 556 հարուցված քրեական գործերը տարանջատված չեն ըստ քանակների:
[64] Այս տվյալները հնարավոր չէ տարանջատել, տարանջատման համար ավելի մանրամասն տեղեկատվություն է պահանջվում:
[65] Այս տվյալները հնարավոր չի եղել դասակարգել:
[66] Վիճակագրության վերաբերյալ տեղեկությունները հավաքվել է ՀՀ քննչական կոմիտե. (2024, Օգոստոսի 14). *Ընթացիկ տարվա առաջին կիսամյակում ՀՀ քննչական կոմիտեում քննվել է ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ 1535 քրեական վարույթ*. Վերցված է 2024 թվականի Նոյեմբերի 26-ին, https://www.investigative.am/news/yntacik-tarva-arajin-kisamyakoum-hh-qnnchakan-komiteoum-qnnvel-e-yntanekan-brnoutyan-depqeri-veraberyal-1535-qreakan-varouyt?fbclid=IwY2xjawEsAXxleHRuA2FlbQIxMAABHfKs1wRdvM4phoJIwfMErWB0s2ytxXYBPOMc42Qnr31pjuDrZpKYbrc9eg_aem_SDLI-EO_jMua9Noal8MzTg : Վերջին անգամ դիտվել է 2024թ. օգոստոսի 1-ին:

Աղյուսակ 3. ՀՀ ոստիկանության կողմից ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ տրամադրած վիճակագրությունը 2019-2024 թվականների համար [67]

Բռնության տեսակներ	*Տարեթիվ*					
	2019	**2020**	**2021**	**2022**	**2023**	**2024** [68]
ԸԲ դեպքերի գրանցված թիվը	526	586	500	260	508	527
ֆիզիկական	504	548	467	201	445	429
հոգեբանական	16	33	32	55	56	86
սեռական	-	-	-	-	5	12
տնտեսական	3	-	1	3	1	-
անտեսում	-	-	-	-	-	-
ֆիզիկական կամ հոգեբանական	3	5	-	1	1	-

Ստացված տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանի Հանրապետությունում ամենատարածված ընտանեկան բռնության տեսակներն են՝ ֆիզիկականը, այնուհետև՝ հոգեբանականը, սեռականը և տնտեսականը: Ընտանիքում կատարված հանցագործություններից մեծ մասը կատարվել է ամուսնու կողմից կնոջ նկատմամբ, իսկ գրանցված ընտանեկան բռնության դեպքերով հանցագործությունների գերակշռող մասը կատարվել է Երևանում (Հավելված 2-ը):

ՀՀ դատախազության, ՀՀ քննչական կոմիտեի, ՀՀ Ոստիկանության կողմից՝ 2019-2024 թվականների ընթացքում գրանցված ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ ամբողջական և մանրամասն վիճակագրությունն ըստ տարեթվերի, որն ամփոփվել է օգտագործելով ICCS-ի և EIGE-ի հանցագործությունների դասակարգման (առանց ծածկագրերի), խմբավորման և ըստ բռնության տեսակների տարանջատման մեթոդաբանությամբ ներկայացված է սույն հետազոտության Հավելված 2-ում:

Գլուխ II. Կոնվենցիայի շրջանակով սահմանված բռնության տեսակների համեմատությունը ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածների հետ

Հոգեբանական բռնությունը

Հոդված 33. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական կամ այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի քրեականացվեն դիտավորությամբ շարունակաբար կատարվող այն գործողությունները, որոնք հարկադրանքի կամ սպառնալիքների միջոցով լրջորեն խախտում են մեկ այլ անձի հոգեբանական անձեռնմխելիությունը:

«Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի» Եվրոպայի Խորհրդի կոնվենցիա

[67] Տվյալները տրամադրվել են ՀՀ ՆԳՆ ոստիկանության ծառայության կողմից:
[68] Տվյալները տրամադրվել են մինչև 2024 թվականի հունվար-մայիս ամիսները:

Վերոգրյալ հոդվածով քրեականացվում է ցանկացած դիտավորյալ վարքագիծ, որը հարկադրանքի կամ սպառնալիքների միջոցով լրջորեն խաթարում է այլ անձի հոգեբանական անձեռնմխելիությունը: Հանցագործության շրջանակը սահմանափակվում է դիտավորյալ վարքագծով, որը տարբեր միջոցներով և մեթոդներով լրջորեն խարխլում և վնասում է անձի հոգեբանական անձեռնմխելիությունը: Որպեսզի վարքագիծը դիտարկվի վերոգրյալ հոդվածի շրջանակներում, պետք է կիրառվի հարկադրանք կամ սպառնալիք: Այս դրույթը վերաբերում է վարքագծի դրսևորման, որը տեղի է ունենում ժամանակի ընթացքում՝ ընտանիքի ներսում կամ դրանից դուրս, և ոչ թե առանձին դեպքին: Այնուամենայնիվ, այն կարող է տեղի ունենալ նաև ցանկացած այլ միջավայրում, օրինակ՝ աշխատավայրում կամ դպրոցում[69]:

Կանանց նկատմամբ թվային տիրույթում բռնության բոլոր ձևերն ունեն հոգեբանական ազդեցություն և կարող են դասակարգվել որպես առցանց և տեխնոլոգիապես օժանդակված հոգեբանական բռնություն: Առցանց հոգեբանական բռնությունը կարող է դրսևորվել նաև ահաբեկման, սպառնալիքի, վիրավորանքի, ամոթանքի, զրպարտության, ինքնասպանության կամ ինքնավնասման դրդման ձևերով[70]:

ԸԲ օրենքի համաձայն, հոգեբանական բռնություն է անձին հոգեբանական ճնշում կամ հոգեկան տառապանք պատճառելը, ներառյալ՝ անձի ինքնագնահատականի և արժանապատվության պարբերաբար նվաստացումը, երեխաների, ընկերների և հարազատների հետ շփումները արգելելը կամ դրանք խոչընդոտելը, ինչպես նաև վերահսկողություն կիրառելը, ինքնավնասման կամ ինքնասպանության սպառնալիքով ճնշում գործադրելը, ֆիզիկական կամ տնտեսական բռնություն գործադրելու, տնային կենդանիներին վնասելու սպառնալիքը, դիտավորությամբ այնպիսի գործողություններ կատարելը, որոնք անձի մեջ հիմնավոր վախ են հարուցում իր կամ հարազատի, զուգընկերոջ կամ ընկերոջ, կամ խնամքի տակ գտնվողի անվտանգության համար: Ինչպես նաև, ՀՀ քրեական օրենսգրքի իմաստով՝ հոգեկան ներգործությունը կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը, ինքնասպանության հասցնելը կամ հակելը, հղիության արհեստական ընդհատմանը (աբորտ կատարելը) կամ ամլացմանը հարկադրելը, հետամտելը[71]:

ՀՀ քրեական նախկին օրենսգրքի 119-րդ (Ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը) և 137-րդ (Սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքը), 110-րդ (Ինքնասպանության հասցնելը) և 111-րդ (Ինքնասպանության հակելը) հոդվածները մասամբ համապատասխանում են Կոնվենցիայի 33-րդ հոդվածի պահանջներին:

Ինչ վերաբերում է ՀՀ քրեական նոր օրենսգրքին, ապա Կոնվենցիայի 33-րդ հոդվածի պահանջներին համապատասխանում եմ՝ 194-րդ (Հոգեկան ներգործությունը) և 196-րդ (Ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը) հոդվածները: Սույն հոդվածների դեպքում, որպես ծանրացուցիչ հանգամանք է դիտվում հղի կնոջ, անչափահասի, հանցավորից նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվողի նկատմամբ, կամ մերձավոր ազգականի, զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կողմից, կամ սեռով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով կատարված արարքը: Հոգեկան ներգործությունը բնութագրվում է սպառնալիքներով, որոնք

[69] Council of Europe. (2011). Council of Europe Convention on preventing and combating violence against women and domestic violence (Istanbul Convention) and explanatory report. Retrieved November 26, 2024, from https://rm.coe.int/ic-and-explanatory-report/16808d24c6
[70] Council of Europe. (n.d.). *GREVIO General Recommendation No. 1*. Retrieved November 26, 2024, from https://rm.coe.int/grevio-general-recommendation-no1-arm-2758-2928-8712-1/1680ae3a2e
[71] Տես՝ ԸԲ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 3-ին ենթակետը, 2017թ. https://www.arlis.am/documentview.aspx?docid=194267

վերաբերում են սպանության, առողջությանը վնաս պատճառելու[72], խոշտանգման, սեռական ազատության կամ անձեռնմխելիության դեմ ուղղված հանցանք կատարելու, առևանգելու, ազատությունից ապօրինի զրկելու, խոշոր կամ առանձնապես խոշոր չափի գույք ոչնչացնելու իրավիճակին[73]:

Հոգեբանական բռնության դեպքում կարող են կիրառելի լինել նաև ՀՀ նոր քրեական օրենսգրքի ՝ 162-րդ (Ինքնասպանության հասցնելը), 163-րդ (Ինքնասպանության հակելը), 164-րդ (Ինքնասպանությանը նպաստելը), 250-րդ (Ծնողական իրավունքներից հրաժարվելուն հակելը կամ հարկադրելը), և 260-րդ (Գույքային վնաս պատճառելը սպառնալիքի կամ բռնություն գործադրելու միջոցով) հոդվածները:

ԵԽ Կոնվենցիա	*ՀՀ քրեական նոր օրենսգրքի հոդվածներ*
33-րդ հոդվածը՝ հոգեբանական բռնությունը	194-րդ հոդվածը՝ հոգեկան ներգործությունը, 196-րդ հոդվածը՝ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը, 162-րդ հոդվածը՝ ինքնասպանության հասցնելը, 163-րդ հոդվածը՝ ինքնասպանության հակելը, 164-րդ հոդվածը՝ ինքնասպանությանը նպաստելը, 250-րդ հոդվածը՝ ծնողական իրավունքներից հրաժարվելուն հակելը կամ հարկադրելը, 260-րդ հոդվածը՝ գույքային վնաս պատճառելը սպառնալիքի կամ բռնություն գործադրելու միջոցով

Այս ցանկը սպառիչ լինել չի կարող, հետևաբար ցանկալի է այն ընդլայնել և որպես հոգեկան ներգործություն դիտարկել նաև որդեգրման գաղտնիք հրապարակելու, ալիմենտ (ապրուստավճար) վճարելուց խուսափելու և ծնողների կամ այլ մերձավոր ազգականների և երեխայի միջև տեսակցության իրականացման խոչընդոտելու սպառնալիքները: Խնդրահարույց է նաև այն հանգամանքը, որ վերոնշյալ հոդվածները չեն ներառում տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաների (այսուհետ՝ՏՀՏ) միջոցով կատարված արարքները: Հետևաբար, անհրաժեշտ է, լրամշակել դրանք, նշելով, որ տվյալ արարքները կարող են իրականացվել նաև ՏՀՏ-ի միջոցով:

[72] Անկախ ծանրության աստիճանից՝ ի տարբերություն նախորդ գործող քրեական օրենսդրությանը:
[73] Խոշոր չափ է համարվում 500.000 ՀՀ դրամը գերազանցող և 5 միլիոն ՀՀ դրամը չգերազանցող գումարը (արժեքը), իսկ առանձնապես խոշոր չափ է համարվում 5 միլիոն ՀՀ դրամը գերազանցող գումարը (արժեքը):

Հետամտելը

Հոդված 34. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական կամ այլ անհրաժեշտ միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի քրեականացվեն մեկ այլ անձի դեմ դիտավորությամբ շարունակաբար կատարվող սպառնալից գործողությունները, որոնք այդ անձի մոտ վախ են առաջացնում սեփական անվտանգության համար:

Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի Եվրոպայի Խորհրդի կոնվենցիա

Ստամբուլյան կոնվենցիան սահմանում է հետամտելը որպես «մեկ այլ անձի դեմ դիտավորությամբ շարունակաբար կատարվող սպառնալից գործողություններ, որոնք այդ անձի մոտ վախ են առաջացնում սեփական անվտանգության համար»: Սպառնալից գործողությունները կարող է դրսևորվել մեկ այլ անձին շարունակաբար հետապնդելու (ֆիզիկապես կամ առցանց), անցանկալի հաղորդակցության մեջ ներգրավվելու միջոցով, անձի գույքը փչացնելով կամ առցանց կեղծ տեղեկություններ տարածելը և այլն: Սպառնալից վարքագիծ պարունակող ցանկացած արարք պետք է կատարվի դիտավորությամբ, պարբերաբար և վախի զգացողություն ձևավորելու նպատակով[74]:

Կանանց նկատմամբ թվային բռնության GREVIO-ի թիվ 1 ընդհանուր հանձնարարականի համաձայն՝ թվային ոլորտում հետամտելու պրակտիկան ներառում է այնպիսի արարքներ, ինչպիսին են սպառնալիքները, հեղինակությանը վնաս պատճառելը, տուժողի մասին անձնական տեղեկատվության մշտադիտարկումը և հավաքումը, անձնական տվյալների յուրացումը և այլ: Այն սովորաբար ներառում է տուժողին առցանց հսկելու կամ լրտեսելու, նրա էլեկտրոնային նամակները և հեռախոսը, գաղտնաբառերը գողանալը, լրտեսող ծրագրեր տեղադրելու կամ օգտահաշիվները հափշտակելու միջոցով տուժողի անձնական տարածք մուտք գործելը[75]:

«*Բուտուրուգան ընդդեմ Ռումինիայի*»[8] բողոքի քննությունը ՄԻԵԴ-ի կողմից կիբերբռնության առաջին գործն է: Դիմումատուն պնդում էր, որ խախտվել են ՄԻԵԿ-ի 3-րդ և 8-րդ հոդվածներով նախատեսված իր իրավունքները: Տվյալ գործով, ՄԻԵԴ-ը նշում է, որ կիբերբուլինգը/կիբերհարձակումը ներկայումս ճանաչվում է որպես կանանց նկատմամբ բռնության ձև և կարող է լինել տարատեսակ ու ներառել՝ կիբեր գաղտնիության խախտում, ներխուժում՝ անձի համակարգիչ, անձնական տվյալների և լուսանկարների հավաքագրում, տարածում և դրանց շահարկում: Ընտանեկան բռնության համատեքստում կիբերհսկողությունը հաճախ իրականացվում է անձի զուգընկերոջ կողմից: ՄԻԵԴ-ն ընդունում է դիմումատուի փաստարկն առ այն, որ այնպիսի գործողությունները, ինչպիսիք են զուգընկերոջ նամակագրության ապօրինի մշտադիտարկումը, մուտքը համակարգչին կամ պահպանումը, կարող են հաշվի առնվել ներպետական համապատասխան մարմինների կողմից՝ ընտանեկան բռնության դեպքերը քննելիս[76]: ՄԻԵԴ-ը նշում է, որ դիմումատուն պնդել է, որ իր նախկին ամուսինն ապօրինի մուտք է գործել դիմումատուի էլեկտրոնային օգտահաշիվներին, ներառյալ Facebook-ի օգտահաշիվ, և պատճենել է նրա անձնական զրույցները, փաստաթղթերը և լուսանկարները, ինչպես նաև էլեկտրոնային տվյալների և

[74] Council of Europe. (2011). Council of Europe Convention on preventing and combating violence against women and domestic violence (Istanbul Convention) and explanatory report. Retrieved November 26, 2024, from https://shorturl.at/rLyNX
[75] Council of Europe. (n.d.). *GREVIO General Recommendation No. 1*. Retrieved November 26, 2024, from https://shorturl.at/jceBd
[76] European Court of Human Rights. (n.d.). *Case of Buturugă v. Romania (Application no. 56867/15)*. Retrieved November 26, 2024, from https://hudoc.echr.coe.int/eng?i=001-201342

փաստաթղթերի մի ամբողջ շարք, որոնք չեն սահմանափակվում սոցիալական ցանցերում նրա հրապարակած տվյալներով: Հետևաբար, ներպետական դատարանի այն եզրակացությունը, որ խնդրո առարկա տվյալները հանրությանը հասանելի են եղել, խնդրահարույց է, քանի որ ներպետական դատարանները չեն իրականացրել դիմումատուի պնդումների էական քննություն՝ նախքան համապատասխան տվյալներն ու հաղորդումներն այդ կերպ դասակարգելը: Հետևաբար, դիմումատուի պնդումներն առ այն, որ իր նախկին ամուսինն ապօրինի գաղտնալսել, դիտել և պահպանել է իր էլեկտրոնային հաղորդակցությունները, ներպետական դատարանների կողմից չեն քննվել ըստ էության: Նրանք դատավարական միջոցներ չեն ձեռնարկել ապացույցներ հավաքելու համար, որոնք հնարավորություն կստեղծեին պարզել փաստերի իսկությունը կամ դրանց իրավական դասակարգումը: Հետևաբար, գործի քննությունը ձևական բնույթ է կրել՝ հերքելով դիմումատուի կողմից արդեն իսկ իրենց ուշադրությանն արժանացած ընտանեկան բռնության դեպքերի հետ որևէ առնչություն, և, հաշվի չեն առել ընտանեկան բռնության բազմաթիվ այլ ձևերը:

Հետամտելը քրեականացված է մի շարք ԵՄ երկրներում, այդ թվում, Խորվաթիայում, Ավստրիայում, Չեխիայում, Գերմանիայու, Լիտվայում, Լեհաստանում, Շվեդիայում[77]:

Համաձայն ԸԲ օրենքի՝ հետամտելը համարվում է հոգեբանական բռնության ձև[78]:

ՀՀ քրեական նախկին օրենսգիրքը հետամտելու համար իրավակարգավորումներ չի նախատեսում: Սակայն, որոշ հոդվածներ մասամբ կարող են կիրառելի լինել բռնության այս ձևի դեպքում: Մասնավորապես, ՀՀ քրեական նախկին օրենսգրքի 119-րդ հոդվածը՝ անձին դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը, կամ 137-րդ հոդվածը՝ սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիքը:

ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած նորամուծություններից է 196.1-ին հոդվածը, որի համաձայն հետամտելը՝ անձին հետևելը, տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներ օգտագործելով, նրա բնակության, աշխատանքի կամ ուսման, զբաղմունքի վայր այցելելու միջոցով կամ այլ եղանակով անցանկալի հաղորդակցության մեջ ներգրավելը կամ ներգրավելու փորձ կատարելը, անձնական իրերի վրա հետքեր թողնելը, անձի տվյալներով առցանց հաշիվներ բացելը, եթե այդ արարքը կատարվել է պարբերաբար և անձի մեջ վախ կամ անհանգստություն է առաջացրել իր կամ իր մերձավորի անվտանգության համար կամ ստիպել է էապես փոխել իր կենսակերպը կամ այն փոխելու իրական անհրաժեշտություն է առաջացրել:

Սույն արարքը պատժվում է տուգանքով՝ **քսանապատիկից հիսնապատիկի չափով**, կամ հանրային աշխատանքներով՝ **երկու հարյուրից երկու հարյուր յոթանասուն ժամ** տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով:

Իսկ եթե այն կատարվել է՝ օրինակ, հղի կնոջ նկատմամբ կամ անչափահասի նկատմամբ կամ մերձավոր ազգականի, զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կողմից՝ **պատժվում է ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:**

---

[77] European Institute for Gender Equality. (2019). *Legal definitions in the EU member states: Gender-based violence*. Retrieved November 26, 2024, from https://shorturl.at/0rV92

[78] ԸԲ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ ենթակետ, 2017 թ,, https://www.arlis.am/documentview.aspx?docid=194267

Սակայն պետք է ուշադրություն դարձնել, որպեսզի *առցանց կամ թվային միջոցներով կամ թվային ոլորտում իրականացված վերոգրյալ արարքը* (cyber stalking) *հստակ արտացոլված լինի ընդհանուր վիճակագրական տվյալներում:*

ԵԽ Կոնվենցիա	***ՀՀ քրեական նոր օրենսգրքի հոդվածներ***
34-րդ հոդվածը՝ հետամտելը	196.1-ին հոդվածը՝հետամտելը

Հետամտելու վերաբերյալ վիճակագրական տվյալներ առկա չեն, ինչը կարող է պայմանավորված լինել այն հանգամանքով, որ տվյալ հոդվածն ուժի մեջ է մտել և կիրառելի է 2024թ.-ի հուլիսի 1-ից:

Ֆիզիկական բռնությունը

Հոդված *35.* Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական կամ այլ միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի քրեականացվեն մեկ այլ անձի դեմ դիտավորությամբ կատարվող ֆիզիկական բռնության գործողությունները:

«Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի» Եվրոպայի Խորհրդի կոնվենցիա

Տվյալ հոդվածով քրեականացվում է այլ անձի նկատմամբ ֆիզիկական բռնության՝ դիտավորությամբ կատարված ցանկացած արարք՝ անկախ այն բանից, թե ինչ հանգամանքներում է այն կատարվել: **«Ֆիզիկական բռնություն»** եզրույթը վերաբերում է այն մարմնական վնասվածքին, որը հասցվել է անմիջական և անօրինական ֆիզիկական ուժ գործադրելու հետևանքով: Այն ներառում է նաև այն բռնությունը, որի հետևանքով անձը մահացել է[79]:

ՄԻԵԴ-ը տարբեր համատեքստերում նշել է, որ մասնավոր կյանքը՝ ներառում է անձի ֆիզիկական և հոգեբանական անձեռնմխելիությանը: Համաձայն ՄԻԵԿ-ի 8-րդ հոդվածի՝ պետությունները պարտավոր են պաշտպանել անձի ֆիզիկական և բարոյական անձեռնմխելիությունն այլ անձանցից: Այս պարտավորությունը վերաբերելի է նաև երեխաներին և ընտանեկան բռնությունից տուժած անձանց առնչվող գործերին: Նման գործերով ՄԻԵԴ հաճախ արձանագրում է ՄԻԵԿ-ի 2-րդ և 3-րդ հոդվածների խախտում, սակայն, 8-րդ հոդվածը նույնպես կիրառվում է, քանի որ բռնությունը սպառնալիք է անձի ֆիզիկական անձեռնմխելիությանը և անձնական կյանքի իրավունքին և այդ նպատակով պետությունները պետք է ստեղծեն և կիրառեն համապատասխան իրավական դաշտ[80]: Պետությունը նաև կրում է երեխաներին պաշտպանելու դրական պարտավորություն, որպեսզի վերջիններս իրենց ընտանիքում բռնության ականատես չդառնան[81]:

Թիվ 2024/1385 ԵՄ հրահանգի համաձայն՝ որպես ծանրացուցիչ հանգամանք է դիտվում, ոչ միայն այն արարքը, որը կատարվել է երեխայի հանդեպ, այլ նաև այն արարքը, որը կատարվել է երեխայի ներկայությամբ: Վերջինս պայմանավորված է այն հանգամանքով, որ ընտանեկան բռնության ականատես լինելը կարող է կործանարար լինել երեխայի համար՝ նրա խոցելիության պատճառով: Երեխան, ով ականատես է լինում ընտանեկան բռնության ընտանիքում կամ ընտանեկան միավորում, սովորաբար ունենում է անմիջական հոգեբանական և էմոցիոնալ վնաս, որն ազդում է նրանց զարգացման վրա և մեծացնում է ֆիզիկական և հոգեկան հիվանդությունների վտանգը՝ ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ հեռանկարում: Ընդունելով այն հանգամանքը, որ ընտանեկան բռնության ականատես լինելու հետևանքով անմիջականորեն տուժած երեխաներն իրենք են ընտանեկան բռնության զոհ հանդիսանում, այս քայլը կարևոր է ընտանեկան բռնությունից երեխաների պաշտպանության համար[82]:

ԸԲ օրենքի համաձայն՝ ֆիզիկական բռնություն է համարվում անձի կամքին հակառակ՝ ֆիզիկական բնույթի արարքը, ներառյալ՝ բժշկական, այդ թվում՝ հոգեբուժական բնույթի

[79] Council of Europe. (2011). Council of Europe Convention on preventing and combating violence against women and domestic violence (Istanbul Convention) and explanatory report. Retrieved November 26, 2024, from https://shorturl.at/7Mi8A

[80] Սանդրա Ջանկովիչն ընդդեմ Խորվաթիայի, 38478/05, 2009 թ. մարտի 5, ՄԻԵԴ, 45-րդ կետը:

[81] Երեմիան ընդդեմ Մոլդովայի Հանրապետության, 3564/11, 2013 թ, մայիսի 28:

[82] Directive (EU) 2024/1385 of the European Parliament and of the Council of 14 May 2024 on combating violence against women and domestic violence, para 13 and article 11 (d), 2024, https://shorturl.at/birxw

միջամտությունների ենթարկվելուն պարտադրելը, բժշկական օգնություն ստանալուց զրկելը կամ նման օգնությունը խոչընդոտելը, ֆիզիկական ցավ պատճառելը, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի իմաստով՝ սպանությունը, առողջությանը ծանր, միջին ծանրության կամ թեթև վնաս պատճառելը, ազատությունից ապօրինի զրկելը, ֆիզիկական ներգործությունը, ֆիզիկական ուժեղ ցավ պատճառելը, վտանգի մեջ թողնելը, մարդուն առևանգելը[83]:

ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն, բռնություն է համարվում այլ մարդու նկատմամբ նրա կամքին հակառակ կամ կամքն անտեսելով, դիտավորյալ ֆիզիկական ներգործություն գործադրելը կամ այդ եղանակով նրան ֆիզիկական վնաս պատճառելը[84]: Հանցանքը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե անձը գիտակցում է իր արարքի այն փաստական հանգամանքները, որոնք տվյալ հանցակազմի հատկանիշ են: Դիտավորությունը լինում է ուղղակի կամ անուղղակի: Հանցանքը համարվում է ուղղակի դիտավորությամբ կատարված, եթե անձը գիտակցում է իր արարքի այն փաստական հանգամանքները, որոնք հանցակազմի հատկանիշ են, և այդ արարքը կատարելը նրա նպատակն է կամ նպատակին հասնելու միջոցը: Հանցանքը համարվում է անուղղակի դիտավորությամբ կատարված, եթե անձը գիտակցում է իր արարքի այն փաստական հանգամանքները, որոնք հանցակազմի հատկանիշ են, ու թեև այդ արարքը կատարելը և տվյալ հանցանքն իրականացնելը նրա նպատակը չէ, այնուամենայնիվ կատարում է դա[85]:

Թե՛ նախկին և թե՛ ներկա ՀՀ քրեական օրենսգրքերը ներառում են համապարփակ քրեական պատասխանատվություն «ֆիզիկական բռնության» համար՝ սկսած սպանությունից մինչև առողությանը թեթև վնաս պատճառելը: ՀՀ քրեական նախկին օրենսգրքով «դիտավորությամբ կատարվող ֆիզիկական բռնության գործողություններին» կիրառելի հոդվածներն են՝ 104-րդ հոդվածը՝ սպանությունը, 105-րդ հոդվածը՝ հոգեկան խիստ հուզմունքի վիճակում կատարված սպանությունը, 106-րդ հոդվածը՝ մոր կողմից նորածին երեխայի սպանությունը, 112-դ հոդվածը՝ դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը, 113-րդ հոդվածը՝ դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը, 117-րդ հոդվածը՝ դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելը, 118-րդ հոդվածը՝ ծեծը, 119-րդ հոդվածը՝ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը:

ՀՀ քրեական նոր օրենսգրքով «դիտավորությամբ կատարվող ֆիզիկական բռնության գործողություններին» կիրառելի հոդվածներն են՝155-րդ հոդվածը՝ սպանությունը, 156-րդ հոդվածը՝ հոգեկան խիստ հուզմունքի վիճակում կատարված սպանությունը, 157-րդ հոդվածը՝ ծնունդկանի կամ ծնունդաբերի կողմից երեխայի սպանությունը, 166 -րդ հոդվածը՝ առողջությանը ծանր վնաս պատճառելը, 167-րդ հոդվածը՝ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը, 171-րդ հոդվածը՝ առողջությանը թեթև վնաս պատճառելը, 182-րդ հոդվածը՝ վտանգի մեջ թողնելը, 191-րդ հոդվածը՝ մարդուն առևանգելը , 192-րդ հոդվածը՝ ազատությունից ապօրինի զրկելը, 195-րդ հոդվածը՝ ֆիզիկական ներգործությունը, 196 -րդ հոդվածը՝ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը:

ԵԽ Կոնվենցիա	***ՀՀ քրեական նոր օրենսգրքի հոդվածներ***

[83] ԸԲ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասին 1-ին ենթակետ, 2017 թ,,
https://www.arlis.am/documentview.aspx?docid=194267
[84] ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ ենթակետ, 2021թ.,
https://www.arlis.am/documentview.aspx?docid=194397
[85] ՀՀ քրեական օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-3-րդ մասեր, 2021թ.,
https://www.arlis.am/documentview.aspx?docid=194397

35-րդ հոդվածը՝ Ֆիզիկական բռնությունը	155-րդ հոդվածը՝ սպանությունը, 156-րդ հոդվածը՝ հոգեկան խիստ հուզմունքի վիճակում կատարված սպանությունը, 157-րդ հոդվածը՝ ծննդկանի կամ ծննդաբերի կողմից երեխայի սպանությունը, 166 -րդ հոդվածը՝ առողջությանը ծանր վնաս պատճառելը, 167-րդ հոդվածը՝ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը, 171-րդ հոդվածը՝ առողջությանը թեթև վնաս պատճառելը, 182-րդ հոդվածը՝ վտանգի մեջ թողնելը, 191-րդ հոդվածը՝ մարդուն առևանգելը, 192-րդ հոդվածը՝ ազատությունից ապօրինի զրկելը, 195-րդ հոդվածը՝ ֆիզիկական ներգործությունը, 196 -րդ հոդվածը՝ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը

Թե՛ նախկին և թե՛ նոր օրենսգրքերով որպես ծանրացուցիչ հանգամանք են դիտվում հղի կնոջ, անչափահասի, հանցավորից նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվողի նկատմամբ կատարված արարքը: Բացի այդ, ՀՀ քրեական նոր օրենսգրքով ծանրացնող հանգամանքները ենթարկվել են որոշակի փոփոխությունների և ավելացել են այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են՝ մերձավոր ազգականի[86], զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կողմից կամ, օրինակ, սեռով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով:

ՀՀ քրեական նոր օրենսգիրքը երեխայի նկատմամբ ֆիզիկական բռնության գործադրումը նախատեսել է որպես արարքի ծանրացնող հանգամանք: Մասնավորապես, անչափահասի նկատմամբ ծանրացնող հանգամանքն առկա է վերոնշյալ բոլոր հոդվածներում, միայն 157-րդ հոդվածն է, որ նման ծանրացնող հանգամանք չի նախատեսում, սակայն դա տրամաբանական է, քանի որ ծննդկանի կամ ծննդաբերի կողմից երեխայի սպանության հանցակազմում տուժող կարող է լինել մինչև 3 ամսական երեխան:

Անդրադառնալով երեխայի ներկայությամբ հանցագործությունների կատարմանը՝ ՀՀ քրեական օրենսգիրքը 71-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում սահմանել է, որ քրեական պատասխանատվությունը կամ պատիժը ծանրացնող հանգամանքներից է ի թիվս այլոց նաև դիտավորյալ հանցանքն անչափահասի հետ համատեղ կամ հանցավորի արարքի բնույթը գիտակցող անչափահասի ներկայությամբ կատարելը, եթե հանցավորը գիտակցում է, որ անձն անչափահաս է: Այս կարգավորումն ուղղակի բխում էր միջազգային պարտավորությունների կատարման նախապայմանից:
Ինչ վերաբերում է ֆիզիկական բռնության վիճակագրությանը, ապա այն թվով ամենամեծ և ամենատարածված բռնության տեսակն է:

[86] ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ ենթակետի համաձայն՝ մերձավոր ազգական է համարվում անկախ համատեղ բնակության հանգամանքից՝ ամուսինը, նախկին ամուսինը, ծնողը, այդ թվում՝ խորթ ծնողը, որդեգրող ծնողը, խնամատար ծնողը, երեխան (այդ թվում՝ որդեգրված, խորթ, հոգեզավակ), եղբայրը, քույրը (այդ թվում՝ խորթ), պապը, տատը, թոռը, որդեգրող ծնողի կամ խնամատար ծնողի ամուսինը կամ նախկին ամուսինը, ամուսնու կամ նախկին ամուսնու ծնողը, ինչպես նաև ամուսնու կամ նախկին ամուսնու ծնողի համար՝ փեսան կամ հարսը: Ամուսին կամ նախկին ամուսին է համարվում նաև փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող կամ գտնված անձը, իսկ 19-րդ ենթակետի համաձայն՝ մերձավորը՝ յուրաքանչյուր ոք, որի կյանքը, առողջությունը, շահերը կամ բարեկեցությունը կարևոր են անձի համար՝ պայմանավորված այդ անձի հետ ունեցած անձնական հարաբերություններով:

Սեռական բռնությունը, այդ թվում՝ բռնաբարությունը

Հոդված 36.
1. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական կամ այլ անհրաժեշտ բոլոր միջոցները՝ դիտավորությամբ կատարվող հետևյալ գործողությունները քրեականացնելու համար՝
ա. առանց անձի համաձայնության, վագինալ, անալ և օռալ ճանապարհով թափանցելու միջոցով, մարմնի որևէ մասի կամ առարկայի միջոցով սեռական բնույթի գործողություն կատարելը;
բ. առանց անձի համաձայնության, սեռական բնույթի այլ գործողություն կատարելը;
գ. անձին, առանց նրա համաձայնության, երրորդ անձի հետ սեռական բնույթի գործողություններ կատարելուն կամ ենթարկվելուն ստիպելը;
2. Համաձայնությունը պետք է տրվի կամովին՝ անձի ազատ կամահայտնության հիման վրա, որպիսին պետք է գնահատվի վերաբերելի բոլոր հանգամանքներն իրենց ամբողջության մեջ դիտարկելու արդյունքում։
3. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական կամ այլ անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի սույն հոդվածի 1- ին մասի դրույթները կիրառելի լինեն նաև այն արարքների նկատմամբ, որոնք կատարվում են ներկա կամ նախկին ամուսնու կամ զուգընկերոջ նկատմամբ՝ ներպետական իրավունքում դրանց տրված իմաստով։

«Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի» Եվրոպայի Խորհրդի կոնվենցիա

Ստամբուլյան կոնվենցիայի բացատրական զեկույցում հղում է կատարվում ՄԻԵԴ-ի 2003 թվականի դեկտեմբերի 4-ի *Մ.Կ.-ն ընդդեմ Բուլղարիայի* վճռին, որում Դատարանը նշել է, որ «համոզված է, որ սեռական հանցագործությունների հետապնդման նկատմամբ ցանկացած կոշտ մոտեցում, ինչպիսին է, ցանկացած պարագայում, ֆիզիկական դիմադրության ապացույցի պահանջը վտանգում է անպատիժ թողնել բռնաբարության որոշ տեսակներ՝ այդ կերպ վտանգելով անձի սեռական անձեռնմխելիության արդյունավետ պաշտպանությունը։ Այդ ոլորտում ժամանակակից չափանիշներին և միտումներին համապատասխան՝ ՄԵԻԿ-ի 3-րդ և 8-րդ հոդվածներով սահմանված՝ անդամ պետությունների դրական պարտավորությունները պետք է դիտվեն որպես այնպիսի պարտավորություններ, որոնցով պահանջվում է պատժել առանց համաձայնության ցանկացած սեռական գործողություն և արդյունավետ հետապնդում իրականացնել դրա նկատմամբ, այդ թվում՝ տուժողի կողմից ֆիզիկական դիմադրության բացակայության պարագայում» (§ 166)։ Դատարանը նաև նշում է հետևյալը՝ «Անկախ օրենսդիրի կողմից ընտրված կոնկրետ ձևակերպումից՝ մի շարք երկրներում առանց համաձայնության սեռական գործողությունների նկատմամբ հետապնդումը, ցանկացած պարագայում, գործնականում իրականացվում է օրենքով սահմանված համապատասխան եզրույթների մեկնաբանությամբ («պարտադրանք», «ճնշում», «սպառնալիք», «խորամանկություն», «անակնկալ» կամ այլ)», ինչպես նաև ապացույցների համատեքստում զգայուն գնահատման միջոցով» (§ 161)։ Ստամբուլյան կոնվենցիայով պահանջվում է նախատեսել քրեական այնպիսի օրենսդրություն, որն ընդգրկում է «ա»-«գ» կետերում թվարկված սեռական գործողություններից ցանկացածի վերաբերյալ տրված կամավոր համաձայնության բացակայության գաղափարը։ 2-րդ պարբերությամբ սահմանվում է միայն այն, որ համաձայնությունը պետք է տրվի կամավոր։ Կողմերը պետք է երաշխավորեն, որ սեռական բռնության և բռնաբարության հանցագործությունները կիրառելի լինեն բոլոր ոչ փոխհամաձայնեցված սեռական գործողությունների նկատմամբ՝ անկախ բռնություն գործադրած և բռնությունից տուժած

անձանց միջև եղած հարաբերություններից: Կարևոր է ապահովել, որ բացառություններ չլինեն այն դեպքում, երբ հանցանքը կատարվել է ներկայիս կամ նախկին ամուսնու կամ զուգընկերոջ նկատմամբ[87]:

ԸԲ օրենքի համաձայն՝ սեռական բռնություն է՝ անձի կամքին հակառակ սեքսուալ բնույթի գործողությունները, այդ թվում՝ անձի սեռական օրգաններին և մարմնի մասերին անցանկալի հպումները, անձին երրորդ անձի հետ սեքսուալ բնույթի գործողություններում ներգրավելը, կուսության ստուգումը, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի իմաստով՝ սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունները[88]:

ՀՀ քրեական նախկին օրենսգրքի 138 -142-րդ հոդվածները պատասխանատվություն էին սահմանում անձի սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունների համար, մասնավորապես, 138-րդ հոդվածը՝ բռնաբարության, 139-րդ հոդվածը՝ սեքսուալ բնույթի բռնի գործողությունների, 140-րդ հոդվածը՝ սեքսուալ բնույթի բռնի գործողություններին հարկադրելու, 141-րդ հոդվածը՝ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը տասնվեց տարին չլրացած անձի հետ, և 142-րդ հոդվածը՝ անառակաբարո գործողությունների համար:

Սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունները՝ ՀՀ քրեական նոր օրենսգրքով ենթարկվել են փոփոխությունների և նախատեսված են այդ օրենսգրքի 198-րդ-202-րդ հոդվածներում: Մասնավորապես, նոր օրենսգրքով միավորվել են բռնաբարության (ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 138-րդ հոդված) և սեքսուալ բնույթի բռնի գործողությունների (ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 139-րդ հոդված) հանցակազմերը: Այդ երկու հանցագործությունները ներկայացվել են ՀՀ քրեական նոր օրենսգրքի 198-րդ հոդվածով, որը ոչ միայն այդ երկու հանցակազմերի միավորումն է, այլ նաև ընդլայնել է բռնի գործողությունների դրսևորումները՝ սեքսուալ բնույթի բռնի գործողությունները ներկայացնելով որպես սեռական հարաբերություն կամ սեքսուալ բնույթի այլ գործողություններ, այդ թվում՝ սեռական հարաբերության նմանակում կամ սեռական կարիքները բավարարել, որոնք կատարվել են հանցագործությունից տուժած անձի կամքին հակառակ կամ նրա կամքն անտեսելով՝ հանցագործությունից տուժած անձի կամ այլ անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ հանցագործությունից տուժած անձի անօգնական վիճակն օգտագործելով:

Փոփոխության է ենթարկվել ՀՀ քրեական օրենսգրքի 199-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունը՝ սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելը, որտեղ քննարկվող հանցագործության տեսակ է սահմանվել ոչ միայն սեռական հարաբերությունը կամ սեքսուալ բնույթի այլ գործողությունները, այդ թվում՝ սեռական հարաբերության նմանակումը կամ սեռական կարիքները բավարարելը, որոնք կատարվել են շանտաժի, զույքը ոչնչացնելու, վնասելու կամ վերցնելու սպառնալիքով կամ հանցագործությունից տուժած անձի նյութական կամ այլ կախվածությունն օգտագործելով, այլ նաև այդ արարքները կատարելն առանց նրա համաձայնության ողջամիտ համոզմունքի:

Որպես առանց (հանցագործությունից տուժած անձի) համաձայնության ողջամիտ համոզմունքի սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի այլ գործողություններ կատարել որակվում են այն դեպքերը, երբ հանցագործությունից տուժած անձն իր

[87] Council of Europe. (2011). *Council of Europe Convention on preventing and combating violence against women and domestic violence (Istanbul Convention) and explanatory report*. Retrieved November 26, 2024, from https://rm.coe.int/ic-and-explanatory-report/16808d24c6
[88] ԸԲ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ ենթակետ, 2017., https://www.arlis.am/documentview.aspx?docid=194267

համաձայնությունը հայտնելու իրական հնարավորություն չի ունեցել կամ համաձայնություն չի հայտնել՝ ելնելով դրա անիմաստությունից ստեղծված օբյեկտիվ իրականությունում: Բոլոր դեպքերում՝ հանցավորը ողջամիտ համոզմունք պետք է ունենա, որ անձը համաձայնվել է սեռական հարաբերության կամ սեքսուալ գործողության: Դա կարող է արտահայտվել խոսքով, ժեստով, գործողությամբ և այլն:

Պահպանվել են երեխայի սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունները և վերանայվել է դրանց բովանդակությունը, ինչպես նաև լրացվել է նոր հոդված՝ գրումինգի[89] համար նախատեսելով քրեական պատասխանատվություն: Բացի ՀՀ քրեական օրենսգրքի 27-րդ գլխից, երեխաներին սեռական հանցագործություններից պաշտպանությանը վերաբերող հոդվածներ նախատեսված են նաև այլ գլուխներում, մասնավորապես որոնք վերաբերում են բարոյականությանը և ՀՀ քրեական օրենսգրքի 300-րդ հոդվածի 2-րդ մասը պատասխանատվություն է սահմանում մանկական պոռնոգրաֆիա[90] ստեղծելու, արտադրելու, ձեռք բերելու, տարածելու, իրացնելու, արտահանելու, ներմուծելու, առաջարկելու, գովազդելու, մատչելի դարձնելու, տնօրինելու, տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով հասանելիություն ձեռք բերելու կամ համակարգչում, համակարգչային համակարգում, համակարգչային ցանցում կամ համակարգչային այլ սարքավորումների վրա կամ ցանկացած այլ եղանակով մանկական պոռնոգրաֆիա պահպանելու կամ մանկական պոռնոգրաֆիա դիտելու համար: Եթե արարքը կատարվում է մերձավոր ազգականի կամ այն անձի կողմից, որի վրա դրված է եղել երեխայի դաստիարակության, խնամքի կամ բուժման պարտականություն, կամ կրթական կամ առողջապահական կազմակերպության այն աշխատակցի կողմից, որը պարտավոր էր հոգ տանել երեխայի մասին կամ վերահսկել նրա վարքագիծը, ապա արարքը համարվում է կատարված ծանրացնող հանգամանքներում:

ԵԽ Կոնվենցիա	*ՀՀ քրեական նոր օրենսգրքի հոդվածներ*
36-րդ հոդվածը՝ սեռական բռնությունը	198-րդ հոդվածը՝ սեքսուալ բնույթի բռնի գործողությունները, 199-րդ հոդվածը՝ սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելը, 200-րդ հոդվածը՝ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը 16 տարին չլրացած անձի նկատմամբ, 201-րդ հոդվածը՝ անառակաբարո արարք կատարելը, 202-րդ հոդվածը՝ 16 տարին չլրացած անձին սեռական հարաբերություն կամ սեքսուալ բնույթի այլ գործողություններ կամ մանկական պոռնոգրաֆիա ստեղծել կամ արտադրել առաջարկելը (գրումինգ), 300-րդ հոդվածը՝ պոռնկագրական նյութեր կամ առարկաներ պատրաստելը, տարածելը կամ պահպանելը:

[89] Թեև Ստամբուլյան կոնվենցիան վերոգրյալ հանցակազմին չի անդրադառնում, սակայն, այս փոփոխությունը պայմանավորված է Հայաստանի կողմից «Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաներին պաշտպանելու մասին» ԵԽ կոնվենցիայի վավերացմամբ: Գրումինգը՝ 16 տարին չլրացած անձին սեռական հարաբերություն կամ սեքսուալ բնույթի այլ գործողություններ կամ մանկական պոռնոգրաֆիա ստեղծել կամ արտադրել առաջարկելը, որը պատժվում է կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 202-րդ հոդված, 2021թ., https://www.arlis.am/documentview.aspx?docid=194397

[90] Մանկական պոռնոգրաֆիա է համարվում ցանկացած նյութ, որտեղ երեխան պատկերված է բացահայտ սեքսուալ բնույթի իրական կամ նմանակված գործողություն կատարելիս կամ սեռական շարժառիթով երեխայի սեռական օրգանը ցուցադրելիս:

Չնայած օրենսդրության կատարելագործմանը, խիստ մտահոգիչ է մնում աղջիկ երեխաների նկատմամբ սեռական հանցագործությունների կատարումը և նրանց վաղ ամուսնությունը, մասնավորապես եզդիական համայնքում: Ավելին, երբեմն խնդրահարույց է դատական պրակտիկան, որը կարճում վարույթը՝ հաշտեցնելով տուժողն և հանցագործություն կատարած անձին, ինչն արգելված է թե՛ միջազգային, թե՛ ազգային օրենսդրությամբ (վաղ ամուսնությունները և երեխաների հետ սեռական հարաբերություն ունենալը):[91]

[91] Դ. Թումասյանի գրառումը սոցիալական ցանցում՝ https://www.facebook.com/david.tumasyan/posts/7789278687843902?ref=embed_post, և այլն:

Հարկադիր ամուսնությունը

Հոդված 37.

1. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական կամ այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի քրեականացվի չափահասին կամ երեխային ամուսնանալուն դիտավորությամբ հարկադրելը:
2. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական կամ այլ բնութի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի քրեականացվի չափահասին կամ երեխային ամուսնանալուն հարկադրելու նպատակով այդ անձի քաղաքացիության կամ բնակության վայրի պետություն չհանդիսացող պետության տարածք մուտք գործելուն դիտավորությամբ գայթակղելը:

«Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի» Եվրոպայի Խորհրդի կոնվենցիա

Ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունքն ամրագրված մի շարք միջազգային փաստաթղթերով, որոնք վավերացված են ՀՀ կողմից: Միևնույն ժամանակ, ամուսնությունն արգելվում է, եթե բացակայում է ամուսնության՝ չափահաս դարձած երկու կողմերի՝ կնոջ և տղամարդու՝ ամուսնու ազատ ընտրությունը և լիակատար համաձայնությունը[92]:

ԵԽ անդամ բոլոր երկրներում ամուսնության համար համաձայնությունը պարտադիր նախապայման է: Հարկադիր ամուսնությունը խախտում է համաձայնություն չտվող կողմի ամուսնանալու իրավունքը, այն նաև համարվում է գենդերային բռնության ձև: Ստամբուլյան կոնվենցիայի 37-րդ հոդվածի 1-ին մասով քրեականացնում է չափահասին կամ երեխային ամուսնությանը հարկադրելը: Հոդվածի 2-րդ մասը վերաբերում է այն դեպքերին, երբ չափահասին կամ երեխային մոլորության մեջ գցելով տանում են արտերկիր՝ իր կամքին հակառակ՝ հարկադրաբար ամուսնացնելու նպատակով, անգամ եթե ամուսնությունը չի կնքվում: Համաձայն Կոնվենցիային կից բացատրական զեկույցի՝ *«հարկադրել»* եզրույթը վերաբերում է ֆիզիկական և հոգեբանական հարկադրանքին, երբ պարտադրանք և ճնշում է գործադրվում, ամուսնություն կնքելն անհրաժեշտ պայման չէ: *«Մոլորության մեջ գցելով տեղափոխել»* եզրույթը վերաբերում է ցանկացած այնպիսի վարքագծի, որով կատարողը հրապուրում է զոհին մեկ այլ երկիր ճանապարհորդելու գաղափարով: Դիտավորությունը պետք է ընդգրկի անձին արտերկիր մոլորության մեջ գցելով տեղափոխելու գործողությունը, ինչպես նաև այդ անձին արտերկրում հարկադրաբար ամուսնացնելու նպատակը[93]:

Քրեական նոր օրենսգրքի 197-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում ամուսնությանը, ամուսնալուծությանը կամ երեխա ունենալուն հարկադրելու համար:

---

[92] Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 16-րդ հոդվածի 2-րդ մասը; Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի 16-րդ հոդվածի 1-ին մասի (բ)-կետը; Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 23-րդ հոդվածի 3-րդ մասը; Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի 23-րդ հոդվածի 1-ին մասի (ա) կետը; Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի 10-րդ հոդվածի 1-ին մասը; Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 12-րդ հոդվածը, ինչպես նաև մի շարք այլ փաստաթղթերով, ինչպիսիք են Պեկինի Հռչակագիրը և Գործողությունների ծրագիրը, «Հարկադիր ամուսնությունների և երեխաների ամուսնությունների մասին» թիվ 1723 (2005) ԵԽ ՆԿ հանձնարարականը և այլն:

[93] Council of Europe. (2011). Council of Europe Convention on preventing and combating violence against women and domestic violence (Istanbul Convention) and explanatory report. Retrieved November 26, 2024, from https://rm.coe.int/ic-and-explanatory-report/16808d24c6

ԵԽ Կոնվենցիա	*ՀՀ քրեական նոր օրենսգրքի հոդվածներ*
37-րդ հոդվածը՝ հարկադիր ամուսնությունը	197-րդ հոդվածը՝ ամուսնությանը, ամուսնալուծությանը կամ երեխա ունենալուն հարկադրելը

Սակայն, ի տարբերություն այլ նոր հոդվածների, տվյալ հոդվածն ավելի խիստ պատժատեսակ չի սահմանում այն դեպքերի համար, երբ տուժող անձն անչափահաս կամ անգործունակ անձ է: Պետք է հաշվի առնել, որ **հարկադիր ամուսնությունների և վաղ ամուսնությունների միջև սերտ փոխկապակցվածություն կա:** Վաղ ամուսնությունը վնասակար պրակտիկա է, որն անհամաչափորեն ազդում է աղջիկների վրա՝ բացասաբար ազդելով նրանց առողջության, կրթության և կյանքի հնարավորությունների վրա:

Միջազգային իրավունքը պարտավորեցնում է պետություններին իրենց օրենսդրության մեջ նշել ամուսնության նվազագույն տարիքը: ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեն, ինչպես նաև ՄԱԿ-ի ԿՆԽՎԿ-ն առաջարկել են ամուսնության նվազագույն տարիքը՝ ծնողների համաձայնությամբ կամ առանց վերջինիս, սահմանել 18 տարեկանը՝ ինչպես աղջիկների, այնպես էլ տղաների համար: ՅՈՒՆԻՍԵՖ-ի սահմանման համաձայն՝ վաղ ամուսնությունը վերաբերում է ցանկացած ֆորմալ ամուսնությանը կամ ոչ ֆորմալ միությանը 18 տարեկանից ցածր երեխայի և մեծահասակի կամ այլ երեխայի միջև[94]:

Հետևաբար, անհրաժեշտ է վերանայել 197-րդ հոդվածը և համապատասխանեցնել Ստամբուլյան կոնվենցիայի 37-րդ հոդվածի 1-ին մասին՝ սահմանելով ավելի խիստ պատժատեսակ այն դեպքերի համար, երբ տուժողն անչափահաս կամ անգործունակ անձ է:

Կոնվենցիայի 37-րդ հոդվածի 2-րդ մասը, որը վերաբերում է չափահասին կամ երեխային ամուսնանալուն հարկադրելու նպատակով այդ անձի քաղաքացիության կամ բնակության վայրի պետություն չհանդիսացող պետության տարածք մուտք գործելուն դիտավորությամբ գայթակղելը, նույնպես ներպետական օրենսդրությամբ քրեականացված չէ և կարգավորման կարիք ունի, քանի որ Ընտանեկան օրենսգրքով գործող կարգավորումները ռիսկեր են պարունակում[95], իսկ այդ ռիսկերի առկայության դեպքում քրեաիրավական արձագանքման պատշաճ մեխանիզմ նախատեսված չէ:

Հարկ է նշել, որ ԿՆԽՎԿ-ն՝ Հայաստանի Հանրապետությանն ուղղված 7-րդ եզրափակիչ դիտարկումներում իր մտահոգություն է հայտնել երեխաների ամուսնությունների բարձր մակարդակի մասին, հատկապես եզդիական համայնքում, հարկադիր ամուսնությունների բացահայտման համար տվյալների և ընթացակարգերի ու վաղ ամուսնությունների հետ կապված կանխարգելման ծրագրերի բացակայության առնչությամբ[96]:

---

[94] UNICEF. (2023). *Child marriage*. Retrieved November 26, 2024, from https://www.unicef.org/protection/child-marriage

[95] Ընտանեկան օրենսգրքի 143–րդ հոդվածը՝ՀՀ քաղաքացիների միջև ամուսնությունները և ՀՀ ու օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց միջև ամուսնությունները, որոնք կնքվել են ՀՀ-ան տարածքից դուրս՝ պահպանելով այն պետության օրենսդրությունը, որի տարածքում դրանք կնքվել են, ՀՀ-ում վավեր են հյուպատոսական օրինականացման առկայության դեպքում: Օտարերկրյա քաղաքացիների միջև ՀՀ տարածքից դուրս կնքված ամուսնությունները, եթե պահպանվել է այն պետության օրենսդրությունը, որի տարածքում դրանք կնքվել են, ՀՀ-ում վավեր են հյուպատոսական օրինականացման առկայության դեպքում, https://www.arlis.am/documentview.aspx?docid=198718

[96] United Nations. (2022). *CEDAW Concluding Observations on the 7th Periodic Report of Armenia N2266621*, para 53(a). Retrieved November 26, 2024, from https://shorturl.at/T5MSV

Կոնվենցիայի 32-րդ հոդվածը կոչ է անում պետություններին միջոցներ ապահովել, որպեսզի հարկադրանքի ներքո կնքված ամուսնությունները հնարավոր լինի ճանաչել վիճարկելի, առոչինչ կամ լուծված՝ առանց տուժողի համար ֆինանսական կամ վարչարարական անհարկի դժվարություններ ստեղծելու: ՀՀ ընտանեկան օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ դատարանն ամուսնությունն անվավեր է ճանաչում, եթե ամունսությունը կնքվել է՝ առանց կողմերից որևէ մեկի համաձայնության և ամուսնության տարիքային շեմը հաշվի առնելու (բացի վերոնշյալ բացառության դեպքերը), ամուսնության մեջ գտնվող անձի հետ, մերձավոր ազգականների միջև, որդեգրողների և որդեգրվածների միջև, անգործունակ ճանաչված անձի հետ:

ՀՀ ոստիկանության և ՀՀ դատախազության կողմից տրամադրած տեղեկատվությունում՝ հարկադիր ամուսնության վերաբերյալ վիճակագրական **տվյալները բացակայում են:**

Կանանց սեռական օրգանների խեղումը

Հոդված 38. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական կամ այլ բնույթի անհրաժեշտ միջոցները՝ դիտավորությամբ կատարված հետևյալ գործողությունների քրեականացումն ապահովելու համար՝
ա. սեռական մեծ և փոքր շուրթերը կամ ծլիկը լրիվ կամ մասնակի անդամահատելը, կապելը/ինֆիբուլացնելու կամ խեղման այլ գործողությունների ենթարկելը,
բ. (ա) կետում թվարկված գործողություններին ենթարկվելուն որևէ կնոջ ստիպելը կամ դրանց ենթարկվելու համար կին տրամադրելը,
գ. (ա) կետում թվարկված գործողություններին ենթարկվելուն որևէ աղջկա ստիպելը, դրդելը կամ դրանց ենթարկվելու համար աղջիկ տրամադրելը։

«Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի» Եվրոպայի Խորհրդի կոնվենցիա

Կանանց սեռական օրգանների խեղումը (այսուհետ՝ ԿՍՕԽ) խախտում է կնոջ առողջության, անվտանգության և ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքը, ինչպես նաև խոշտանգումներից և դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից զերծ լինելու իրավունքը: ԿՆԽՎԿ-ն ընդգծում է, որ այս պրակտիկան չի կարող արդարացվել կրոնական հիմքերով, և որ կանանց և աղջիկների մարմինների և սեռականության նկատմամբ նման վերահսկողությունը Կոնվենցիայի խախտում է, անկախ նրանից, թե այդ պրակտիկան տեղի է ունենում առողջապահական հաստատությունում, թե դրանից դուրս[97]:

Ստամբուլյան կոնվենցիայի բացատրական զեկույցի համաձայն՝ տվյալ հոդվածի նպատակն է քրեականացնել ԿՍՕԽ ավանդական գործելակերպը, որը պատճառում է անդառնալի և ցկյանս վնաս և սովորաբար կատարվում է առանց կնոջ կամ աղջկա համաձայնության: Հոդվածի «ա» կետով քրեականացվում է սեռական օրգանները լրիվ կամ մասնակի անդամահատելու, ինֆիբուլացնելու կամ որևէ այլ խեղում իրականացնելու գործողությունը, այդ թվում՝ բժիշկ մասնագետների կողմից, (բ) կետը քրեականցնում է հանցանք կատարած անձին աջակցելու/օժանդակելու գործողությունը՝ (ա) ենթաբաժնում նշված արարքները կատարելիս՝ չապահաս կնոջը ստիպելով կամ տրամադրելով, իսկ «գ» կետը քրեականցնում է «ա» կետում նշված գործողությունները կատարելու հարցում կատարողին օժանդակելը՝ անչափահաս աղջկան հրահրելու, հարկադրելու կամ դրանց համար պայմաններ ստեղծելու միջոցով[98]:

Վերոգրյալ հանցանքը ՀՀ քրեական նախկին և նոր օրենսգրքերով ուղղակիորեն նախատեսված չէ, սակայն, ՀՀ քրեական նախկին օրենսգրքի 112-րդ (դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը) և 113-րդ հոդվածներով (դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը), ինչպես նաև ՀՀ քրեական գործող օրենսգրքի 166-րդ (առողջությանը ծանր վնաս պատճառելը) և 167-րդ հոդվածներով (առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը) կարգավորում են այս խնդիրը, որտեղ ի թիվս այլ հատկանիշների որպես առողջությանը պատճառված ծանր վնաս է համարվում օրգանի կամ

[97] Harmful Practices as Gender-based Violence against Women and Girls, CEDAW Convention, General Recommendations (Nos 12, 14, 19, 31 And 35) and Practice of the Committee with Recommendations and Guidance to State Parties to the Convention, September 2022, Committee on the Elimination of all Forms of Discrimination against Women, Working Group on Gender-Based Violence (2019-2022)
[98] Council of Europe. (2011). *Council of Europe Convention on preventing and combating violence against women and domestic violence (Istanbul Convention) and explanatory report*. Retrieved November 26, 2024, from https://shorturl.at/VU5dU

նրա գործառույթի կորուստը, իսկ եթե օրգանի կամ նրա գործառույթի կորուստը բացակայելու է, սակայն այլ վնաս պատճառվելու է, ապա որակվելու է որպես առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը՝ դատաբժշկական փորձաքննության եզրակացության հիման վրա:

ԵՄ Կոնվենցիա	*ՀՀ քրեական նոր օրենսգրքի հոդվածներ*
38-րդ հոդվածը՝ Կանանց սեռական օրգանների խեղումը	166-րդ հոդվածը՝ առողջությանը ծանր վնաս պատճառելը, 167-րդ հոդվածը՝ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը

Գործող օրենսգրքով՝ առողջությանը ծանր վնաս պատճառելու դեպքում նախատեսված է ազատազրկում՝ երեքից յոթ տարի ժամկետով, իսկ ծանրացնող հանգամանքների դեպքում, այդ թվում, այն դեպքում, երբ արաքը կատարվել է, մերձավոր ազգականի, զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կողմից, կամ սեռով պայմանավորված շարժառիթով, կամ արարքը կատարվել է անչափահասի նկատմամբ, ապա պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով: Առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու դեպքում պատժվում է ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, իսկ ծանրացնող հանագամնքների առկայության դեպքում, օրինակ, եթե արարքը կատարվել է անչափահասի նկատմամբ, պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով: Ինչպես երևում է վերոգրյալից, գործող օրենսգրքով, դուրս է եկել «դիտավորությամբ» բառը, ինչպես նաև, վերջին խմբագրությամբ, ի թիվս այլոց, նախատեսվել են այնպիսի ծանրացնող հանգամանքեր, ինչպիսիք են, մերձավոր ազգականի, զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կողմից, կամ սեռով պայմանավորված շարժառիթով կատարված արարքը:

Համաձայն Ֆրանսիայի քրեական օրենսգրքի՝ ԿՍՕԽ-ը դիտվում է որպես հանցագործություն: ԿՍՕԽ-ի դեպքում կարող են օգտագործվել քրեական օրենսգրքի այն հոդվածները, որոնք վերաբերում են խոշտանգումների և բարբարոսական գործողություններին: ԿՍՕԽ -ի նկատմամբ կիրառելի են նաև այն հոդվածները, որոնք վերաբերում են դիտավորյալ մարմնական վնասվածք պատճառելուն, որն առաջացնում է մշտական թուլություն կամ այլանդակություն: Անչափահասի նկատմամբ հանցագործություն կատարելը համարվում է պատիժը ծանրացնող հանգամանք: Կիրառվում է արտատարածքայինության սկզբունքը, որը պատժելի է դարձնում ԿՍՕԽ-ը, նույնիսկ եթե դա կատարվել է երկրի սահմաններից դուրս: ԿՍՕԽ -ը դիտվում է նաև, որպես ապաստան հայցելու հիմք: ԿՍՕԽ-ը դիտվում է նաև որպես բռնության Երեխայի պաշտպանությնա մասին օրենքով[99]:

Համաձյան EIGE-ի ուսումնասիրության, ոչ բոլոր ԵՄ անդամ երկրներն ունեն ԿՍՕԽ-ի վերաբերյալ քրեական օրենսդրության հատուկ դրույթներ: Երկրների մեծ մասում այն կարգավորվում է քրեական օրենսգրքի ընդհանուր դրույթներով[100]:

[99] European Institute for Gender Equality. (n.d.). *Current situation and trends of female genital mutilation in France*. Retrieved November 26, 2024, from https://shorturl.at/qKpU2
[100] ibid

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն, յուրաքանչյուր երեխա ունի ամեն տեսակի (ֆիզիկական, հոգեկան և այլ) բռնությունից պաշտպանության իրավունք: Ցանկացած անձի, այդ թվում՝ ծնողներին կամ այլ օրինական ներկայացուցիչներին, արգելվում է երեխային ենթարկել բռնության կամ նրա արժանապատվությունը նվաստացնող պատժի, կամ նմանօրինակ այլ վերաբերմունքի:
ՀՀ վիճակագրական կոմիտեի 2015-2017 թթ. վիճակագրության համաձայն, 15-49 տարեկան աղջիկների և կանանց համամասնությունը, ովքեր ենթարկվել են կանանց սեռական օրգանների խեղման կամ կտրման 0% է[101]:

ԿՍՕԽ-ի վերաբերյալ այլ վիճակագրական տվյալները բացակայում են:

Թեև ՀՀ քրեական նախկին օրենսգրքի 112-րդ (դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը) և 113-րդ հոդվածներով (դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը), ինչպես նաև ՀՀ քրեական գործող օրենսգրքի 166-րդ (առողջությանը ծանր վնաս պատճառելը) և 167-րդ հոդվածներով (առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը) տրամադրած վիճակագրական տվյալները բավականին մեծ են, այնուամենայնիվ, տարանջատել ԿՍՕԽ-ին վերաբերելի վիճակագրությունը՝ առանց ծանոթ լինելու կոնկրետ քրեական վարույթների կամ դեպքերի հանգամանքներին, անհնարին է:

[101] ՀՀ վիճակագրական կոմիտե, Հայաստանի ԿԶՆ ցուցանիշներ՝
https://armstat.am/am/?nid=699&ind_id=5.3.2

Հղիության արհեստական դադարեցումը կամ ստերիլիզացում կատարելուն հարկադրելը

Հոդված 39. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական կամ այլ բնույթի անհրաժեշտ միջոցները՝ դիտավորությամբ կատարված հետևյալ գործողությունների քրեականացումն ապահովելու համար՝
ա. կնոջ հղիության արհեստական դադարեցումը՝ առանց նրա կողմից նախապես և տեղեկացված կերպով տրված համաձայնության։
բ. վիրաբուժական միջամտության իրականացում, որի նպատակը կամ ազդեցությունն է դադարեցնել կնոջ՝ բնական ճանապարհով վերարտադրվելու կարողությունը՝ առանց նրա նախնական և տեղեկացված համաձայնության կամ ընթացակարգի ըմբռնման:

«Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի» Եվրոպայի Խորհրդի կոնվենցիա

Սույն հոդվածով քրեականացվում է **կանանց բնական վերարտադրողական կարողություններին առնչվող դիտավորյալ արարքները:** Հոդվածի (ա) կետը վերաբերում է հղիության կանխամտածված ընդհատմանը՝ առանց տուժողի նախնական և տեղեկացված համաձայնության, իսկ (բ) կետով քրեականացվում է կանանց և աղջիկների հարկադիր ամլացումը, որի նպատակը կամ արդյունքն է դադարեցնել կնոջ բնական ճանապարհով վերարտադրողականության կարողությունը՝ առանց նրա նախնական և տեղեկացված համաձայնության: Հոդվածի նպատակն է ընդգծել կանանց վերարտադրողական իրավունքները հարգելու կարևորությունը՝ թույլ տալով կնոջն ինքնուրույն որոշում կայացնել երեխաների քանակի և նրանց ծննդաբերության միջև ընկած ժամանակահատվածի վերաբերյալ, և ապահովելով բնական վերարտադրողականության և ընտանիքի պլանավորման վերաբերյալ համապատասխան տեղեկատվության հասանելիությունը:

ՄԻԵԿ-ի 8-րդ հոդվածը կիրառելի է բժշկական ամլացման գործընթացի նկատմամբ, քանի որ այն վերաբերում է մարդու օրգանիզմի կարևորագույն գործառույթներից մեկին, և անդրադառնում է անձի ֆիզիկական և հոգեկան բարեկեցության, ինչպես նաև հուզական, հոգևոր և ընտանեկան կյանքի վրա («Վ.Ց.-ն ընդդեմ Սլովակիայի», պարբ.106): Դատարանը նշել է, որ պետությունները կրում են հարկադիր ամլացումից կանանց պաշտպանության ապահովմանն ուղղված արդյունավետ իրավական երաշխիքներ ներդնելու դրական պարտավորություն: («Ի.Գ. և այլք ընդդեմ Սլովակիայի», պարբ.143-146): Այս նախադեպային իրավունքը կիրառելի է նաև անփութությամբ կատարված ամլացման դեպքում, երբ բժիշկը չի իրականացնում անհրաժեշտ ստուգումներ կամ չի ստանում շահագրգիռ անձի իրազեկված համաձայնությունը հղիության արհեստական ընդհատման ժամանակ («Կսոման ընդդեմ Ռումինիայի», պարբ. 65-68)[102]:

ՀՀ քրեական նախկին օրենսգրքի 122-րդ հոդվածը պատասխանատվություն էր սահմանում ապօրինի աբորտ կատարելու համար, սակայն, այն չէր անդրադառնում տուժողի նախնական և տեղեկացված համաձայնությանը և չէր նախատեսում Կոնվենցիայի 39-րդ հոդվածի (բ) կետով սահմանված ամլացում կատարելուն հարկադրելը:

Վերոգրյալ հոդվածը պահպանվել է ՀՀ քրեական նոր օրենսգրքով՝ որոշակի փոփոխություններով, մասնավորապես պատժամիջոցների մասով: ՀՀ քրեական նոր

[102] Ուղեցույց մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի վերաբերյալ, Անձնական և ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք, էջ-69: Եվրոպայի խորհուրդ/Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 2021 թ.:

օրենսգրքով կատարվել են նաև անհրաժեշտ լրացումներ, մասնավորապես, 176-րդ հոդվածով պատասխանատվություն է նախատեսվել հղիության արհեստական ընդհատմանը (աբորտ կատարելուն) կամ ամլացմանը հարկադրելու համար: Ծանրացուցիչ հանգամանք է համարվում, եթե այդ արարքը կատարվել է մերձավոր ազգականի կամ զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կողմից կամ անզգուշությամբ առաջացրել է հանցագործությունից տուժած անձի մահ կամ առաջացրել է այլ ծանր հետևանք: Ավելին, նոր օրենսգրքի 175-րդ հոդվածը նախատեսում է տուժողի նախնական և իրազեկված ու պատշաճ ձևակերպված համաձայնությունը: Հակառակ դեպքում, հղիության արհեստական ընդհատում (աբորտ) կատարելը կամ անձի ամլացումը՝ առանց վերջինիս նախնական և իրազեկված ու պատշաճ ձևակերպված համաձայնության պատժվում է ազատազրկմամբ: Այսպիսով, գործող կարգավորումները բավարարում են Կոնվենցիայով սահմանված պահանջին:

ԵԽ Կոնվենցիա	***ՀՀ քրեական նոր օրենսգրքի հոդվածներ***
39-րդ հոդվածը՝ հղիության արհեստական դադարեցումը կամ ստերիլիզացում կատարելուն հարկադրելը	175-րդ հոդվածը՝ հղիության արհեստական ընդհատում (աբորտ) կատարելը կամ ամլացումը, 176-րդ հոդվածը՝ հղիության արհեստական ընդհատմանը (աբորտ կատարելուն) կամ ամլացմանը հարկադրելը

Համաձայն ՀՀ ոստիկանության կողմից տրամադրած տվյալների՝ 2019 թ.-ի 12 ամիսների ընթացքում կին տուժողների նկատմամբ գրանցվել է 2 դեպք՝ ՀՀ քրեական օրենսգրքի 122-րդ հոդվածով (ապօրինի աբորտ կատարելուն), 2021թ.-ին 1 դեպք՝ ՀՀ քրեական օրենսգրքի 122-րդ հոդվածով (ապօրինի աբորտ կատարելուն): ՀՀ դատախազության և ՀՀ ոստիկանության կողմից տրամադրած տվյալների համաձայն՝ 2023 թ.-ին `1 քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածով (հղիության արհեստական ընդհատմանը (աբորտ կատարելուն) կամ ամլացմանը հարկադրելը):

Սեռական ոտնձգությունը

Հոդված 40. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական կամ այլ միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի սեռական բնույթի անցանկալի խոսքային, ոչ խոսքային կամ ֆիզիկական ցանկացած վարքագիծ, որը նպատակ ունի խոցելու անձի արժանապատվությունը կամ հանգեցնում է դրան, մասնավորապես՝ ճնշող, թշնամական, նվաստացուցիչ, կամ վիրավորական մթնոլորտ ստեղծելը, ենթակա է քրեական կամ իրավական այլ պատժամիջոցի:

«Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի» Եվրոպայի Խորհրդի կոնվենցիա

Համաձայն Կոնվենցիայի բացատրական զեկույցի, **սեռական ոտնձգությանը ենթակա է քրեական կամ այլ իրավական պատժամիջոցի,** քանի որ բազմաթիվ երկների իրավական համակարգերում սեռական ոտնձգությունը կարգավորվում է քաղաքացիական կամ աշխատանքային իրավունքով[103]: Բռնությայն տվյալ ձևը ներառում է անցանկալի սեռական բնույթի վերբալ, ոչ վերբալ կամ ֆիզիկական վարքագիծ[104]: Վարքագծի դրսևորումներից ցանկացածը պետք է ունենա սեռական բնույթ, անցանկալի և գործողությունները պետք է ունենան զոհի արժանապատվությունը ոտնահարելու նպատակ, ստեղծի թշնամական, նվաստացնող կամ վիրավորական մթնոլորտ[105]: Վերոնշյալ գործողությունները կատարվում են ուժի չարաշահման, պարգև խոստումի կամ հաշվեհարդարի վախի համատեքստում: Սույն հոդվածի կիրառման շրջանակը չի սահմանափակվում աշխատանքային գործունեության ոլորտով: [106]

ՀՀ-ում **սեռական ոտնձգության արգելքն ամրագրված է ՀՀ աշխատանքային օրենսգրքով:** Աշխատանքային օրենսդրության սկզբունքներից են ցանկացած ձևի (բնույթի) սեռական ոտնձգության արգելումը[107]: Սեռական ոտնձգությունն սահմանվում է որպես աշխատավայրում կամ աշխատանքային պարտականությունների կատարման այլ վայրում (ներառյալ՝ գործուղումները) սեռական բնույթի անցանկալի արարք, որն ունի ֆիզիկական կամ խոսքային կամ ոչ խոսքային դրսևորում (ներառյալ՝ սեռական բնույթի առաջարկները, հպումները), և որն ուղղակի կամ անուղղակի ազդում է անձի՝ աշխատանքի վերաբերյալ որոշումների կայացման վրա կամ ստեղծում է արժանապատվությունը նվաստացնող կամ սոցիալական մեկուսացման դրդող աշխատանքային միջավայր[108]: Կազմակերպության ներքին կարգապահական կանոնները պետք է ներառեն, ի թիվս այլնի, աշխատանքում

---

[103] Ստամբուլյան կոնվենցիայի Բացատրական զեկույցի 207-րդ կետը:

[104] Վերբալ վարքագիծը վերաբերում է արտահայտված կամ հաղորդած բառերին կամ հնչյուններին, ինչպիսիք են կատակները, հարցերը, դիտարկումները, և կարող են արտահայտվել բանավոր կամ գրավոր: Ոչ վերբալ վարքագծի շրջանակներում ներառված են արտահայտությունները կամ հաղորդումները, որոնք բառեր կամ հնչյուններ չեն պարունակում, օրինակ՝ դեմքի արտահայտությունները, ձեռքի շարժումները կամ խորհրդանիշները: Ֆիզիկական վարքագիծը վերաբերում է ցանկացած բնույթի սեռական վարքագծին և կարող է ներառել այնպիսի իրավիճակներ, որոնք ներառում են մարմնի հետ կոնտակտ:

[105] ՀՀ աշխատանքային օրենսգրքի 208-րդ կետը, 2004թ. https://www.arlis.am/documentview.aspx?docid=194077

[106] ՀՀ աշխատանքային օրենսգրքի 209-րդ կետը, 2004թ. https://www.arlis.am/documentview.aspx?docid=194077

[107] ՀՀ աշխատանքային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1- ին մասի 2-րդ ենթակետը, 2004թ. https://www.arlis.am/documentview.aspx?docid=194077

[108] ՀՀ աշխատանքային օրենսգրքի 3.3-րդ հոդվածի 3-րդ մասը, 2004թ. https://www.arlis.am/documentview.aspx?docid=194077

բռնության կամ սեռական ոտնձգության արգելքը[109]: Սեռական ոտնձգության ենթարկված աշխատողին իր ցանկությամբ տրամադրվում է ամենամյա արձակուրդ՝ անկախ աշխատանքի կատարման ժամանակահատվածից[110]:

ԵԽ Կոնվենցիա	*ՀՀ աշխատանքային օրենսգրքի հոդվածներ*
40-րդ հոդվածը՝ սեռական ոտնձգությունը	3.3.-րդ հոդվածը՝ աշխատանքում (աշխատավայրում) բռնության կամ սեռական ոտնձգության արգելքը

Հարկ է նշել, որ աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջները խախտելն առաջացնում է նախազգուշացում խախտում թույլ տված անձի նկատմամբ: Իսկ եթե խախտումը կատարվել է վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում գործատուի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինսապատիկի չափով[111]:

Չնայած ՀՀ աշխատանքային օրենսգրքի պահանջներին, ներկայումս, բացակայում է սեռական ոտնձգության դեմ բողոքների ներկայացման, քննության և դրանց արձագանքման վերաբերյալ կարգը: Հարկ է նշել նաև, որ սեռական ոտնձգության կիրառման շրջանակը սահմանափակվում աշխատանքային գործունեության ոլորտով: Սեռական ոտնձգության սահմանումը չի ներառում նաև տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով գործած ոտնձգությունը:

[109] ՀՀ աշխատանքային օրենսգրքի 218-րդ հոդվածի 2-րդ մասը, 2004թ. hhttps://www.arlis.am/documentview.aspx?docid=194077
[110] ՀՀ աշխատանքային օրենսգրքի 164-րդ հոդվածի 9-րդ մասը, 2004թ. https://www.arlis.am/documentview.aspx?docid=194077
[111] ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 41-րդ հոդվածը, https://www.arlis.am/documentview.aspx?docid=199186

Առաջարկություններ

Իրավական բնույթի առաջարկություններ

1. Դիտարկել ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 23-ի N1225-Ն որոշման վերանայման հնարավորությունը և վերջինիս համապատասխանեցումը ՄԱԿ-ի թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի կողմից մշակված վիճակագրական նպատակներով հանցագործությունների միջազգային դասակարգչին (ICCS-ին):
2. Դիտարկել որդեգրման գաղտնիք հրապարակելու, ալիմենտ (ապրուստավճար) վճարելուց խուսափելու և ծնողների կամ այլ մերձավոր ազգականների և երեխայի միջև տեսակցության իրականացման խոչընդոտելու հետ տեսակցվելու կամ շփվելու արգելքի սպառնալիքները որպես հոգեկան ներգործություն:
3. ՀՀ ՔՕ 194-րդ (Հոգեկան ներգործությունը) և 196-րդ (Ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը) հոդվածները չեն ներառում տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով կատարված արարքները, հետևաբար առաջարկվում է, լրամշակել դրանք, նշելով, որ տվյալ արարքները կարող են իրականացվել նաև ՏՀՏ-ի միջոցով:
4. Վերանայել ՀՀ քրեական օրենսգրքի 197-րդ հոդվածը և համապատասխանեցնել Ստամբուլյան Կոնվենցիայի 37-րդ հոդվածի 1-ին մասին՝ սահմանելով ավելի խիստ պատժատեսակ այն դեպքերի համար, երբ տուժողն անչափահաս կամ անգործունակ անձ է:
5. Դիտարկել չափահասին կամ երեխային ամուսնանալուն հարկադրելու նպատակով այդ անձի քաղաքացիության կամ բնակության վայրի պետություն չհանդիսացող պետության տարածք մուտք գործելուն դիտավորությամբ գայթակղելու գործողությունը քրեականացնելու հնարավորությունը:
6. Դիտարկել ԿՍՕԽ-ը ներառելու ԸԲ օրենքով նախատեսված բռնության որևէ տեսակում՝ ֆիզիկական կամ հոգեբանական:
7. Դիտարկել սեռական ոտնձգության դեմ բողոքների ներկայացման, քննության և դրանց արձագանքման վերաբերյալ կարգի մշակումը և ընդունումը:
8. Դիտարկել սեռական ոտնձգության կարգավորման հանրավորություն աշխատանքային գործունեության ոլորտից դուրս:
9. Սեռական ոտնձգության սահմանման մեջ ներառել նաև տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով/եղանակով գործած ոտնձգությունը:

Կազմակերպական բնույթի առաջարկություններ

1. Կանոնավոր պարբերականությամբ իրականացնել կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության վերաբերյալ հետազոտություններ և բնակչության շրջանում իրականացվող հարցումներ:
2. Կազմակերպել քննարկումներ շահագրգիռ կողմերի հետ՝ ՄԱԿ-ի թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի կողմից մշակված վիճակագրական նպատակներով հանցագործությունների միջազգային դասակարգման՝ ICCS-ի վերաբերյալ, դիտարկել ICCS հնարավոր տեղայնացման աշխատանքները:
3. Վաղ ամուսնություններին կամ երեխայի ամուսնություններին վերաբերող գործերով իրականացնել դատական մոնիթորինգ և վերանայել դատական պրակտիկան:

4. Ձեռնարկել անհրաժեշտ միջոցների ԿՍՕԽ-ի վերաբերյալ վիճակագրություն վարելու նպատակով:
5. Ձեռնարկել միջոցներ, որպեսզի առցանց կամ թվային միջոցներով կամ թվային ոլորտում իրականացված վերոգրյալ արարքը (cyber stalking) հստակ արտացոլված լինի ընդհանուր վիճակագրական տվյալներում:

Գրականություն

Միջազգային փաստաթղթեր

1. ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիա, 1979 թ.
2. ՄԱԿ-ի «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» դաշնագիր, , 1966 թ.
3. ՄԱԿ-ի «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագիր, 1966 թ.
4. ՄԱԿ-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիա, 2007 թ.
5. «Պեկինի Կանանց հարցերով 4-րդ համաշխարհային համաժողովի կողմից ընդունված Հռչակագրի և գործողությունների պլան», 1995թ.
6. 2030 թվականի «Կայուն զարգացման օրակարգն» ու «Կայուն զարգացման նպատակները», 2015 թ.
7. ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի (CEDAW Committee) թիվ No. 35 Ընդհանուր հանձնարարական, 2017 թ.

Եվրոպայի խորհրդի փաստաթղթեր

1. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա, 1950 թ.
2. «Կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա, 2011 թ.
3. «Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաներին պաշտպանելու մասին» Եվրոպայի խորհրդի (Լանզարոտեի) կոնվենցիա, 2007 թ.
4. «Կանանց նկատմամբ բռնության թվային հարթության մասին» ԳՐԵՎԻՈ-ի թիվ 1 ընդհանուր հանձնարարական, 2021 թ.
5. «Հարկադիր ամուսնությունների և երեխաների ամուսնությունների մասին» թիվ 1723 (2005) ԵԽ ՆԿ հանձնարարականը

ՄԻԵԴ նախադեպեր

1. Բուտուրուգան ընդդեմ Ռումինիայի, 56867/15, 2020թ-ի փետրվարի 10, ՄԻԵԴ,
2. Սանդրա Ջանկովիչն ընդդեմ Խորվաթիայի, 38478/05, 2009 թ.-ն մարտի 5, ՄԻԵԴ
3. Երեմիան ընդդեմ Մոլդովայի Հանրապետության, 3564/11, 2013 թ-ի մայիսի 28, ՄԻԵԴ
4. Մ.Կ.-ն ընդդեմ Բուլղարիայի, 2003 թվականի դեկտեմբերի 4-ի, ՄԻԵԴ-ի

Եվրոպական միության փաստաթղթեր

1. Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2024 թվականի մայիսի 14-ի 2024/1385 հրահանգ (ԵՄ) Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարի մասին

Ներպետական օրենսդրություն

1. ՀՀ Սահմանադրություն, 2015 թ.
2. ՀՀ քրեական օրենսգիրք, 2003 թ.
3. ՀՀ քրեական օրենսգիրք, 2021 թ.
4. ՀՀ աշխատանքային օրենսգիրք, 2004 թ.
5. ՀՀ ընատնեկան օրենսգիրք, 2004 թ.
6. ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք, 1985 թ.

7. «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» ՀՀ օրենք, 2017 թ.
8. «Պաշտոնական վիճակագրության մասին» ՀՀ օրենք, 2018 թ.
9. «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք, 1996 թ.
10. ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1381-Ն որոշում «Ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման կարգը սահմանելու մասին»
11. ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 23-ի N1225-Ն որոշում «Մինչդատական վարույթը բնութագրող ցուցանիշների վիճակագրական հաշվետվությունների միասնական ձևերը և դրանց լրացման ու ներկայացման կարգերը հաստատելու մասին»

Այլ հետազոտություններ և հրապարակումներ

1. Ուղեցույց մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի վերաբերյալ, Անձնական և ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք, էջ-69: Եվրոպայի խորհուրդ/Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 2021 թ.
2. Current situation of FMG in France, EIGE
3. The World Health Organisation (WHO) Multi-country Study on Women's Health and Domestic Violence against Women as well as the International Violence Against Women Survey (IVAWS)
4. Administrative data sources on gender-based violence against women in the EU: Current status and potential for the collection of comparable data, CoE
5. Final Activity Report, Council of Europe Task Force to Combat Violence against Women, including Domestic Violence (EG-TFV), Strasbourg, September 2008.
6. Administrative data collection on domestic violence in Council of Europe member states, Council of Europe 2008 (EG-VAW-DC (2008)Study)
7. International Crime Classification of Crime for Statistical Purposes, UNODC
8. Methodological Guidance: Administrative data collection on violence against women and domestic violence, EIGE, 2023 թ.
9. The role of national statistical agencies (para 20-22), Guidelines for Producing Statistics on Violence against Women – Statistical Surveys, United Nations, 2014

Պաշտոնական և այլ կայքեր

1. Armenian Legal Information System. (n.d.). *Homepage*. Retrieved November 26, 2024, from https://www.arlis.am
2. IRTEK Legal Information System. (n.d.). *Homepage*. Retrieved November 26, 2024, from http://www.irtek.am
3. e-Draft Platform. (n.d.). *Public legal drafts and consultations*. Retrieved November 26, 2024, from https://www.e-draft.am
4. Investigative Committee of Armenia. (n.d.). *Investigative news and updates*. Retrieved November 26, 2024, from https://www.investigative.am
5. Statistical Committee of Armenia. (n.d.). *Homepage*. Retrieved November 26, 2024, from https://armstat.am
6. European Institute for Gender Equality. (n.d.). *Homepage*. Retrieved November 26, 2024, from https://eige.europa.eu
7. United Nations. (n.d.). *Homepage*. Retrieved November 26, 2024, from https://www.un.org
8. Council of Europe. (n.d.). *Istanbul Convention: Action against violence*. Retrieved November 26, 2024, from https://www.coe.int/en/web/istanbul-convention/
9. EUR-Lex. (2024). *Council directive 2024/01385*. Retrieved November 26, 2024, from https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=OJ%3AL_202401385

10. European Institute for Gender Equality. (n.d.). *Legal definitions in the EU: Gender-based violence*. Retrieved November 26, 2024, from https://eige.europa.eu/gender-based-violence/regulatory-and-legal-framework/legal-definitions-in-the-eu?ts=&vt=882&c=All&page=0

Հավելված 1. EIGE -ի(Գենդերային հավասարության եվրոպական ինստիտուտի) 13 ցուցիչների ցանկը

Ոստիկանությունից հավաքվող ցուցիչների ցանկը (1-9)

1. Ոստիկանությունում գրանցված (զուգընկերոջ կողմից/ընտանեկան/այլ[112]) բռնության ենթարկված տուժողների (տվյալ հանցագործությունից կին տուժողների թվի և տվյալ հանցագործությունից ընդհանուր տուժողների թվի) տարեկան թիվը,
2. Ոստիկանությունում գրանցված (զուգընկերոջ/ընտանեկան/այլ) բռնության դեպքերի/հանցագործությունների տարեկան թիվը տուժողների (կին և ընդհանուր) համամասնությամբ,
3. Ոստիկանությունում գրանցված (զուգընկերոջ/ընտանեկան/այլ) բռնություն գործադրած տղամարդկանց տարեկան թիվը տուժողների (կին և ընդհանուր) հարաբերակցությամբ,
4. Ոստիկանությունում գրանցված (զուգընկերոջ կողմից/ընտանեկան/այլ) ֆիզիկական բռնության ենթարկված տուժողների (տվյալ հանցագործությունից կին տուժողների թվի և տվյալ հանցագործությունից ընդհանուր տուժողների թվի) տարեկան թիվը,
5. Ոստիկանությունում գրանցված (զուգընկերոջ կողմից/ընտանեկան/այլ) հոգեբանական բռնության ենթարկված տուժողների (տվյալ հանցագործությունից կին տուժողների թվի և տվյալ հանցագործությունից ընդհանուր տուժողների թվի) տարեկան թիվը,
6. Ոստիկանությունում գրանցված (զուգընկերոջ կողմից/ընտանեկան/այլ) սեռական բռնության ենթարկված տուժողների (տվյալ հանցագործությունից կին տուժողների թվի և տվյալ հանցագործությունից ընդհանուր տուժողների թվի) տարեկան թիվը,
7. Ոստիկանությունում գրանցված (զուգընկերոջ կողմից/ընտանեկան/այլ) տնտեսական բռնության ենթարկված տուժողների (տվյալ հանցագործությունից կին տուժողների թվի և տվյալ հանցագործությունից ընդհանուր տուժողների թվի) տարեկան թիվը,
8. Ոստիկանությունում գրանցված (զուգընկերոջ կողմից/ընտանեկան/այլ) բռնաբարության մասին հաղորդում տված (տվյալ հանցագործությունից կին տուժողների թվի և տվյալ հանցագործությունից ընդհանուր տուժողների թվի) տուժողների տարեկան թիվը,
9. Ոստիկանությունում գրանցված (զուգընկերոջ կողմից/ընտանեկան/այլ) (կնասպանության/սպանության) զոհերի տարեկան թիվը (տվյալ հանցագործությունից կին տուժողների թվի և տվյալ հանցագործությունից ընդհանուր տուժողների թվի),

Արդարադատության ոլորտից հավաքվող ցուցիչների ցանկը (10-13)

10. Զուգընկերոջ կողմից/ընտանեկան/այլ բռնության դեպքերում պաշտպանական որոշումների տարեկան թիվը տուժողների (տվյալ հանցագործությունից կին տուժողների թվի և տվյալ հանցագործությունից ընդհանուր տուժողների թվի) համամասնությամբ,
11. Զուգընկերոջ կողմից/ընտանեկան/այլ բռնության համար մեղադրանք ներակայացված իրավախախտ/հանցագործ տղամարդկանց տարեկան թիվը տուժողների (տվյալ հանցագործությունից կին տուժողների թվի և տվյալ հանցագործությունից ընդհանուր տուժողների թվի) համամասնությամբ,
12. Զուգընկերոջ կողմից/ընտանեկան/այլ բռնության համար դատապարտված իրավախախտ/հանցագործ տղամարդկանց տարեկան թիվը տուժողների (տվյալ

[112] *Այլ* կամ *ցանկացած հարաբերությունը* վերաբերում է բոլոր տեսակի հարաբերություններին, որոնք կարող են գոյություն ունենալ տուժած անձի և բռնություն գործադրած անձի միջև, այդ թվում անծանոթ անձանց միջև:

հանցագործությունից կին տուժողների թվի և տվյալ հանցագործությունից ընդհանուր տուժողների թվի) համամասնությամբ,

13. Զուգընկերոջ կողմից/ընտանեկան/այլ բռնության համար ազատազրկման կամ պատիժ կրող իրավախախտ/հանցագործ տղամարդկանց թիվը տուժողների (տվյալ հանցագործությունից կին տուժողների թվի և տվյալ հանցագործությունից ընդհանուր տուժողների թվի) հարաբերակցությամբ[113]:

[113] Methodological Guidance: Administrative data collection on violence against women and domestic violence, (EIGE, 2023): https://eige.europa.eu/e-reader/8076

Հավելված 2. Ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ վարչական տվյալներ

ՀՀ դատախազության, ՀՀ քննչական կոմիտեի, ՀՀ Ոստիկանության կողմից տրամադրած 2019-2024 թվականների ընթացքում գրանցված ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ մանրամասն վիճակագրությունն ըստ տարեթվերի, որն ամփոփվել է օգտագործելով ICCS-ի և EIGE-ի հանցագործությունների դասակարգման (առանց ծածկագրերի), խմբավորման և ըստ բռնության տեսակների տարանջատման մեթոդաբանությամբ ներկայացված է

ՀՀ դատախազության կողմից տրամադրած տվյալներ [114]

2019 թվական

2019 թվականի ընթացքում արձանագրված ընտանեկան բռնության դեպքերի առթիվ նախաձեռնվել է 458 քրեական վարույթ, որից՝ 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածով (սպանության փորձը), 8-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածով (սպանությունը), 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 109-րդ հոդվածով՝ (անզգուշությամբ մահ պատճառելը), 4-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածով (ինքնասպանության հասցնելը), 8-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով (դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը), 11-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածով (դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը), 41-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով՝ դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելը, 280-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով (ծեծը), 8- ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածով (ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը), 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 120-րդ հոդվածով (անզգուշությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը), 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 121-րդ հոդվածով (անզգուշությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը), 41-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածով (սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքը), 2-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 138-րդ հոդվածով (բռնաբարությունը), 2-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 140-րդ հոդվածով (սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելը), 9-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 141-րդ հոդվածով (սեռական հարաբերությունը տասնվեց տարին չլրացած անձի հետ կամ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը տասնվեց տարին չլրացած անձի նկատմամբ), 3-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 142-րդ հոդվածով (անառակաբարո գործողությունները), 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 144-րդ հոդվածով (անձնական կամ ընտանեկան կյանքի մասին տեղեկություններ ապօրինի հավաքելը, պահելը, օգտագործելը կամ տարածելը), 2-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 167-րդ հոդվածով (ծնողներից կամ այն անձանցից, որոնց վրա դրված է երեխայի դաստիարակության և խնամքի պարտականությունը երեխային ապօրինի բաժանելը կամ երեխային փոխելը), 6-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 167.1 հոդվածով (ծնողի կամ այլ մերձավոր ազգականի և երեխայի միջև տեսակցության իրականացմանը խոչընդոտելը), 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 169[1] հոդվածով (քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններին սուտ տեղեկություններ հաղորդելը), 2-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 170-րդ հոդվածով (երեխային դաստիարակելու պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը), 5-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 173-րդ հոդվածով (ծնողի կողմից երեխային պահելուց չարամտորեն խուսափելը), 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածով (գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը), 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 261-րդ հոդվածով (շահադիտական նպատակով այլ անձի պոռնկությամբ զբաղվելուն ներգրավելը), 9-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի

[114] Տվյալները տրամադրվել են ՀՀ դատախազության կողմից 2024 թ. հունիսի 28-ին ի պատասխան «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի» հարցման:

353.1-րդ հոդվածով (անհետաձգելի միջամտության որոշումը կամ պաշտպանական որոշումը դիտավորությամբ չկատարելը)[115]:

Այսպիսով, 2019 թվականի ընթացքում արձանագրված ընտանեկան բռնության դեպքերի առթիվ նախաձեռնվել է 458 քրեական վարույթ, որից 394-ը՝ֆիզիկական, 21-ը՝ հոգեբանական, 17-ը՝ սեռական, 7-ը՝ անտեսման, 1-ը՝ տնտեսական, 8-ը՝ ֆիզիկական կամ հոգեբանական, 1-ը՝ հոգեբանական կամ տնտեսական բռնության, և 1՝ չդասակարգված:

<u>2020 թվական</u>

2020 թվականի ընթացքում արձանագրված ընտանեկան բռնության դեպքերի առթիվ հարուցվել է 214 քրեական գործ, որից 2-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 112 -րդ հոդվածի 1-ին մասով (դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը), 3-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասով (դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը), 26-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով (դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելը), 150-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով (ծեծը), 2-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին մասով (ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը), 6-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով (ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելն առանձին դաժանությամբ), 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 120-րդ հոդվածի 1-ին մասով (անզգուշությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը), 3-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 133-րդ հոդվածի 1-ին մասով (ազատությունից ապօրինի զրկելը), 19-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով (սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքը), 2-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասով (բնակարանի անձեռնմխելիությունը խախտելը/մարդու կամքին հակառակ նրա բնակարան ապօրինի մուտք գործելը)[116]:

Այսպիսով, 2020 թվականի ընթացքում արձանագրված ընտանեկան բռնության դեպքերի առթիվ հարուցվել է 214 քրեական գործ, որտեղ գործերի գերակշռող մասը 185-ը ֆիզիկական բռնության տեսակի են, 21-ը՝ հոգեբանական և 8-ը՝ ֆիզիկական կամ հոգեբանական:

<u>2021 թվական</u>

2021 թվականի ընթացքում արձանագրված ընտանեկան բռնության դեպքերի առթիվ քննվել է 556 քրեական գործ[117], որից՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով (սպանությունը), ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով (դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը՝ անզգուշությամբ առաջացնելով տուժողի մահ), ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով՝ (դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելը), ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով՝ (ծեծը), ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով՝ (սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքը), ՀՀ քրեական օրենսգրքի 137.1-րդ հոդվածով՝ (ծանր վիրավորանքը), ՀՀ քրեական օրենսգրքի 353.1 հոդվածով՝ (անհետաձգելի միջամտության որոշումը կամ պաշտպանական որոշումը դիտավորությամբ չկատարելը)[118]:

Թեև 2021 թվականին 556 հարուցված քրեական գործերի քանակը տարանջատված չէ ըստ ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածների:

---

[115] Տվյալները տրամադրվել են ՀՀ դատախազության կողմից 2024 թ. հունիսի 28-ին:
[116] Տվյալները տրամադրվել են ՀՀ դատախազության կողմից 2024թ. հունիսի 28-ին:
[117] Տվյալ տարվա համար, Դատախազություն կողմից տրամադրած քրեական գործերի քանակը տարանջատված չեն ըստ ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածների:
[118] Տվյալները տրամադրվել են ՀՀ դատախազության կողմից 2024թ. հունիսի 28-ին:

2022 թվական

2022 թվականի ընթացքում արձանագրված ընտանեկան բռնության դեպքերի առթիվ հարուցվել (նախաձեռնվել) է 718 քրեական գործ (վարույթ), որից՝ 2-ը՝ ՀՀ նախկին քրեական օրենսգիրք 104-րդ հոդվածով (սպանությունը), 1-ը՝ ՀՀ նախկին քրեական օրենսգիրք 112-րդ հոդվածով (դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը), 3-ը՝ ՀՀ նախկին քրեական օրենսգիրք 113-րդ հոդվածով (դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը), 1-ը՝ ՀՀ նախկին քրեական օրենսգիրք 113 -րդ և 118-րդ հոդվածներով (դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը և ծեծը), 6-ը՝ ՀՀ նախկին քրեական օրենսգիրք 117-րդ հոդվածով՝ (դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելը), 155-ը՝ ՀՀ նախկին քրեական օրենսգիրք 118-րդ հոդվածով՝ (ծեծը), 1-ը՝ ՀՀ նախկին քրեական օրենսգիրք 117-րդ, 118-րդ, 316-րդ, 353.1 հոդվածներով՝ (դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելը, Ծեծը, Իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելը, Անհետաձգելի միջամտության որոշումը կամ պաշտպանական որոշումը դիտավորությամբ չկատարելը), 2-ը՝ ՀՀ նախկին քրեական օրենսգիրք 119-րդ հոդվածով (ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը), 1-ը՝ ՀՀ նախկին քրեական օրենսգիրք 133-րդ հոդվածով (ազատությունից ապօրինի զրկելը), 17-ը՝ ՀՀ նախկին քրեական օրենսգիրք 137-րդ հոդվածով (սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքը), 12-ը՝ ՀՀ նախկին քրեական օրենսգիրք 137.1 հոդվածով (ծանր վիրավորանքը, 3-ը՝ ՀՀ նախկին քրեական օրենսգիրք 137 և 137.1 հոդվածներով (սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքը և ծանր վիրավորանքը), 10-ը՝ ՀՀ նախկին քրեական օրենսգիրք 118-րդ և 137.1 հոդվածներով (ծեծը և ծանր վիրավորանքը), 4 -ը՝ ՀՀ նախկին քրեական օրենսգիրք 118-րդ, 137-րդ և 137.1 հոդվածներով (ծեծը, սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքը, և ծանր վիրավորանքը), 1-ը՝ ՀՀ նախկին քրեական օրենսգիրք 137 -րդ և 147-րդ հոդվածներով (սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքը և բնակարանի անձեռնմխելիությունը խախտելը), 1-ը՝ ՀՀ նախկին քրեական օրենսգիրք 34-138-րդ հոդվածով՝ (բռնաբարության փորձը), 1-ը՝ ՀՀ նախկին քրեական օրենսգիրք 141-րդ հոդվածով (սեռական հարաբերությունը տասնվեց տարին չլրացած անձի հետ կամ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը տասնվեց տարին չլրացած անձի նկատմամբ), 1-ը՝ ՀՀ նախկին քրեական օրենսգիրք 167.1 հոդվածով (ծնողի կամ այլ մերձավոր ազգականի և երեխայի միջև տեսակցության իրականացմանը խոչընդոտելը), 2-ը՝ ՀՀ նախկին քրեական օրենսգիրք 353.1 հոդվածով (անհետաձգելի միջամտության որոշումը կամ պաշտպանական որոշումը դիտավորությամբ չկատարելը), 1-ը՝ ՀՀ նախկին քրեական օրենսգիրք 185-րդ հոդվածով (գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը), 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգիրք 162-րդ հոդվածով (ինքնասպանության հասցնելը), 4-ը՝ ՀՀ քրեական օրենսգիրք 166-րդ հոդվածով (առողջությանը ծանր վնաս պատճառելը), 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգիրք 167-րդ հոդվածով (առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը), 16-ը՝ ՀՀ քրեական օրենսգիրք 171-րդ հոդվածով (առողջությանը թեթև վնաս պատճառելը), 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգիրք 171-րդ և 194-րդ հոդվածներով՝ (առողջությանը թեթև վնաս պատճառելը հոգեկան ներգործությունը), 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգիրք 171-րդ և 195-րդ հոդվածներով՝ (առողջությանը թեթև վնաս պատճառելը, 2-ը՝ ՀՀ քրեական օրենսգիրք 173-րդ հոդվածով (անզգուշությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը), 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգիրք 191-րդ հոդվածով (մարդուն առևանգելը), 89-ը՝ ՀՀ քրեական օրենսգիրք 194-րդ հոդվածով (հոգեկան ներգործությունը), 345-ը՝ ՀՀ քրեական օրենսգիրք 195-րդ հոդվածով (ֆիզիկական ներգործությունը), 22-ը՝ ՀՀ քրեական օրենսգիրք 194-րդ և 195-րդ հոդվածներով (հոգեկան ներգործությունը և Ֆիզիկական ներգործությունը), 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգիրք 195-րդ և 264-րդ հոդվածներով, (ֆիզիկական ներգործությունը), 4-ը՝ ՀՀ քրեական օրենսգիրք

200-րդ հոդվածով (սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը 16 տարին չլրացած անձի նկատմամբ), 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգիրք 207-րդ հոդվածով (բնակարանի անձեռնմխելիությունը խախտելը, 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգիրք 243-րդ հոդվածով (ծնողի կամ այլ մերձավոր ազգականի և երեխայի միջև տեսակցության իրականացումը խոչընդոտելը):[119]

Այսպիսով, 2022 թվականին 714 հարուցված գործերի գերակշռող մասը նույնպես վերաբերում են ֆիզիկական բռնությանը՝ 550, հոգեբանական՝127, ֆիզիկական կամ հոգեբանական՝ 29, սեռական՝ 6, տնտեսական՝ 2:

<u>2023 թվական</u>

2023 թվականի ընթացքում արձանագրված ընտանեկան բռնության դեպքերի առթիվ նախաձեռնվել է 508 քրեական վարույթ, որից՝ 2-ը ՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածով (սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքը), 4-ը՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 137.1 հոդվածով (ծանր վիրավորանքը), 3-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածով (սպանությունը), 5-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 162-րդ հոդվածով (ինքնասպանության հասցնելը), 8 -ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 166-րդ հոդվածով (առողջությանը ծանր վնաս պատճառելը), 10-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 167-րդ հոդվածով (առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը), 47-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 171-րդ հոդվածով (առողջությանը թեթև վնաս պատճառելը), 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածով (հղիության արհեստական ընդհատմանը (աբորտ կատարելուն) կամ ամլացմանը հարկադրելը), 4-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 192-րդ հոդվածով (ազատությունից ապօրինի զրկելը), 44-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 194-րդ հոդվածով (հոգեկան ներգործությունը), 372-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածով (ֆիզիկական ներգործությունը), 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 196-րդ հոդվածով (Ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը), 4-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 198-րդ հոդվածով (սեքսուալ բնույթի բռնի գործողությունները), 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածով (խարդախությունը), 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 300-րդ հոդվածով (պոռնկագրական նյութեր կամ առարկաներ պատրաստելը, տարածելը կամ պահպանելը), 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 508-րդ հոդվածով (անհետաձգելի միջամտության որոշումը կամ պաշտպանական որոշումը չկատարելը):[120]

Այսպիսով, 2023 թվականին 508 հարուցված գործերից 448-ը ֆիզիկական, 53-ը հոգեբանական, 5-ը սեռական, 1-ը տնտեսական և 1 ֆիզիկական կամ հոգեբանական բռնության տեսակի են:

ՀՀ դատախազությունից ստացված տեղեկության համաձայն, 2019-2023 թվականների ընթացքում, արձանագրված ընտանեկան բռության դեպքերի առթիվ հարուցվել է 2,454 քրեական գործ (վարույթ): Ինչ վերաբերում է կանանց նկատմամբ կատարված բռնության դեպքերին, ապա վերջինիս վերաբերյալ Դատախազությունն առանձնացված տվյալներ չի տրամադրել: Դատախազության կողմից տրամադրած տեղեկատվությունը տարանջատված է ըստ տարեթվերի և ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածների, այլ վարչական տվյալների՝ ինչպիսիք են, տուժողների և մեղադրյալների/կասկածյալների թիվը, սեռը, տարիքը, անչափահասների թիվը, ընտանեկան կարգավիճակը, կապը նրանց միջև, քաղաքացիությունը, ազգությունը, կրթությունը, զբաղմունքը, նախկին դատվածությունը և այլն, չեն տրամադրվել:

[119] Տվյալները տրամադրվել են ՀՀ դատախազության կողմից 2024թ. հունիսի 28-ին:
[120] Տվյալները տրամադրվել են ՀՀ դատախազության կողմից 2024թ. հունիսի 28-ին:

Վերոգրյալ տվյալների վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ Դատախազության կողմից ընտանեկան բռնության դեպքերի առթիվ թվով ամենաշատ քրեական գործերը՝ 718-ը հարուցվել են 2022 թվականին, իսկ թվով ամենաքիչ քրեական գործերը՝ 214-ը հարուցվել են 2020 թվականին:

ՀՀ քննչական կոմիտեի կողմից ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ հրապարակված վիճակագրությունը 2019-2024 թվականների համար[121]

<u>2019 թվական</u>

«2019 թվականի ընթացքում ՀՀ քննչական կոմիտեի մարմինների և ստորաբաժանումների կողմից նախապատրաստվել է ընտանեկան բռնության վերաբերյալ 422 նյութ: 2019 թվականի ընթացքում Կոմիտեի վարույթում է գտնվել ընտանեկան բռնության վերաբերյալ 635 քրեական գործ, որից 8-ը՝ Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության վարույթում:

2019 թվականի ընթացքում Կոմիտեի վարույթում եղած ընտանեկան բռնության վերաբերյալ վերը նշված 635 քրեական գործերից 14-ը հարուցված են եղել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածով (սպանությունը), 2-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 109-րդ հոդվածով (անզգուշությամբ մահ պատճառելը), 4-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածով (ինքնասպանության հասցնելը), 11-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով (դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը), 12-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածով (դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը), 51-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով (դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելը), 338-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով (ծեծը), 12-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածով (ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը), 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 120-րդ հոդվածով (անզգուշությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը) 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 121-րդ հոդվածով (անզգուշությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը), 2-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածով (մարդուն առևանգելը), 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 133-րդ հոդվածով (ազատությունից ապօրինի զրկելը), 68-ը՝ 137-րդ հոդվածով (սպանության կամ առողջությանը ծանր վնաս պատճառելու, կամ գույք ոչնչացնելու սպառնալիքը), 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 138-րդ հոդվածով (բռնաբարությունը) 2-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 139-րդ հոդվածով (սեքսուալ բնույթի բռնի գործողությունները), 2-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 140-րդ հոդվածով (սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելը) 14-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 141-րդ հոդվածով (սեռական հարաբերությունը 16 տարին չլրացած անձի հետ կամ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը 16 տարին չլրացած անձի հետ), 3-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 142-րդ հոդվածով (անառակաբարո գործողությունները), 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 144-րդ հոդվածով՝ (անձնական կամ ընտանեկան կյանքի մասին տեղեկություններ ապօրինի հավաքելը, պահելը, օգտագործելը կամ տարածելը), 6-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 167-րդ հոդվածով (ծնողներից կամ այն անձանցից, որոնց վրա դրված է երեխայի դաստիարակության և խնամքի պարտականությունը երեխային ապօրինի բաժանելը կամ երեխային փոխելը), 13-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 167.1-րդ հոդվածով (ծնողի կամ այլ մերձավոր ազգականի և երեխայի միջև տեսակցության իրականացմանը խոչընդոտելը), 2-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 169.1-րդ հոդվածով (քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններին սուտ տեղեկություններ հաղորդելը), 3-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 170-րդ հոդվածով (երեխային

[121] Վիճակագրության վերաբերյալ տեղեկությունները հավաքվել է ՀՀ քննչական կոմիտեի կայքի՝ նորություններ/լրահոս բաժնից:

դաստիարակելու պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը) 14-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 173-րդ հոդվածով (ծնողի կողմից երեխային պահելուց չարամտորեն խուսափելը), 3-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածով (գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը), 33-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 353.1-րդ հոդվածով (անհետաձգելի միջամտության որոշումը կամ պաշտպանական որոշումը դիտավորությամբ չկատարելը), իսկ 21-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի այլ հոդվածներով (2019 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում քննվող քրեական գործերից 1-ը նշված է եղել որպես ՀՀ քրեական օրենսգրքի 166.1-րդ հոդվածով (երեխային ոգելից խմիչքների օգտագործմանը, ուժեղ ներգործող կամ այլ թմրեցնող նյութերի ոչ բժշկական օգտագործմանը, թափառաշրջիկությանը ներգրավելը կամ մուրացկանության հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելը) հարուցված, ինչը տեղեկատվություն տրամադրած ստորաբաժանման կողմից թույլ տրված տեխնիկական վրիպակի արդյունք է):

Վերը նշված քրեական գործերով թվով 358 անձ ներգրավված են եղել որպես մեղադրյալներ, ընդ որում՝ 3 անձ եղել է 14-18 տարեկան, 129-ը՝ 18-35 տարեկան, 226-ը՝ 35 տարեկանից բարձր:

Ընտանիքում կատարված հանցագործություններից 13-ը եղել են մոր կողմից, 29-ը՝ հոր կողմից, 3-ը՝ խորթ հոր կողմից, 14-ը՝ եղբոր/քրոջ կողմից, 2-ը՝ տատի/պապի կողմից, 43-ը՝ զավակի կողմից (այդ թվում՝ որդեգրվածի), 6-ը՝ ամուսիններից կնոջ կողմից, 219-ը՝ ամուսիններից տղամարդու կողմից, 5-ը՝ թոռան կողմից, 15-ը՝ ամուսնու ծնողների կողմից, 8-ը՝ հարսի/փեսայի կողմից կատարված (ներկայացված թվերի հանրագումարը կազմում է 357, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ քննվող 1 քրեական գործով անձն ունեցել է ընտանեկան երկու կարգավիճակ՝ պայմանավորված ընտանիքի տարբեր անդամների նկատմամբ արարքը կատարելով): Նշված անձանցից 18-ը նախկինում եղել են դատապարտված:

Վարույթում գտնվող գործերով եղել են թվով 536 տուժողներ, որոնցից 39-ը՝ մինչև 12 տարեկան, 15-ը՝ 12-14 տարեկան, 13-ը՝ 14-16 տարեկան, 17-ը՝ 16-18 տարեկան, 193-ը՝ 18-35 տարեկան, 259-ը՝ 35 տարեկանից բարձր:

2019 թվականի ընթացքում ավարտվել է ընտանեկան բռնության վերաբերյալ 468 քրեական գործ: 326 քրեական գործի վարույթ կարճվել է, որոնցից 129-ը՝ արդարացման հիմքով, 197-ը՝ ոչ արդարացման հիմքով: Մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել 128 քրեական գործ: Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու վերաբերյալ դատարան է ներկայացվել 14 միջնորդություն: Կասեցվել է 33 քրեական գործով վարույթ, որից 18-ը՝ անձի հետախուզման մեջ գտնվելու հիմքով, 15-ը՝ այլ հիմքով: 2019 թվականի ընթացքում միացվել են 61 քրեական գործեր: Ըստ ենթակայության է ուղարկվել 8 քրեական գործ: 2019 թվականից փոխանցված գործերի հետ միասին անավարտ է մնացել ընդհանուր հաշվով 65 քրեական գործ:» [122]

Այսպիսով, վերոգրյալ վարչական տվյալներից կարելի է եզրակացնել, որ քրեական վարույթներից 635-ից՝ 433-ը՝ ֆիզիկական, 118-ը՝ հոգեբանական, 22-ը՝ սեռական, 17-ը՝ անտեսում, 3-ը՝ տնտեսական, 6-ը՝ հոգեբանկան կամ ֆիզիկական, և 24-ը՝ հնարավոր չէ դասակարգել: Մեղադրյալների գերակշռող մասն ամուսիններ են՝ տղամարդիկ: Տուժողների գերակշռող մասը՝ 35-ից բարձր տարիքի: Անչափահաս տուժողների ընդհանուր թիվը 84 է:

[122] ՀՀ քննչական կոմիտեի կայք. հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.investigative.am/news/teghekatvvouthyvoun-hh-qnnchakan-kvomitei-varvouythvoum-2019-thvakani-ynthacqvoum-yntanekan-brnvouthyan-veraberyal-gvortseri-qnnvouthyan-ardyvounqneri-masin

2020 թվական

«2020 թվականի ընթացքում ՀՀ քննչական կոմիտեի վարույթում քննվել է ընտանեկան բռնության վերաբերյալ 730 քրեական գործ, նախապատրաստվել է 455 նյութ:

2020 թվականի ընթացքում Կոմիտեի վարույթում եղած ընտանեկան բռնության վերաբերյալ վերը նշված 730 քրեական գործից 7-ը հարուցվել է ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածով (սպանությունը), 3-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 109-րդ հոդվածով (անզգուշությամբ մահ պատճառելը), 9-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածով (ինքնասպանության հասցնելը), 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 111-րդ հոդվածով (ինքնասպանության հակելը) 18-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով (դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը), 10-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածով (դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը), 31-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով (դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելը), 404-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով (ծեծը), 13-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածով (ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը), 3-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 120-րդ հոդվածով (անզգուշությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը), 5-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածով (մարդուն առևանգելը), 3-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 133-րդ հոդվածով (ազատությունից ապօրինի զրկելը), 78-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածով (սպանության կամ առողջությանը ծանր վնաս պատճառելու, կամ գույք ոչնչացնելու սպառնալիքը), 5-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 138-րդ հոդվածով (բռնաբարությունը) 4-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 139-րդ հոդվածով (սեքսուալ բնույթի բռնի գործողությունները), 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 140-րդ հոդվածով (սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելը) 11-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 141-րդ հոդվածով (սեռական հարաբերությունը 16 տարին չլրացած անձի հետ կամ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը 16 տարին չլրացած անձի հետ), 5-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 142-րդ հոդվածով (անառակաբարո գործողությունները), 2-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 144-րդ հոդվածով՝ (անձնական կամ ընտանեկան կյանքի մասին տեղեկություններ ապօրինի հավաքելը, պահելը, օգտագործելը կամ տարածելը), 16-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 167.1-րդ հոդվածով (ծնողի կամ այլ մերձավոր ազգականի և երեխայի միջև տեսակցության իրականացմանը խոչընդոտելը), 5-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 168-րդ հոդվածով (խնամքը ստանձնելու նպատակով երեխայի առքը կամ ստանձնողի խնամքին հանձնելու նպատակով երեխայի վաճառքը), 6-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 169.1-րդ հոդվածով (քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններին սուտ տեղեկություններ հաղորդելը), 2-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 170-րդ հոդվածով (երեխային դաստիարակելու պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը) 16-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 173-րդ հոդվածով (ծնողի կողմից երեխային պահելուց չարամտորեն խուսափելը), 8-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածով (գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը), 2-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 186-րդ հոդվածով (գույքն անզգուշությամբ ոչնչացնելը կամ վնասելը), 35-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 353.1-րդ հոդվածով (անհետաձգելի միջամտության որոշումը կամ պաշտպանական որոշումը դիտավորությամբ չկատարելը), իսկ 27-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի այլ հոդվածներով:

Վերը նշված քրեական գործերով 342 անձ ներգրավվել է որպես մեղադրյալ, ընդ որում՝ 2-ը եղել է 14-18 տարեկան, 116-ը՝ 18-35 տարեկան, 224-ը՝ 35 տարեկանից բարձր:

Ընտանիքում կատարված հանցագործություններից 13-ը եղել են մոր կողմից, 33-ը՝ հոր կողմից, 1-ը՝ խորթ մոր կողմից, 1-ը՝ խորթ հոր կողմից, 20-ը՝ եղբոր/քրոջ կողմից, 5-ը՝ տատի/պապի կողմից, 33-ը՝ զավակի կողմից (այդ թվում՝ որդեգրված), 12-ը՝ ամուսիններից կնոջ կողմից, 200-ը՝ ամուսիններից տղամարդու կողմից, 8-ը՝ թոռան կողմից, 5-ը՝ ամուսնու

ծնողների կողմից, 14-ը՝ հարսի/փեսայի կողմից կատարված: Նշված անձանցից 10-ը նախկինում եղել են դատապարտված:

Վարույթում քննված գործերով եղել է 597 տուժող, որից 53-ը՝ մինչև 12 տարեկան, 15-ը՝ 12-14 տարեկան, 17-ը՝ 14-16 տարեկան, 7-ը՝ 16-18 տարեկան, 218-ը՝ 18-35 տարեկան, 287-ը՝ 35 տարեկանից բարձր:

2020 թվականի ընթացքում ավարտվել է ընտանեկան բռնության վերաբերյալ 507 քրեական գործ: 358 քրեական գործի վարույթ կարճվել է, որից 126-ը՝ արդարացման հիմքով, 232-ը՝ ոչ արդարացման: Մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել 144 քրեական գործ: Բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու համար դատարան է ուղարկվել 5 քրեական գործ: Կասեցվել է 25 քրեական գործով վարույթ, որից 14-ը՝ անձի հետախուզման մեջ գտնվելու հիմքով, 11-ը՝ այլ: 2020 թվականի ընթացքում միացվել է 71 քրեական գործ, ըստ ենթակայության է ուղարկվել 16-ը, անավարտ է մնացել 111-ը:»-[123]

Այսպիսով, վերոգրյալ վարչական տվյալներից կարելի է եզրակացնել, որ քրեական վարույթներից 730-ից՝ 494-ը՝ ֆիզիկական, 134-ը՝ հոգեբանական, 26-ը՝ սեռական, 13-ը՝ Ֆիզիկական կամ հոգեբանական, 10-ը՝ տնտեսական, 18-ը՝ անտեսում և 35-ը՝ հնարավոր չէ դասակարգել: Մեղադրյալների գերակշռող մասն ամուսիններից՝ տղամարդիկ են, իսկ տուժողների գերակշռող մասը՝ 18-ից բարձր տարիքի, անչափահաս տուժողների ընդհանուր թիվը 92 է:

<u>2021 թվական</u>

2021 թվականի ընթացքում ՀՀ քննչական կոմիտեի վարույթում, ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով, քննվել է ընտանեկան բռնության վերաբերյալ 556 քրեական գործ, որից՝ 13-ը քննվել է 104-րդ հոդվածով նախատեսված սպանության, 1-ը՝ 106-րդ հոդվածով նախատեսված մոր կողմից նորածին երեխայի սպանության, 1-ը՝ 109-րդ հոդվածով նախատեսված անզգուշությամբ մահ պատճառելու, 5-ը՝ 110-րդ հոդվածով նախատեսված ինքնասպանության հասցնելու, 2-ը՝ 111-րդ հոդվածով նախատեսված ինքնասպանության հակելու, 12-ը՝ 112-րդ հոդվածով նախատեսված դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու, 7-ը՝ 113-րդ հոդվածով նախատեսված դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու, 30-ը՝ 117-րդ հոդվածով նախատեսված դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելու, 285-ը՝ 118-րդ հոդվածով նախատեսված ծեծի, 23-ը՝ 119-րդ հոդվածով նախատեսված ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելու, 1-ը՝ 121-րդ հոդվածով նախատեսված անզգուշությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու, 4-ը՝ 131-րդ հոդվածով նախատեսված մարդուն առևանգելու, 4-ը՝ 133-րդ հոդվածով նախատեսված ազատությունից ապօրինի զրկելու, 39-ը՝ 137-րդ հոդվածով նախատեսված սպանության կամ առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքի, 2-ը՝ 138-րդհոդվածով նախատեսված բռնաբարության, 3-ը՝ 139-րդհոդվածով նախատեսված սեքսուալ բնույթի բռնի գործողությունների, 7-ը՝ 141-րդհոդվածով նախատեսված 16 տարին չլրացած անձի հետ սեռական հարաբերության, 2-ը՝ 142-րդ հոդվածով նախատեսված անառակաբարո գործողությունների, 29-ը՝ 167.1-րդ հոդվածով նախատեսված ծնողի կամ այլ մերձավոր ազգականի և երեխայի միջև տեսակցության իրականացմանը խոչընդոտելու, 6-ը՝ 168-րդ հոդվածով նախատեսված խնամքը ստանձնելու նպատակով երեխայի առքին կամ ստանձնողի խնամքին հանձնելու նպատակով երեխայի

[123] Հասանելի է հետևյալ հղումով՝ Investigative Committee of Armenia. (2020). *2020թ. ընտանեկան բռնության վերաբերյալ գործողությունների ամփոփ տեղեկագիր*. Retrieved November 26, 2024, from https://shorturl.at/m3DfD: Վերջին անգամ դիտվել է 2024թ. օգոստոսի 1-ին:

վաճառքի, 2-ը՝ 169.1-րդ հոդվածով նախատեսված քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններին սուտ տեղեկություններ հաղորդելու, 1-ը՝ 170-րդ հոդվածով նախատեսված երեխային դաստիարակելու պարտականությունը չկատարելուն կամ ոչ պատշաճ կատարելու, 20-ը՝ 173-րդհոդվածով նախատեսված ծնողի կողմից երեխային պահելուց չարամտորեն խուսափելու, 4-ը՝ 185-րդ հոդվածով նախատեսված գույքը դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնասելու, 40-ը՝ 353.1-րդ հոդվածով նախատեսված անհետաձգելի միջամտության որոշումը կամ պաշտպանական որոշումը դիտավորությամբ չկատարելու, իսկ 13-ն՝ այլ հանցագործությունների դեպքերի առթիվ:

556 քրեական գործից 129-ն ավարտվել է մեղադրական եզրակացությամբ և 135 անձի վերաբերյալ ուղարկվել է դատարան, 3-ն ուղարկվել է դատարան՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու համար, 252 քրեական գործի վարույթ կարճվել է, որից 112-ը՝ արդարացնող, իսկ 140-ը՝ ոչ արդարացնող հիմքով, 31 քրեական գործի վարույթ կասեցվել է, որից 17-ը հանցանք կատարած անձին հետախուզելու, իսկ 14-ը՝ հանցանք կատարած անձը հայտնի չլինելու պատճառաբանությամբ: 8 քրեական գործ ուղարկվել է ըստ ենթակայության, 53-ը՝ միացվել է, 80 քրեական գործ փոխանցվել է 2022 թվական:

Վերը նշված քրեական գործերով 272 անձ ներգրավվել է որպես մեղադրյալ, որից՝ 8-ը եղել են 14-18 տարեկան, 113-ը՝ 18-35 տարեկան, 151-ը՝ 35 տարեկանից բարձր: 8 մեղադրյալ եղել են նախկինում դատապարտված:

Ընտանիքում կատարված հանցագործություններից 19-ը կատարվել են մոր կողմից, որից 12-ը՝ անչափահաս զավակի նկատմամբ, 27-ը՝ հոր կողմից, որից 16-ը՝ անչափահաս զավակի նկատմամբ, 1-ը՝ խորթ մոր կողմից՝ անչափահաս խորթ զավակի նկատմամբ, 2-ը՝ խորթ հոր կողմից, 14-ը՝ եղբոր/քրոջ կողմից, 20-ը՝ զավակի կողմից (այդ թվում՝ որդեգրված), 7-ը՝ ամուսիններից կնոջ կողմից, 169-ը՝ ամուսիններից տղամարդու կողմից, 1-ը՝ թոռան կողմից, 6-ը՝ ամուսնու ծնողների կողմից, 6-ը՝ հարսի/փեսայի կողմից:

Նշված 556 քրեական գործով 485 անձ ճանաչվել է որպես տուժող, որից՝ 54-ը՝ մինչև 12 տարեկան, 12-ը՝ 12-14 տարեկան, 11-ը՝ 14-16 տարեկան, 8-ը՝ 16-18 տարեկան, 181-ը՝ 18-35 տարեկան, 219-ը՝ 35-ից բարձր:»[124]

Այսպիսով, վերոգրյալ վարչական տվյալներից կարելի է եզրակացնել, որ քրեական վարույթներից 556-ից՝ 358-ը՝ ֆիզիկական, 121-ը՝ հոգեբանական, 14-ը՝ սեռական, 23-ը՝ ֆիզիկական կամ հոգեբանական, 21-ը՝ անտեսում, 4-ը՝ տնտեսական, և 15-ը՝ հնարավոր չէ դասակարգել: Անչափահաս մեղադրյալների թիվը 8 է: Ընտանիքում բռնության գերակշռող մասն կատարվում է ամուսիններից՝ տղամարդու կողմից,, իսկ տուժողների գերակշռող մասը՝ 18-ից բարձր տարիքի, անչափահաս տուժողների ընդհանուր թիվը 85 է:

<u>2022 թվական</u>

«2022թ. ընթացքում ՀՀ քննչական կոմիտեի վարույթում քննվել է ընտանեկան բռնության վերաբերյալ 960 քրեական վարույթ: Նշվածներից 122-ն ավարտվել է մեղադրական եզրակացությամբ և 126 անձի վերաբերյալ ուղարկվել է դատարան, 301 քրեական վարույթ կարճվել է, որից 150-ը՝ ռեաբիլիտացնող, իսկ 151-ը՝ ոչ ռեաբիլիտացնող հիմքով: 383 քրեական վարույթ փոխանցվել է 2023թ. հունվար ամիս: Դատարան ուղարկված վարույթներից՝ 9-ը եղել է սպանության, 1-ը՝ առողջությանը ծանր վնաս պատճառելու, 3-ը՝

[124] Հասանելի է հետևյալ հղումով՝Investigative Committee of Armenia. (2021). *2021թ. ընտանեկան բռնության վերաբերյալ գործողությունների ամփոփ տեղեկագիր*. Retrieved November 26, 2024, from https://shorturl.at/1Zey0: Վերջին անգամ դիտվել է 2024թ. օգոստոսի 1-ին:

առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու, 1-ը՝ մարդուն առևանգելու, 1-ը՝ սեքսուալ բնույթի գործողությունների, 2-ը՝ 16 տարին չլրացած անձի նկատմամբ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելու, 5-ը՝ առողջությանը թեթև վնաս պատճառելու, 25-ը՝ ֆիզիկական ներգործության, 3-ը՝ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելու, 1-ը՝ ծնողի կամ այլ մերձավոր ազգականի և երեխայի միջև տեսակցության իրականացմանը խոչընդոտելու, 3-ը՝ ալիմենտ (ապրուստավճար) վճարելուց խուսափելու, 68-ը՝ այլ հանցագործությունների դեպքերի առթիվ:

Դատարան ուղարկված վարույթներով 125 մեղադրյալներից 108-ը հանդիսացել են ամուսիններ, 4-ը՝ տատ կամ պապ, 5-ը՝ քույր կամ եղբայր, 8-ը՝ զավակ կամ թոռ: 125 անձի նկատմամբ ոչ ռեաբիլիտացիոն հիմքերով քրեական հետապնդում չի իրականացվել կամ դադարեցվել է քրեական հետապնդումը:»[125]

Այսպիսով, վերոգրյալ վարչական տվյալներից կարելի է եզրակացնել, որ քրեական վարույթներից 122-ից՝ 44-ը՝ ֆիզիկական, 3-ը՝ սեռական, 3-ը՝տնտեսական, 3-ը՝ ֆիզիկական կամ հոգեբանական, 1՝ հոգեբանական բռնություն, իսկ 68-ը՝ հնարավոր չէ դասակարգել: Մեղադրյալների գերակշռող մասը հանդիսացել են ամուսիններ: Քննչական կոմիտեի կողմից հրապարակած 2022թ. վիճակագրությունը տարանջատված չէ ըստ սեռի, տարիքի, մարզի, և հաշմանդամության կարգավիճակի:

<u>2023 թվական</u>

«2023 թ-ին ՀՀ քննչական կոմիտեի վարույթում ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով քննվել է ընտանեկան բռնության դեպքերով նախաձեռնված 1848 քրեական վարույթ՝ 2022 թ-ին քննված 960 վարույթի դիմաց[126] (ավելացել են 888-ով կամ 92,5%)[127]:

2023 թ-ին քննված 1848 վարույթից 338-ն ավարտվել է մեղադրական եզրակացությամբ և 341 անձի վերաբերյալ ուղարկվել է դատարան: 2022 թ-ին դատարան է ուղարկվել 122 վարույթ՝ 126 անձի վերաբերյալ մեղադրանքով: Դատարան ուղարկված վարույթների կեսից ավելին՝ 51%, վերաբերում է ֆիզիկական ներգործություն կատարելու (ծեծի) դեպքերին:

Մասնավորապես, 343 վարույթներից՝ 4-ը քննվել են սպանության հատկանիշներով[128], 4-ը՝ սպանության փորձի, 1-ը՝ ինքնասպանության հասցնելու, 6-ը՝ առողջությանը ծանր վնաս պատճառելու, 7-ը՝ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու, 30-ը՝ առողջությանը թեթև վնաս պատճառելու, 1-ը՝ մարդու իմունային անբավարարության վիրուսով վարակելու, 3-ը՝ ազատությունից ապօրինի զրկելու, 3-ը՝ սեքսուալ բնույթի գործողությունների, 2-ը՝ ալիմենտ (ապրուստավճար) վճարելուց խուսափելու, 177-ը՝ ֆիզիկական ներգործության, և 105-ը՝ այլ հանցագործությունների դեպքերի առթիվ:

---

[125] Հասանելի է հետևյալ հղումով՝ Investigative Committee of Armenia. (2023, February 15). *2022թ. ընթացքում ՀՀ Քննչական կոմիտեի վարույթում քննվել է ընտանեկան բռնության վերաբերյալ 960 քրեական վարույթ*. Investigative Committee of Armenia. Retrieved November 26, 2024, from https://shorturl.at/vzbsz: Վերջին անգամ դիտվել է 2024թ. օգոստոսի 1-ին:

[126] Հասանելի է հետևյալ հղումով՝ Investigative Committee of Armenia. (2024, March 27). *2023թ. -ին ավելացել են ընտանեկան բռնությունների դեպքերով դատարան ուղարկված վարույթները. ամփոփում*. Investigative Committee of Armenia. Retrieved November 26, 2024, from https://shorturl.at/g749C: Վերջին անգամ դիտվել է 2024թ. օգոստոսի 1-ին:

[127] Ըստ Քննչական կոմիտեի, վարույթների քանակական աճը պայմանավորված է ոչ թե բռնությունների դեպքերի քանակական ավելացմամբ, այլ բացահայտումների աճով: Տես՝ նույն տեղում:

[128] 2022 թ-ին սպանության դեպքերի վերաբերյալ դատարան է ուղարկվել 9 վարույթ: Տես՝ նույն տեղում:

Դատարան ուղարկված վարույթներով մեղադրյալների գերակշռող մասը եղել են ամուսնական կապի մեջ: Մասնավորապես 349 մեղադրյալից՝ 259-ը հանդիսացել են կին/ամուսին (74%), 35-ը՝ ծնող/տատ ու պապ (9,7%), 28-ը՝ քույր/եղբայր (8%), 27-ը՝ զավակ/թոռ (7,7%):

Դատարան ուղարկված վարույթներով 359 տուժողից՝ 13-ը եղել են մինչև 12 տարեկան, 8-ը՝ 12-14 տարեկան, 6-ը՝ 14-18 տարեկան, 332-ը՝ 18-ից բարձր տարիքի:

557 քրեական վարույթ կարճվել է, որից 463-ը՝ ռեաբիլիտացնող, իսկ 90-ը՝ ոչ ռեաբիլիտացնող, 4-ը՝ այլ հիմքով: 144-ով ավարտվել են վարույթային և ապացուցողական գործողությունները: 14 քրեական վարույթ ուղարկվել է ըստ ենթակայության: 8-ն ավարտվել են եզրափակիչ ակտով և ուղարկվել դատարան: 149-ը միացվել է: 608-ի վարույթ փոխանցվել է 2024թ.:»

Այսպիսով, վերոգրյալ վարչական տվյալներից կարելի է եզրակացնել, որ քրեական վարույթներից 343-ից՝ 231-ը՝ ֆիզիկական, 4-ը՝ սեռական, 2-ը՝ տնտեսական, 1-ը՝ հոգեբանական բռնություն, իսկ 105-ը՝ հնարավոր չէ դասակարգել: Քննչական կոմիտեի կողմից հրապարակած 2023թ. վիճակագրությունը տարանջատված չէ ըստ սեռի, մարզի, հաշմանդամության կամ այլ կարգավիճակի: Մեղադրյալների գերակշռող մասն ամուսիններ են, իսկ տուժողների գերակշռող մասը՝ 18-ից բարձր տարիքի, անչափահաս տուժողների ընդհանուր թիվը 27 է:

<u>2024 թվական</u>

«2024 թ-ի առաջին կիսամյակում ՀՀ քննչական կոմիտեում քննվել է ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ 1535 քրեական վարույթ: Հիշյալ քրեական վարույթներից 197-ն ավարտվել է մեղադրական եզրակացությամբ և 199 անձի վերաբերյալ ուղարկվել է դատարան, 4-ն ավարտվել է եզրափակիչ ակտով և ուղարկվել դատարան, 345 քրեական վարույթ կարճվել է, որից 307-ը՝ ռեաբիլիտացնող, իսկ 38-ը՝ ոչ ռեաբիլիտացնող հիմքով, 328-ով ավարտվել են վարույթային և ապացուցողական գործողությունները, 17 քրեական վարույթ ուղարկվել է ըստ ենթակայության, 116-ը միացվել է, 528 քրեական վարույթ փոխանցվել է 2024 թ-ի 2-րդ կիսամյակ:

Մասնավորապես, դատարան ուղարկված (առանց կրկնակիի) 195 վարույթներից 1-ը քննվել է սպանության, 2-ը՝ սպանության փորձի, 6-ը՝ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու, 17-ը՝ առողջությանը թեթև վնաս պատճառելու, 2-ը՝ մարդուն առևանգելու, 1-ը՝ ազատությունից ապօրինի զրկելու, 140-ը՝ ֆիզիկական ներգործության, 5-ը՝ սեռական ազատության դեմ ուղղված, 1-ը՝ ծնողի կամ այլ մերձավոր ազգականի և երեխայի միջև տեսակցության իրականացումը խոչընդոտելու, 1-ը՝ ալիմենտ (ապրուստավճար) վճարելուց խուսափելու, 19-ը՝ այլ հանցագործությունների դեպքերի առթիվ:

Դատարան ուղարկված վարույթներով 199 մեղադրյալներից 160-ը հանդիսացել են կին/ամուսին, 21-ը՝ ծնող/տատ և պապ, 8-ը՝ քույր/եղբայր, 10-ը՝ զավակ/թոռ:

Դատարան ուղարկված վարույթներով 206 տուժողներից 7-ը եղել են մինչև 12 տարեկան, 3-ը՝ 12-14 տարեկան, 7-ը՝ 14-18 տարեկան, 189-ը՝ 18-ից բարձր տարիքի:»[129]

---

[129] Հասանելի է հետևյալ հղումով՝ Investigative Committee of Armenia. (2023). *2023թ. առաջին կիսամյակում ՀՀ Քննչական կոմիտեում գրանցվել է ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ 1,535 քրեական վարույթ*. Investigative Committee of Armenia. Retrieved November 26, 2024, from https://shorturl.at/Pjdma Վերջին անգամ դիտվել է 2024թ. օգոստոսի 1-ին:

Այսպիսով, վերոգրյալ վարչական տվյալներից կարելի է եզրակացնել, որ քրեական վարույթներից 195-ից՝ 169-ը՝ ֆիզիկական, 5-ը՝ սեռական, 1-ը՝ հոգեբանական, 1-ը՝ տնտեսական բռնություն, իսկ 19-ը՝ հնարավոր չէ դասակարգել: Քննչական կոմիտեի կողմից հրապարակած 2024 թվականի առաջին կիսամյակում վիճակագրությունը տարանջատված չէ ըստ սեռի, մարզի, հաշմանդամության կամ այլ կարգավիճակի: Սակայն, պարզ է, որ մեղադրյալների գերակշռող մասն ամուսիններ են, իսկ տուժողների գերակշռող մասը՝ 18-ից բարձր տարիքի են, և անչափահաս տուժողների ընդհանուր թիվը 17 է:

ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության կողմից ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ տրամադրված վիճակագրությունը

2019-2024 թվականների համար

2019թ. ընթացքում ըստ օպերատիվ ամփոփագրերի ոստիկանության մասնագիտացված ստորաբաժանման ծառայողները 796 դեպքով բռնություն գործադրած անձի նկատմամբ կայացրել են նախազգուշացում, իսկ 260 դեպքով՝ անհետաձգելի միջամտության որոշում:

2020թ. ընթացքում ըստ օպերատիվ ամփոփագրերի ոստիկանության մասնագիտացված ստորաբաժանման ծառայողները 831 դեպքով բռնություն գործադրած անձի նկատմամբ կայացրել են նախազգուշացում, իսկ 337 դեպքով՝ անհետաձգելի միջամտության որոշում:

2021թ. ընթացքում ըստ օպերատիվ ամփոփագրերի ոստիկանության մասնագիտացված ստորաբաժանման ծառայողները 528 դեպքով բռնություն գործադրած անձի նկատմամբ կայացրել են նախազգուշացում, իսկ 544 դեպքով՝ անհետաձգելի միջամտության որոշում:

2022թ. ընթացքում ըստ օպերատիվ ամփոփագրերի ոստիկանության մասնագիտացված ստորաբաժանման ծառայողները 556 դեպքով բռնություն գործադրած անձի նկատմամբ կայացրել են նախազգուշացում, իսկ 619 դեպքով՝ անհետաձգելի միջամտության որոշում:

2023թ. ընթացքում ըստ օպերատիվ ամփոփագրերի ոստիկանության մասնագիտացված ստորաբաժանման ծառայողները 551 դեպքով բռնություն գործադրած անձի նկատմամբ կայացրել են նախազգուշացում, իսկ 832 դեպքով՝ անհետաձգելի միջամտության որոշում:

2024թ. 5 ամիսների ընթացքում ըստ օպերատիվ ամփոփագրերի ոստիկանության մասնագիտացված ստորաբաժանման ծառայողները 215 դեպքով բռնություն գործադրած անձի նկատմամբ կայացրել են նախազգուշացում, իսկ 465 դեպքով՝ անհետաձգելի միջամտության որոշում:

Տեղեկություններ 2019 թվականի 12 ամիսների ընթացքում ընտանեկան բռնության դեպքերով քննված հանցագործությունների վերաբերյալ

2019 թվականի 12 ամիսների ընթացքում քննված ընտանեկան բռնության դեպքերով հանցագործությունների ընդհանուր քանակը 526 է[130]: Վերոհիշյալ դեպքերից՝ 40 գործ ուղարկվել է դատարան: Դատարան ուղարկված գործերի գերակշռող մասը՝ 38-ը վերաբերում է ֆիզիկական, 1-ը՝ հոգեբանական բռնությանը և 1-ը ֆիզիկական կամ

[130] Վարչական տվյալները տրամադրվել են ՀՀ ՆԳՆ ոստիկանության ծառայության կողմից 2024թ. հունիսի 25-ին:

հոգեբանական բռնության տեսակներին: Կարճված 103 գործերից՝ 96-ը վերբերում է ֆիզիկական, 5-ը՝ հոգեբանական, և 2-ը՝ Ֆիզիկական կամ հոգեկան բռնություն:

Վերոհիշյալ 526 դեպքերից, 504-ը վերաբերում է ֆիզիկական, ընդ որում՝ 422-ը վերաբերում է ծեծին, 16-ը հոգեբանական, 3-ը՝ տնտեսական և 3-ը կամ ֆիզիկական կամ հոգեբանական բռնության տեսակներին:

Տվյալ ժամանակահատվածում ընտանիքում կատարված հանցագործություններից 329-ը կատարվել է ամուսնու կողմից կնոջ նկատմամբ (դեպքերից 317-ը՝ ֆիզիկական բռնություն է, 9-ը ՝ հոգեբանական և 3-ը կամ ֆիզիկական կամ հոգեբանական), 10-ը՝ կնոջ կողմից ամուսնու նկատմամբ (ֆիզիկական), 41-ը՝ նախկին ամուսնու կամ կնոջ կողմից (դեպքերից 38-ը ֆիզիկական բռնություն է, 2-ը՝ հոգեբանական, և 1-ը՝ տնտեսական), 3-ը՝ կենակցի կողմից (ֆիզիկական): Վերոնշյալ հանցագործություններից 53-ը՝ կատարվել է զավակի կողմից ծնողի նկատմամբ (դեպքերից 51-ը՝ ֆիզիկական բռնություն է, 2-ը՝ հոգեբանական), և 41-ը՝ ծնողի կողմից զավակի նկատմամբ (դեպքերից 40-ը՝ ֆիզիկական բռնություն է, 1-ը՝ հոգեբանական):

Վերոնշյալ հանցագործություններից 57 կատարվել են այլ անձանց կողմից, այլ անձանց կողմից կատարված հանցագործությունների գերակշռող մասը՝ 53-ը՝ ֆիզիկական բռնություն է:

Տեղեկություններ 2020 թվականի 12 ամիսների ընթացքում ընտանեկան բռնության դեպքերով քննված հանցագործությունների վերաբերյալ

2019 թվականի 12 ամիսների ընթացքում քննված ընտանեկան բռնության դեպքերով հանցագործությունների ընդհանուր քանակը 586 է[131]: Վերոհիշյալ դեպքերից՝ 48 գործ ուղարկվել է դատարան: Դատարան ուղարկված գործերի գերակշռող մասը՝ 40-ը վերաբերում է ֆիզիկական, 3-ը՝ հոգեբանական բռնությանը և 5-ը կամ ֆիզիկական կամ հոգեբանական բռնության տեսակներին: Կարճված 130 գործերից՝ 114-ը վերբերում է ֆիզիկական և 16-ը՝ հոգեբանական բռնություն:

Վերոհիշյալ 586 դեպքերից, 548-ը վերաբերում է ֆիզիկական, ընդ որում՝ 471-ը վերաբերում է ծեծին, 33-ը հոգեբանական, և 5-ը կամ ֆիզիկական կամ հոգեբանական բռնության տեսակներին:

Տվյալ ժամանակահատվածում ընտանիքում կատարված հանցագործություններից 366-ը կատարվել է ամուսնու կողմից կնոջ նկատմամբ (դեպքերից 344-ը՝ ֆիզիկական բռնություն է, 18-ը ՝ հոգեբանական և 4-ը կամ ֆիզիկական կամ հոգեբանական), 22-ը՝ կնոջ կողմից ամուսնու նկատմամբ (դեպքերից 20-ը ֆիզիկական և 2-ը ՝ հոգեբանական), 45-ը՝ նախկին ամուսնու կամ կնոջ կողմից (դեպքերից 38-ը ֆիզիկական բռնություն է, 7-ը՝ հոգեբանական), 5-ը՝ կենակցի կողմից (ֆիզիկական):

Վերոնշյալ հանցագործություններից 57-ը կատարվել է զավակի կողմից ծնողի նկատմամբ (դեպքերից 54-ը՝ ֆիզիկական բռնություն է, 2-ը՝ հոգեբանական, և 1-ը կամ ֆիզիկական կամ հոգեբանական), և 43-ը՝ ծնողի կողմից զավակի նկատմամբ (դեպքերից 42-ը ֆիզիկական բռնություն է, 1-ը՝ հոգեբանական):

[131] Վարչական տվյալները տրամադրվել են ՀՀ ՆԳՆ ոստիկանության ծառայության կողմից 2024թ. հունիսի 25-ին:

Վերոնշյալ հանցագործություններից 61 կատարվել են այլ անձանց կողմից, այլ անձանց կողմից կատարված հանցագործությունների գերակշռող մասը՝ 57-ը՝ ֆիզիկական բռնություն է և 4-ը՝ հոգեբանական:

Տեղեկություններ 2021 թվականի 12 ամիսների ընթացքում ընտանեկան բռնության դեպքերով քննված հանցագործությունների վերաբերյալ

2021 թվականի 12 ամիսների ընթացքում քննված ընտանեկան բռնության դեպքերով հանցագործությունների ընդհանուր քանակը 500 է[132]: Վերոհիշյալ դեպքերից՝ 32 գործ ուղարկվել է դատարան: Դատարան ուղարկված գործերի գերակշռող մասը՝ 23-ը վերաբերում է ֆիզիկական, 9-ը՝ հոգեբանական բռնությանը: Կարճված 94 գործերից՝ 87-ը վերբերում է ֆիզիկական և 7-ը՝ հոգեբանական բռնություն:

Վերոհիշյալ 500 դեպքերից, 467-ը վերաբերում է ֆիզիկական, ընդ որում՝ դրանից 393-ը վերաբերում է ծեծին, 32-ը հոգեբանական և 1-ը տնտեսական է:

Տվյալ ժամանակահատվածում ընտանիքում կատարված հանցագործություններից 328-ը կատարվել է ամուսնու կողմից կնոջ նկատմամբ (դեպքերից 305-ը՝ ֆիզիկական բռնություն է, 23-ը ՝ հոգեբանական), 10-ը՝ կնոջ կողմից ամուսնու նկատմամբ (ֆիզիկական), 1-ը՝ կենակցի կողմից (ֆիզիկական):

Վերոնշյալ հանցագործություններից 59-ը կատարվել է զավակի կողմից ծնողի նկատմամբ (դեպքերից 54-ը՝ ֆիզիկական բռնություն է, 4-ը՝ հոգեբանական, և 1-ը՝ տնտեսական), և 50-ը՝ ծնողի կողմից զավակի նկատմամբ (դեպքերից 49-ը ֆիզիկական բռնություն է, 1-ը՝ հոգեբանական):

Վերոնշյալ հանցագործություններից 63 կատարվել են այլ անձանց կողմից, այլ անձանց կողմից կատարված հանցագործությունների գերակշռող մասը՝ 59-ը՝ ֆիզիկական բռնություն է և 4-ը՝ հոգեբանական:

Տեղեկություններ 2022 թվականի 6 ամիսների ընթացքում ընտանեկան բռնության դեպքերով քննված հանցագործությունների վերաբերյալ

2022 թվականի 6 ամիսների ընթացքում քննված ընտանեկան բռնության դեպքերով հանցագործությունների ընդհանուր քանակը 260 է[133]: Վերոհիշյալ դեպքերից՝ 14 գործ ուղարկվել է դատարան: Դատարան ուղարկված գործերի գերակշռող մասը՝ 10-ը վերաբերում է ֆիզիկական, 3-ը՝ հոգեբանական բռնությանը, 1՝-ը կամ ֆիզիկական կամ հոգեբանական: Կարճված 61 գործերից՝ 40-ը վերբերում է ֆիզիկական և 18-ը՝ հոգեբանական, 3-ը տնտեսական բռնություն:

Վերոհիշյալ 260 դեպքերից, 201-ը վերաբերում է ֆիզիկական, ընդ որում՝ դրանից 178-ը վերաբերում է ծեծին, 55-ը հոգեբանական, 1՝-ը կամ ֆիզիկական կամ հոգեբանական և 3-ը տնտեսական է:

---

[132] Վիճակագրությունը տրամադրվել են ՀՀ ՆԳՆ ոստիկանության ծառայության կողմից 2024թ. հունիսի 25-ին:

[133] Վիճակագրությունը տրամադրվել են ՀՀ ՆԳՆ ոստիկանության ծառայության կողմից 2024թ. հունիսի 25-ին:

Տվյալ ժամանակահատվածում ընտանիքում կատարված հանցագործություններից 170-ը կատարվել է ամուսնու կողմից կնոջ նկատմամբ (դեպքերից 136-ը՝ ֆիզիկական բռնություն է, 32-ը՝ հոգեբանական, 2-ը՝ տնտեսական), 3-ը՝ կնոջ կողմից ամուսնու նկատմամբ (2-ը՝ ֆիզիկական, 1-ը՝ հոգեբանական), 24-ը՝ նախկին ամուսնու կամ կնոջ կողմից (2-ը՝ ֆիզիկական, 10-ը՝ հոգեբանական, 1-ը՝ տնտեսական), 1-ը՝ կենակցի կողմից (կամ ֆիզիկական կամ հոգեբանական):

Վերոնշյալ հանցագործություններից 23-ը կատարվել է զավակի կողմից ծնողի նկատմամբ (դեպքերից 20-ը՝ ֆիզիկական բռնություն է, 3-ը՝ հոգեբանական), և 9-ը՝ ծնողի կողմից զավակի նկատմամբ (դեպքերից 7-ը ֆիզիկական բռնություն է, 2-ը՝ հոգեբանական):

Վերոնշյալ հանցագործություններից 32 կատարվել են այլ անձանց կողմից, այլ անձանց կողմից կատարված հանցագործությունների գերակշռող մասը՝ 24-ը՝ ֆիզիկական բռնություն է և 8-ը՝ հոգեբանական:

Տեղեկություններ 2023 թվականի 12 ամիսների ընթացքում գրանցված ընտանեկան բռնության դեպքերով հանցագործությունների վերաբերյալ

2023 թվականի 12 ամիսների ընթացքում գրանցված ընտանեկան բռնության դեպքերով հանցագործությունների ընդհանուր քանակը 508 է[134], որից Երևանում՝ 134, Արարտում՝ 87, Արմավիրում՝ 49, Շիրակում՝ 47, Կոտայքում՝ 44, Գեղարքունիքում՝ 40, Լոռվա մարզում՝ 36, Տավուշում՝ 28, Արագածոտնում՝ 19, Սյունիքում՝ 18:

Վերոհիշյալ 508 դեպքերից, 445-ը վերաբերում է ֆիզիկական, 56-ը հոգեբանական, 5-ը սեռական, 1-ը՝ տնտեսական և 1-ը կամ ֆիզիկական կամ հոգեբանական բռնության տեսակներին:

Վերոհիշյալ դեպքերից՝ 258 գործ ուղարկվել է դատարան: Դատարան ուղարկված գործերի գերակշռող մասը՝ 240-ը վերաբերում է ֆիզիկական, 14-ը հոգեբանական, 2-ը՝ սեռական, 1-ը՝ տնտեսական բռնությանը և 1-ը կամ ֆիզիկական կամ հոգեբանական բռնության տեսակներին: Կարճված 55 գործերից՝ 51-ը վերբերում է ֆիզիկական և 4-ը հոգեբանական բռնությանը:

Տվյալ ժամանակահատվածում ընտանիքում կատարված հանցագործություններից 267-ը կատարվել է ամուսնու կողմից կնոջ նկատմամբ (դեպքերից 246-ը՝ ֆիզիկական բռնություն է, 18-ը ՝ հոգեբանական, և 3-ը ՝ սեռական, դեպքերի գերակշռող մասը գրանցվել է Երևանում՝ 48), 3-ը՝ կնոջ կողմից ամուսնու նկատմամբ (3-ը՝ ֆիզիկական բռնություն), 45-ը՝ նախկին ամուսնու կամ կնոջ կողմից (դեպքերից 31-ը ֆիզիկական բռնություն է, 13-ը՝ հոգեբանական, և 1-ը կամ ֆիզիկական կամ հոգեբանական, դեպքերի գերակշռող մասը գրանցվել է Երևանում՝ 22), 2՝ կենակցի կողմից (դեպքերից 2 ֆիզիկական բռնություն է): Վերոնշյալ հանցագործություններից 44 կատարվել է զավակի կողմից ծնողի նկատմամբ (դեպքերից 35 ֆիզիկական բռնություն է, 8՝ հոգեբանական, 1-ը՝ տնտեսական, դեպքերի գերակշռող մասը գրանցվել է Արարատում՝ 10), և 45՝ ծնողի կողմից զավակի նկատմամբ (դեպքերից 41 ֆիզիկական բռնություն է, 2՝ հոգեբանական, 2-ը՝ սեռական, դեպքերի գերակշռող մասը գրանցվել է Երևանում՝ 15):

[134] Վիճակագրությունը տրամադրվել են ՀՀ ՆԳՆ ոստիկանության ծառայության կողմից 2024թ. հունիսի 25-ին:

Վերոնշյալ հանցագործություններից 106 կատարվել են այլ անձանց կողմից, այլ անձանց կողմից կատարված հանցագործությունների գերակշռող մասը կատարվել է Երևանում՝ 41:

Տեղեկություններ 2024 թվականի 5 (հունվար-մայիս) ամիսների ընթացքում գրանցված ընտանեկան բռնության դեպքերով հանցագործությունների վերաբերյալ

2024 թվականի 5 (հունվար-մայիս) ամիսների ընթացքում գրանցված ընտանեկան բռնության դեպքերով հանցագործությունների ընդհանուր քանակը 527 է[135], որից Երևանում՝ 135, Շիրակում՝ 70, Լոռվա մարզում՝ 68, Արարատում՝ 57, Արմավիրում՝ 41, Կոտայքում՝ 40, Տավուշում՝ 38, Սյունիքում՝ 37, Գեղարքունիքում՝ 22, Արագածոտնում՝ 19:

Վերոհիշյալ 527 դեպքերից, 429-ը վերաբերում է ֆիզիկական, 86-ը հոգեբանական, և 12-ը սեռական բռնության տեսակներին:

Վերոհիշյալ դեպքերից՝ 44 գործ ուղարկվել է դատարան: Դատարան ուղարկված գործերի գերակշռող մասը՝ 34-ը վերաբերում է ֆիզիկական, 7-ը հոգեբանական, և 3-ը սեռական բռնությանը: Կարճված 8 գործերից՝ 7-ը վերաբերում է ֆիզիկական և 1-ը հոգեբանական բռնությանը:

Տվյալ ժամանակահատվածում ընտանիքում կատարված հանցագործություններից 224-ը կատարվել է ամուսնու կողմից կնոջ նկատմամբ (դեպքերից 191-ը ֆիզիկական բռնություն է, 26-ը ՝ հոգեբանական, և 7-ը ՝ սեռական, դեպքերի գերակշռող մասը գրանցվել է Երևանում՝ 55), 11-ը ՝ կնոջ կողմից ամուսնու նկատմամբ (դեպքերից 10-ը ֆիզիկական բռնություն է, 1-ը ՝ հոգեբանական, դեպքերի գերակշռող մասը գրանցվել է Երևանում՝ 4-ը), 39-ը ՝ նախկին ամուսնու կամ կնոջ կողմից (դեպքերից 24-ը ֆիզիկական բռնություն է, 15-ը ՝ հոգեբանական, դեպքերի գերակշռող մասը գրանցվել է Երևանում՝ 11-ը), 9-ը ՝ կենակցի կողմից (դեպքերից 7-ը ֆիզիկական բռնություն է, 1-ը ՝ հոգեբանական, և 1-ը ՝ սեռական, դեպքերի գերակշռող մասը գրանցվել է Կոտայքի մարզում՝ 3-ը):

Վերոնշյալ հանցագործություններից 61-ը կատարվել է զավակի կողմից ծնողի նկատմամբ (դեպքերից 55-ը ֆիզիկական բռնություն է, 6-ը՝ հոգեբանական, դեպքերի գերակշռող մասը գրանցվել է Երևանում՝ 16-ը), և 40-ը՝ ծնողի կողմից զավակի նկատմամբ (դեպքերից 38-ը ֆիզիկական բռնություն է, 2-ը՝ հոգեբանական, դեպքերի գերակշռող մասը գրանցվել է Երևանում՝ 11-ը):

Վերոնշյալ հանցագործություններից 155-ը կատարվել են այլ անձանց կողմից, այլ անձանց կողմից կատարված հանցագործությունների գերակշռող մասը կատարվել է Երևանում՝ 40-ը: Վերոնշյալ 155 հանցագործություններից ՝ 113-ը՝ ֆիզիկական, 36-ը՝ հոգեբանական, և 6-ը՝ սեռական բռնություն է:

[135] Վիճակագրությունը տրամադրվել են ՀՀ ՆԳՆ ոստիկանության կողմից 2024թ. հունիսի 25-ին: